

ISSN 1829-4375

Արցախի պետական համալսարան

Арцахский государственный университет

Artsakh State University

**Արցախի պետական համալսարանի
ԳԻՏԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ**

УЧЕНЫЕ ЗАПИСКИ
Арцахского государственного университета

Artsakh State University
PROCEEDINGS



ՊՐԱԿ 2 TOM 2 VOLUME 2

2020

Ստեփանակերտ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

СОЦИАЛЬНЫЕ НАУКИ

SOCIAL SCIENCES

Հրատարակվում է 1998թ-ից.
Պարբերականությունը՝ տարեկան երկու անգամ
Издается с 1998г. Периодичность – дважды в год
Issued since 1998. Frequency – twice a year

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
Публикуется по решению ученого совета Арцахского государственного университета.
Published by the Decree of the Academic Council of the Artsakh State University.

Խմբագրական խորհրդի նախագահ՝ ր.գ.թ. Մարգարյան Ա.Յու.

Председатель редакционного совета: к.ф.н. Саргсян А.Ю.

Chairman of the Editorial Board: Ph. D. in Philology Sargsyan A.Yu.

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ. Ավանեսյան Վ.Մ.

Главный редактор: д.и.н. Аванесян В.М.

Editor-in-chief: Doctor of History Avanesyan V.M.

Խմբագրական կոլեգիա

Редакционная коллегия

Editorial board

Հասարակական գիտություններ

1. Սուվարյան Յու.Մ., տ.գ.դ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս –Суварян Ю. М., д.э.н., академик НАН РА - Suvaryan Yu.M., Doctor of Economics, Academician of NAS RA
2. Ղազինյան Գ.Ս., ի.գ.դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս –Газинян Г.С., д.ю.н., академик НАН РА - Ghazinyan G.S. . Doctor of Law, Academician of NAS RA
3. Մանասերյան Թ.Ն., տ.գ.դ., պրոֆեսոր –Манасерян Т.Н., д.э.н., профессор – Manaseryan T.N., Doctor of Economics, Professor
4. Ասրյան Շ.Շ., տ.գ.թ. - Асрян Ш.Ш., к.э.н. –Asryan Sh.Sh., Ph.D. in Economics
5. Բալայան Վ.Ռ., պ.գ.դ. - Балаян В. Р., д.и.н. – Balayan V.R., Doctor of History
6. Ղազարյան Հ.Ս., ր.գ.թ. – Газарян А.С., к.ф.н. –Ghazaryan H.S., Ph.D. of Philology
7. Ենգոյան Ա.Փ., ր.գ.դ.- Енгоян А.П., д.п.н. – Engoyan A.P., Doctor of Political science
8. Հարությունյան Վ.Ն., ր.գ.դ., Арутюнян В.Н ., д.ф.н. – Harutyunyan V.N., Doctor of Philology
9. Խանյան Ս.Ա., ր.գ.դ.- Ханян С.А. д.ф.н. – Khanyan S.A., Doctor of Philology
10. Կարապետյան Ի.Կ., մ.գ.դ.- Карапетян И.К., д.п.н. - Karapetyan I.K., Doctor of Pedagogics
11. Կարապետյան Վ.Ս., հ.գ.դ., պրոֆեսոր –Карапетян В.С., д.п.н., профессор - Karapetyan V.S., Doctor of Psychology , Professor
12. Հովհաննիսյան Լ.Շ., ր.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ – Ованнисян Л.Ш., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Hovhannisyan L.Sh., Doctor of Philology, Corresponding Member of the Armenian National Academy of Sciences.
13. Մանասյան Ա.Ս., փ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ – Манасян А. С., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Manasyan A.S., Doctor of Philosophy, Corresponding Member of the Armenian Natioanl Academy of Sciences

14. Մարգարյան Գ.Գ. Կ.գ.թ., /գիտ.քարտուղար/–Margaryan G.G., Ph. D. in Biology, Scientific Secretary
15. Մխիթարյան Ա.Մ., հ.գ.թ. - Мхитарян А.М., к.п.н. – Mkhitaryan A.M., Ph. D. in Psychology
16. Մուսայելյան Ն.Գ., ք.գ.դ.– Мусаелян О. Г., д.ф.н.– Musaelyan H.G., Doctor of Philology
17. Յարամիշյան Վ.Բ., հ.գ.թ. - Ярамишян В.Б. –к.п.н. - Yaramishyan V.B., Ph. D. in Psychology
18. Մուրադյան Դ.Է., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Мурадян Д.Э. – заслуженный деятель искусств Армении – Muradyan D.E., Honored Artist of Armenia
19. Հակոբյան Ե.Ս., մ.գ.դ. - Акопян Е.С., д.п.н. – Hakobyan E.S., Doctor of Pedagogics
20. Թադևոսյան Ա.Վ., մ.գ.թ. – Тадевосян А.В., к.п.н. – Tadevosyan A.V., Ph.D. in Pedagogics

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՈՑ ԼԵՉՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱԽՅԱԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՐ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻ ԶԱՆԻ
ՀԱՐՑԵՐ

6

Գ. ԹՈՐՈՍՅԱՆ

ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌԻՆ ՀԱՏՈՒԿ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆ

16

Ս. ԽԱՆՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԻ ՊՈԵԶԻԱ՝ ԱՊԱԳԱՅԻ ԹԵՎԵՐՈՎ

23

Ն. ԴԱՎԹՅԱՆ

Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ «ԿՐԱԿԵ ՇԱՊԻԿ» ՎԵՊԻ ՀԵՐՈՍՆԵՐԻՑ ՊՈՂՈՍ
ԹՈՒՃՅԱՆԻ ՆԱԽԱՏԻՊԸ

37

ՌՈՒՍԱՅ ԼԵՉՈՒ

Ս. ՄԿՐՏԻԶՅԱՆ

ՏԵԶՍԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՇԱՐԺՈՒՄ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՅԵՐԻ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

46

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՂԱԶԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վ. ԲԱԼԱՅԱՆ

ՀՅ ԴԱՇՆԱԿՅՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԿԵՐՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

(1890-2020թթ.)

55

Հ. ՓԱՇԱՅԱՆ

ՄԵԾ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

(ԾԱԳՈՒՄԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ)

71

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԱՐՏԱԿՈՒԼԻՍԱՅԻՆ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՊԱՅԶԱՐ ՍՈՒԵԶԻ ԶՐԱՆՅԶԻ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁԸ

82

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՎԵԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՅ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

95

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՌԱՋԱՅՈՂ ԲԱՅԱՍՄԱԿԱՆ

108

Հոգեվիճակների ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՅ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ
ՇՈՒՐՋ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ն. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԱՀՈՒՄ

(2008-2019թթ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ)

115

Ա.ԱԼԵԽՍԱՆՅԱՆ, Ն.ՎԻՐԱԲՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

122

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐԶԱԿԱՆ ՀԱԾՎԱՌՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

130

Նունե ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱրԴՀ սկ. Արրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.

ԿԱԽՅԱԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Սույն հոդվածում քննվում են բազմիմաստ շաղկապով կապակցված կախյալ նախադասությունների շարահյուսական գործառույթի ուսուցման մի քանի հարցեր: Իմաստային տարբերակումը կատարվում է այն բանի հիման վրա, թե շաղկապները ինչ բառերի հետ են կապակցվում: Կարևորվում են ստորոգյալի կառուցվածքի և լրացյալի բառաքերականական բնույթը գոյականական անդամի լրացում կախյալ նախադասությունների դեպքում, ինչպես նաև բայի սեռը և բայիմաստը՝ բայական անդամի լրացում երկրորդական նախադասություններում: Ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի նախադասությունների լրացական հարաբերությունների որոշման, նախադասության կառուցվածքային առանձնահատկությունները դիտարկելու համար:

Բանալի բառեր՝ Գործառույթ, բազմիմաստ, շաղկապ, հարցադրում, հարաբերյալ, գլխավոր, իմաստային հարաբերություն, կախյալ նախադասություն, խոսքիմասային պատկանելություն, գոյականի լրացում, բայի լրացում:

Н.ХАЧАТРЯН

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ОБ ОБУЧЕНИИ СИНТАКСИЧЕСКОЙ ФУНКЦИИ ЗАВИСИМЫХ ПРЕДЛОЖЕНИЙ

В статье мы рассмотрим некоторые вопросы наиболее часто используемых функций изучения взаимосвязанных предложений с помощью многозначного союза. Семантическая дифференциация основана на том, с какими словами связаны союзы. Важное

значение уделено структуре сказуемого и грамматической сущности и дополнение существительного в случае зависимых предложений, а также род и значение добавления члена глагола во вторичных предложениях.

Исследование важно для определения дополнительных отношений предложений и наблюдения за структурными особенностями предложения.

Ключевые слова: функция, многозначность, союз, опрос, относительное, главное, семантическая связь, зависимое предложение, идиома, дополнение существительного, дополнение глагола.

N.KHACHATRYAN

SOME QUESTIONS ABOUT LEARNING THE SYNTACTIC FUNCTION OF DEPENDENT SENTENCES

In this article, we consider some of the most commonly used functions for learning related sentences using the polysemantic conjunction.

Semantic differentiation is based on which words the conjunctions are associated with. Great importance is attached to the structure of the predicate and grammatical essence and the addition of the noun in the case of dependent sentences, as well as the gender and meaning of the addition of a verb member in secondary sentences.

Research is important for identifying complementary sentence relationships and for observing the structural features of a sentence.

Key words: function, polysemy, union, poll, relative, main, semantic connection, dependent sentence, idiom, addition of a noun, addition of a verb.

Կարևորվում է բարդ նախադասությունների ստորադաս բաղադրիչների շարահյուսական գործառնության դասավանդումը և դպրոցում, և բուհում: Այն պահանջում է ուսուցման և կիրարկման որոշակի տրամաբանություն, դասավանդման մեթոդիկա: Դասավանդման ընթացքը մեծապես կախված է նախադասության շարահյուսական վերլուծությունից, նախադասության անդամների լավ իմացությունից: Թեմաների ամրակայումը պետք է կատարվի համապատասխան գործնական վարժություններով: Լեզվական երևույթների տեսականն ու գործնականը համադրելով՝ նպաստում ենք լեզվական գիտելիքների հարստացմանը:

Մեր խնդիրն է բացահայտել, թե ինչ հիմունքներով են որոշվում ստորադաս նախադասությունների բնույթը բազմիմաստ շաղկապների կապակցության դեպքում:

Քերականական տեսական հարցերը բացատրվում են գործնական եղանակով, որի նշանակությունը կարևոր է այն տեսակետից, որ տարբեր

հնարների գործադրմամբ ոչ միայն որոշվում է ստորադաս նախադասությունների շարահյուսական գործառույթը, այլև նպաստում է դրանք յուրացնելու, կիրառելու հմտության ձեռքբերմանը:

Հայերենում ունենք մենիմաստ և բազմիմաստ շաղկապներ: Եթե մենիմաստ շաղկապների միջոցով ստորադաս նախադասության տեսակը կարելի է հեշտ որոշել, ապա բազմիմաստ շաղկապների միջոցով հնարավոր չէ: Մենիմաստ շաղկապները կանխորոշում են կախյալ նախադասության լրացական բնույթը: Նրանք, ունենալով որոշակի բառական նշանակություն, նշում են կապակցվող նախադասությունների միջև դրսևորվող իմաստային հարաբերությունը և երկրորդականի բնույթը: Որպես կանոն՝ նրանք կապակցում են մեկ բնույթի երկրորդական նախադասություն հիմնականում պարագայական են, ինչպես *որովհետև/պատճառի/, քանի որ/հիմունքի/, չնայած որ, թեպետ, թեև/գիջման/*: Որպեսզի-ն մենիմաստ է, արտահայտում է միայն նպատակային հարաբերություն, իսկ ասենք՝ *որ*-ը բազմիմաստ է, արտահայտում է բազմազան հարաբերություններ, այդ թվում՝ նպատակային:

Բազմիմաստ շաղկապները իրենց բառական անորոշ նշանակության պատճառով ի վիճակի չեն կանխորոշելու երկրորդականի բնույթը, որը այս դեպքում կախված է գլխավորի քերականական կառուցվածքից, կապակցվող նախադասությունների բովանդակությունից: Բազմիմաստ շաղկապները կարող են կապակցել շարահյուսական այլևայլ գործառույթներով բնորոշվող կախյալ նախադասություններ: Հատկապես աչքի է ընկնում *որ* շաղկապը, որը կապակցում է տարբեր բնույթի երկրորդականներ՝ իմաստային տարբեր հարաբերություններով: Մեր խնդիրն է որոշել այն ուղիները, որոնցով կարելի է որոշել *որ* -ով կապակցված ստորադաս նախադասությունների շարահյուսական գործառույթը: Կվերլուծենք միայն հարցի հետ կապված առավել բնորոշ նախադասությունները:

Սովորողներին բացատրվում է, որ ստորադաս նախադասության բնույթը որոշել՝ նշանակում է պարզել, թե ստորադաս նախադասությունը գերադասի որ անդամին է փոխարինում. բարդ նախադասության գլխավոր բաղադրիչի որ անդամն է արտահայտված ստորադաս նախադասությամբ:

Իմաստային տարբերակումը կատարվում է այն բանի հիման վրա, թե շաղկապները կապակցման ինչ բառերի, բառախմբերի ինչ կարգերի հետ են կապակցվում, դիմավոր բայերի եղանակային և ժամանակային ինչ ձևերի հետ են գուգորդվում: Իմաստային տիպերի բացահայտման համար դեր են խաղում կապակցվող նախադասությունների շարադասությունը, երբեմն էլ համատեքստը: Կարևորվում են ստորոգյալի կառուցվածքի և լրացյալի բառաքերականական բնույթը գոյականական անդամի լրացում կախյալ նախադասությունների դեպքում, *ինչպես նաև* բայի սեռը և բայիմաստը՝ բայական անդամի լրացում երկրորդական նախադասություններում:

Որ շաղկապով կապակցվող ստորադաս նախադասությունը լրացնում է գերադաս նախադասության` 1) որևէ բայի կամ բայական կապակցության, 2) որևէ գոյականի կամ գոյականական կիրառություն ունեցող որևէ անդամի, ինչպես նաև անվանական որոշակի արտահայտությունների, կառույցների, բաղադրյալ կապակցությունների, 3) գլխավոր նախադասության հարաբերյալների :

Պարզաբանում ենք,որ առաջին և երկրորդ ենթատեսակների դեպքում երկրորդականը կապվում է գլխավորի որևէ բառի հետ և կատարում նրա խոսքիմասային արժեքով պայմանավորված որևէ շարահյուսական պաշտոն, որն անհրաժեշտ է տվյալ բառի, բառակապակցության իմաստի բացահայտման համար: Նման դեպքերում գլխավորը թերիմաստ է մնում: Այն կառուցվածքով կախված է երկրորդականից, քանի որ քերականորեն նրա անդամներից մեկը արտահայտված է լինում այդ երկրորդականով:

Ստորադաս նախադասության բնույթի որոշման առաջին միջոցը գերադաս նախադասության լրացյալ անդամի խոսքիմասային պատկանելության ճիշտ որոշումն է: Պարզում ենք, թե երկրորդական նախադասությունը գլխավոր նախադասության որ անդամին է լրացնում` գոյականի, թե բայի:

Գերադաս նախադասության գոյականին, գոյականական կիրառություն ունեցող որևէ անդամի լրացնող ստորադաս նախադասությունների բնույթը որոշում ենք հարցադրման միջոցով: Վերլուծության ու հարցադրման միջոցով գտնում ենք, որ ստորադաս նախադասություններն ունեն տարբեր շարահյուսական գործառնություններ:

Եթե երկրորդական նախադասությունը պատասխանում է ինչպիսի, որ հարցերին` որոշիչ է, իսկ եթե պատասխանում է ում,ինչի հարցերին, հատկացուցիչ է:Ինչպես.

1. Նա գրել է ղիմում, որ իրեն աշխատանքից ազատել են:
2. Անհրաժեշտություն չկա, որ նա այցելի մեզ:
3. Դու,որ այդ ժամանակ նորավարտ մասնագետ էիր,վստահ էիր քո ուժերին:

Բնութագրում ենք այդ նախադասություններն առանձին-առանձին: Ընդգծում ենք ,թե դրանք գլխավոր նախադասության որ անդամին են վերաբերում :

Ընդգծված առաջին նախադասությունը վերաբերում է ղիմում բառին` որպես դրա որոշիչ, պատասխանում է ինչպիսի հարցին. երկրորդը` անհրաժեշտություն բառին` որպես հատկացուցիչ, պատասխանում է ինչի հարցին,երրորդը` դու բառին` որպես բացահայտիչ:

Որ-ով կապակցված ստորադաս նախադասությունները կարող են լրացնել որոշակի արտահայտությունների, անվանական կառույցների:Այսպես. Խաղաղություն, որ աչիկներն իր քանա դաշտում մի տուղտ, մի քալիկ /ն.պ./: Շնորհակալություն, որ մեզ միշտ հիշում եք/հ.պ/:

Հաճախ կախյալ նախադասությունը կարող է լրացնել անվանական ստորոգյալի, որի հանգույցը գործածվում է բացառապես եզակի երրորդ դեմքով: Որպես վերադիր հանդես են գալիս հիմնականում ածականը, գոյականը, դերանունը, մակբայը: Պայմանավորված վերադիրների բայիմաստով, առաջադրվող հարցերով՝ այդպիսի նախադասությունները լինում են ենթակա, խնդիր, պարագա:

Այսպես. Լավ է/ի՞նչը/, *որ եկար/ենթ.:/*: Դեկտեմբերին էր/ի՞նչը/, *որ տեղի ունեցավ երկրաշարժը/ենթ.:/*: Երեկ էր/ի՞նչը/, *որ անհոգ ու երջանիկ խաղում էր բակում/ենթ.:/*: Ինչի՞ց է/ի՞նչը/, *որ դու միշտ ուշանում ես/ենթ.:/*: Ես արժանի՞ չեի/ինչի՞/, *որ դու ներկա լինեիր իմ հարսանիքին /հ. իս.:/*: Ռազմիկը միանգամայն հպարտ է/ինչո՞վ/, *որ ինքն այժմ հայոց կանոնավոր բանակի զինվոր է/մ.իս.:/*: Ես շատ գոհ էի/ինչո՞ւ/, *որ կարող էի անցյալի միջով բացատրել ներկան /պ. պ.:/*: Ես խելոք չեի, որ ինձ չընտրեցիք/հետևանքի պ.:/

Կառուցվածքային այլ տիպ են ներկայացնում որ շաղկապով կապակցված նախադասությունները, երբ լրացնում են գերադաս նախադասության բային: Եթե գերադաս նախադասությունը լրացնում է գլխավոր նախադասության բայով արտահայտված լրացյալին, ապա ստորադաս բաղադրիչը իր բնույթով ենթակա, խնդիր կամ պարագա է: Այստեղ կարևոր է բացատրել, որ ուշադրություն պետք է դարձնել բայի սեռին և բայիմաստին: Որ շաղկապով կապակցվող մասը կարող է լրացնել գերադաս նախադասության հիմնականում հոգեկան գործունեություն նշող որևէ բայի, որը կարող է լինել՝ ա) ներգործական և բ) ոչ ներգործական: Գլխավորի մեջ բացակայում է այն անդամը, որի գործառնությունը հանդես է գալիս կախյալ նախադասությունը: Օրինակ՝ Լսել եմ/ի՞նչ/, *որ ուզում եք նոր գործ սկսել/ու.իս.:/*:

Գլխավորի քերականական կառուցվածքը, ներգործական բայը արդեն իսկ հուշում է, թե ինչ բնույթի պետք է լինի երկրորդականով արտահայտված լրացումը:

Եթե գլխավոր նախադասության մեջ որպես խնդրառու բառ գործածվում են ասացական (հայտնել, պատասխանել), հասկացական-իմացական (իմանալ, ըմբռնել), զգացական (սիրել, հարգել), կամային (կամենալ, որոշել, ուզենալ) իմաստ արտահայտող ներգործական սեռի բայեր, ապա կախյալ նախադասությունը բնույթով լինում է ուղիղ խնդիր: /Ես/ Կարգադրեցի/ի՞նչ/, *որ այդ էլ կկատարվի/ու.իս.:/*: /Ես/ Ասացի/ի՞նչ/, *որ գալու է (ու. իս.)*: Ինչպես նշեցինք, ստորադաս նախադասությունների բնույթը որոշվում է հարցադրման միջոցով:

Երբ գերադաս մասում գործածվում է ներգործական սեռի կամայական նշանակություն ունեցող բայ, և երկրորդական նախադասության ստորոգյալը առնչվում է գերադասի ստորոգյալի բայիմաստի հետ, ունենում ենք նպատակի պարագա կախյալ նախադասություն: Օր. «Կանչում եմ, *որ նորոգես այս տունը*»: Նպատակային հարաբերության ձևավորմանը նպաստում է հատկապես

երկրորդական նախադասության ստորոգյալի եղանակաժամանակային արտահայտությունը. այն ձևավորվում է ըղձական եղանակի ապառնի ժամանակով: Ժամանակային տեսակետից նրա գործողությունը հաջորդում է գլխավոր նախադասության գործողությանը:

Որ շաղկապով կախյալ նախադասությունը կարող է լրացնել գլխավոր նախադասության որոշ կարգի չեզոք սեռի բայերի: Եթե կախյալ նախադասությունը կապվում է չեզոք սեռի միադիմի երրորդ դեմքի բայերի հետ (թվալ, երևալ, պատահել, մնալ), ունենում ենք ենթակա երկրորդական նախադասություն: Այս կարգի բարդ նախադասությունների գերադաս բաղադրիչները հիմնականում կազմված են լինում բայ-ստորոգյալից (երբեմն մեկ-երկու լրացումից): Այսպես. Երևում է/ի՞նչ/, *որ ուշանալու է/ենթա/*:

Որ շաղկապով կախյալ եզրը կարող է լրացնել գլխավորի՝ հոգեկան գործունեություն արտահայտող չեզոք սեռի բայերի (կասկածել, սպասել, ունկնդրել, հավատալ) և բնույթով լինել հանգման խնդիր: Օր. Գրեթե չէի հավատում/ինչի՞ն/, *որ երբեմնի վտիտ ու փխրուն այդ աղջնակը շնորհալի դերասանուհի է դարձել*:

Հոգեկան այլևայլ վիճակներ արտահայտող մի շարք չեզոք սեռի բայերի (վախենալ, զգուշանալ) բառիմաստներով պայմանավորված՝ կախյալ նախադասությունը լինում է պատճառի պարագա: Օր. Զգուշանում էի/ինչի՞ց/, *որ հանկարծ որևէ մեկին չնեղացնեմ*: Այսպիսի բայերի լրացնող նախադասությունները ուսումնական մի շարք ձեռնարկներում համարվում են նաև անջատման խնդիր¹:

Որ ընդհանրական շաղկապը նպատակային հարաբերություն է արտահայտում ֆիզիկական հատկանիշ նշող մի շարք չեզոք սեռի բայերի հետ կապվելիս: Օր. Մենք պայքարում ենք/ինչո՞ւ/, *որ աշխարհում լինի խաղաղություն*: Կամ՝ Կաշխատեմ/ինչո՞ւ/, *որ գյուղում մանկապարտեզը վերաբացվի*: Եթե այս երկրորդական նախադասության շարադասությունը փոխենք, կփոխվի նաև նրա իմաստը և բնույթը: Ինչպես. *Որ գյուղում մանկապարտեզը վերաբացվի*, կաշխատեմ: Այս դեպքում երկրորդականը բնույթով պայմանի պարագա է: Շարադասությունը, թերևս սակավ, իմաստային կարևոր դեր է կատարում բարդ նախադասությունների համակարգում:

Բացատրական որ շաղկապը կապվում է նաև կրավորական սեռի բայերի հետ: Այս դեպքում ստորադաս նախադասություններն իրենց գործառնությամբ կարող են լինել ենթակա: Գերադաս բաղադրիչի բայ-ստորոգյալը (ասացական, մտածական) կիրառվում է եզակի երրորդ դեմքով. Պարզ լսվում է/ի՞նչ/, *որ ծիծաղում է նա/ենթա/*:

¹ Տե՛ս՝ **Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան**, Ժամանակակից հայոց լեզու, շարահյուսություն, հ. 3, Եր., 1967, էջ 668: **Ս. Պապոյան, Խ. Բաղիկյան**, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003, էջ 324-325:

Վերը նշվածները որ շաղկապի գլխավոր կիրառություններն են: Այս շաղկապը կարող է արտահայտել նաև այլ հարաբերություններ: Որ շաղկապով կապակցված երկրորդական նախադասությունները պատճառի, պայմանի, հիմունքի, ժամանակի, նպատակի իմաստ են արտահայտում հատկապես ժողովրդախոսակցական լեզվում, որտեղից և անցել են գեղարվեստական գրականությանը:

Այսպես. Կնոջ վրա թոնթորաց, որ կովին ծաքավ է թողել/պտճ.պ./: Բացատրում ենք՝ որ շաղկապը համարժեք է որովհետև շաղկապին: Կամ՝ Որ այդպես է, լավ նայիր քեզ: Այս որ շաղկապի մեջ առկա է նաև պայմանի իմաստ, և կախյալ նախադասությունը կարող է ընկալվել որպես պայմանի պարագա: Այսպիսի նախադասությունների իմաստային տիպերի բացահայտման համար դեր է խաղում համատեքստը: Իբրև պայման ներկայացվող գործողությունը, երևոյթը նախորդում է գերադաս նախադասությամբ արտահայտված գործողությանը, երևոյթին: Կամ՝ Ազնո որ մեծանաս, ի՞նչ ես դառնալու/ժ.պ./: Որ շաղկապը համարժեք է եթե դերանվանը: Անձրև է գալու, որ արևը ծակում է/հ.պ./: Որ շաղկապը համարժեք է քանի որ շաղկապին:

3) Երրորդ ենթատեսակի դեպքում երկրորդականը կապվում է գլխավորի հետ հարաբերյալների միջոցով: Գլխավոր նախադասության դերանունով (ցուցականով կամ սրա կապական հոլովառությամբ) արտահայտված անդամը՝ հարաբերյալը, ազդանշում է երկրորդականի առկայությունը, երբեմն նաև նրա բնույթը: Հարաբերյալները իրենց ոչ տարբերակված բովանդակության պատճառով պահանջում են համապատասխան երկրորդականով բացահայտում: Հարաբերյալների գործածությունը գլխավոր նախադասության մեջ մատնանշում է, որ առանց համապատասխան երկրորդականի գործածություն ունենալ չի կարող: Առանց հարաբերյալի նախադասություններում գլխավորը քերականական կառուցվածքով թերի է, քանի որ պակասում է այն անդամը, որն արտահայտված է երկրորդականով: Մինչդեռ հարաբերյալով նախադասություններում գլխավորը քերականական կառուցվածքով ձևակազմորեն լիակազմ է, սակայն դրանով հանդերձ՝ նա իմաստային ինքնուրույնություն չունի, քանի որ հարաբերյալի առկայությունը նրան կախման մեջ է պահում երկրորդականից: «Գերադաս բաղադրիչում կիրառվող հարաբերյալի ընտրությունը պայմանավորում է ստորադաս նախադասության բովանդակությունը»¹:

Այսպես. 1. Այնպիսի մտերմություն էր ցույց տալիս, որ մինչև անգամ պատմում էր իր անձնական գաղտնիքները: 2. Այս ամբողջը նրա արդյունքն է, որ բոլորը աշխատել էր անձնվիրաբար:

Այստեղ պարզում ենք, որ 1-ին և 2-րդ կապակցությունների ստորադաս նախադասությունները փոխարինել են պարզ նախադասության

¹ Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003, էջ 288:

որոշիչ, հատկացուցիչ անդամներին, որոնք գլխավոր նախադասության մեջ արտահայտված են որևէ հարաբերյալով, որն էլ իր նյութական բովանդակությունը ստանում է ստորադաս նախադասության շնորհիվ:

Որոշելով՝ հարաբերյալը որ անդամն է, որոշում ենք ստորադաս նախադասության բնույթը: Առաջին նախադասության մեջ այնպիսի հարաբերյալը կատարում է որոշչի դեր, ուրեմն երկրորդական նախադասությունը բնույթով որոշիչ է, երկրորդ նախադասության նրա հարաբերյալը կատարում է հատկացուցչի պաշտոն, ուրեմն երկրորդական նախադասությունը բնույթով հատկացուցիչ է: Իհարկե, ոչ բոլոր նախադասություններում է գործածվում հարաբերյալ: Նման դեպքերում կարող ենք մտովի այն վերականգնել, որոշել պաշտոնը և ըստ այդմ էլ որոշել երկրորդական նախադասության բնույթը:

Այսպես, Նրան հուզում էր և այն, որ դու չես իմացել այդ մասին/ենթ.: Եվ այն հասկացա, որ դրամի պես մաշվել են արդեն բառերը բոլոր/ուղ. խ.: Խեղճ մարդու միակ իդըր այն է, որ մտնես ծնողներիդ տունը/ստ.:

Հաճախ որոշ կարգի բայերի բայիմաստով պայմանավորված՝ ցուցական դերանունները հանդես են գալիս հոլովական թեք ձևերով: Օր. Այդ խորթությունը նրանից է, որ Միքայելը բավական աճել և չափահաս էր դարձել (ստորոգելի): Ես հասա նրան, որ կորցրի իմ հավատն ու վստահությունը (հ. խ.): Իր ուժերի նկատմամբ կասկածը ծնվեց նրանից, որ երեկ ակոսի մեջ ծնկները կքոտեցին (անջ. խ.): Իրեն մխիթարում էր նրանով, որ նյութական կորուստներ չունեցավ (մ. խ.): Արդարացվեց նրանով, որ ի վերջո ճանաչեց իրեն (ներգ. խ.): Դա լավ է այն բանով, որ վերականգնեց իր վարկը (սահմ. խ.):

Լայն տարածում ունեն այն մեկնական, բացատրական երկրորդական նախադասությունները, որոնք՝ ա) այն, այնպիսի հարաբերյալների միջնորդությամբ կապվում են գոյականների, բայանունների հետ (նշելով այս կամ այն հատկանիշը), բ) այնպես, այնքան և նման հարաբերյալներով՝ բայի հետ (արտահայտելով որակական, քանակական հատկանիշներ): Բերենք օրինակներ. Նա իր հոգում կրում է այն սարսափը, որ սեփական աչքերով տեսել է հոր սպանությունը/որ.: Եվ մոտենալով այնքան հեռացանք, որ ետ կանչելու էլ բառ չմնաց /չ.ու ք. պ.:/: Նա այնպես է խոսում, որ ոչինչ չի հասկացվում/ձ.պ.: Եթե այսպիսի կապակցություններում երկրորդական նախադասության բայ-ստորոգյալը արտահայտված է լինում ըղձական եղանակով, ապա ըստ բնույթի լինում է նպատակի պարագա: Օր. Այնպես է քայլում, որ չարթնացնի փոքրիկներին:

Հաճախ կախյալ եզրը կարող է լրացնել գերադաս նախադասության չափի, ձևի պարագաներին՝ ցույց տալով նրանց արտահայտած հատկանշի աստիճանը: Օրինակ. Այդ երաժշտությունը այնքան դյուրիչ է, որ մարդ ուզում է անընդհատ լսի (չ. ու ք. պ.): Ուրբերը փոխում է այնպես կաքավաքայլ, որ կարծես ափսոսում է կոխել գետինը (ձևի պ.):

Հաճախ որպես հարաբերյալ հանդես են գալիս դերանվանական կապակցություններ, հոլովակապային կառույցներ. այն բանից, այդ ամենից, այն բանով, այն պատճառով, այն մասին, նրա համար և այլն: Օր.Նա պատմությունն սկսեց այն բանից, որ առաջին անգամ է որսի գնացել/անջ.խ./: Մայրիկին հուսադրում էին այն բանով, որ նրա որդին կենդանի է/մ.խ./: Մենք խոսում էինք այն մասին, որ պետք է զուգակցել միտքն ու սիրտը/վ.խ./: /Նման կառույցներում, երբ որպես երկրորդական նախադասության լրացյալ սովորաբար գործածվում են ասացական, մտածական բայեր, հարաբերյալի բացակայության դեպքում ունենում ենք ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն/: Նրանք շուտ մեկնեցին այն պատճառով, որ նախապատրաստվեն խորհրդակցությանը: Անդրանիկը մոայլվել էր նրա համար, որ հուսահատություն էր նկատվել զինվորների դեմքերին /պտճ.պ./: Հանձնաժողովը կազմվել է այն նպատակով, որ ստուգի բաժնի աշխատանքները: Նրա՞ համար, որ չորանանք այստեղ, աճեցինք մենք /նպ.պ./: Նրա համար հոլովական կառույցը գործածվում է նաև պատճառի պարագա երկրորդական նախադասություններում: Տարբերությունը կրկին այն է, որ նպատակի պարագա երկրորդական նախադասությունում ստորոգյալը գործածվում է ըղձական եղանակով:

Այրել է արտասուքը, այրել է այն ձևով, որ օդի մեջ նույնիսկ հնչուն չլավի/ձ.պ./: Ես կգամ միայն այն պայմանով, որ դու էլ գաս/այմ.պ./: Նրան կհեռացնեն այն հիմունքով, որ խախտել է աշխատանքային պայմանագիրը/հ.պ./:

Վերլուծության ժամանակ տրված բազմաթիվ ինչուներ օգնում են սովորողին՝ զարգացնելու, մտածելու ունակությունը, տրամաբանական եզրակացությունների հանգելու կարողությունը:

Այս ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի նախադասությունների լրացական-քերականական հարաբերությունների որոշման, նախադասության կառուցվածքային առանձնահատկությունները դիտարկելու համար:

Գրականություն

1. Աբրահամյան Ս.Գ., Զթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965թ.:
2. Աբրահամյան Ս.Գ., Հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան, 2004թ.:
3. Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ա., Օհանյան Հ.Ա., Բաղիկյան Խ.Գ., Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն, հ.3, Երևան, 1975թ.:

3.Գարեգինյան Գ.Լ., Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963թ.:

4.Պապոյան Ա.Հ., Բադիկյան Խ.Գ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2003թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, Բ.Գ.Թ. Հ.Ս.Ղազարյանը:

Գոհար ԹՈՐՈՍՅԱՆ

**Լոռու մարզ, Ջրաշեն համայնքի միջնակարգ դպրոցի
հայոց լեզվի և գրականության ուսուցիչ**

ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌԻՆ ՀԱՏՈՒԿ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Բարբառային բառարանի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ բարբառային մի շարք բառեր բնորոշ են միայն Կարնո բարբառին: Վերջիններս արտահայտում են այդ բարբառախոսների լեզվատաճողությունը, կենցաղն ու առօրյան: Կատարելով այդ բառերի լեզվաբանական քննություն՝ դրանք դասակարգել ենք խոսքիմասային իմաստային խմբերով:

1. Գոյականներ՝ անձնանիշ և իրանիշ բառեր, տեղանուններ և այլն:
2. Ածականներ՝ անձնանիշ և իրանիշ գոյականներին բնութագրող բառեր:
3. Բայեր՝ անձնանիշ ենթակա պահանջող գործողություններ:
4. Մակբայ - Ձևի և ժամանակի:

Կարնո բարբառում պահպանված եզակի կազմությունները երբեմն հնչյունական տարբերակներ են, որոնց զուգահեռ կան նաև հոմանիշ բաղադրիչով տարբերակներ:

Բանալի բառեր՝ հեքիաթ, բառարան, ժողովրդական մտածողություն, կազմություն, կապակցելիություն, վերլուծություն, անձնանիշ և իրանիշ բառեր:

Դ.ТОРОСЯН

СМЫСЛОВОЕ ИЗУЧЕНИЕ СПЕЦИАЛЬНЫХ ДИАЛЕКТНЫХ СЛОВ, ПРИНАДЛЕЖАЩИХ К КАРИНСКОМУ ДИАЛЕКТУ

Анализ диалектного словаря показывает, что некоторые диалектные слова характерны только для каринского диалекта.

Они выражают языковое мышление, образ жизни и повседневную жизнь людей, говорящих на этом диалекте. На основе лингвистического изучения этих слов мы классифицировали их на семантические группы в зависимости от того, к какой части речи они принадлежат.

1. **Существительные** - Слова, обозначающие людей и предметы, географические названия

2. **Прилагательные** - Слова, характеризующие существительные, обозначающие людей и предметы.

3. **Глаголы** - Действие, требующее подлежащее, обозначающего человека

4. **Наречия** манеры и времени.

Единичные словообразования, сохранившиеся на каринском диалекте, иногда являются фонетическими вариантами слов. Параллельно существуют также варианты, содержащие синонимичные компоненты.

Ключевые слова: сказка, словарный запас, народное мышление, композиция, связность, Анализ, Слова, обозначающие людей и предметы.

G.TOROSYAN

SEMANTIC EXAMINATION OF SPECIAL DIALECTAL WORDS IN THE KARIN DIALECT

The analysis of the dialectal dictionary shows that a number of dialectal words are typical only to the Karin dialect. They express the linguistic thinking, lifestyle and everyday life of the people speaking this dialect. Based on the linguistic examination of these words, we have classified them into semantic groups based on what part of speech they belong to.

1.Nouns - Words denoting persons, and objects, names of locations.

2.Adjectives - Words characterizing nouns that denote persons and subjects.

3.Verbs - An action that requires a subject denoting a person.

4.Adverbs of manner and time.

The sporadic word formations preserved in the Karin dialect are sometimes phonetic variants of words. Parallel to these words, there are also variants containing a synonym component.

Key words: fairy tale, vocabulary, folk thinking, composition, connectivity, analyse, person, nouns denoting persons, and objects.

«Էմինեան ազգագրական ժողովածուի» [4] առաջին հատորում ամփոփվել են «Փշրանք Շիրակի ամբարներից» կոչվող ազգագրական նյութերը, որոնց մեջ կարևոր նշանակություն ունեն «Բնիկ Ալեքսանդրապոլցի Ալեքսանդր Ափրիկեանցի» [4, VIII] կողմից 1880 թ. գրաված հեքիաթները: Ինչպես

ժողովածուի խնբագրակազմն է նկատել «.... ժողովրդական բանաուր գրականութեան **գրականական** հետաքրքրութիւնից գատ, նկատելի է և նորա **լեզուաբանական** նշանակութիւնը գաւառաբարբառների ուսումնասիրութեան տեսակէտից» [4, X], քանի որ հայոց լեզվի պատմության, ազգագրության, պատմագրության, բանագիտության և այլ բնագավառների հետ առնչվող շատ հարցերի պատասխանը կարելի է գտնել բարբառների բառապաշարի ուսումնասիրության շնորհիվ [3, 112]:

Ընթերցելով Շիրակի բարբառին վերաբերող լեզվաբանական մի շարք ուսումնասիրություններ՝ պարզեցինք, որ առանձին ուսումնասիրված չեն այն բառերը, որոնք բնորոշ են միայն Կարնո բարբառին, բայց դրանք հաճախակի հանդիպող լեզվական միավորներ են, որոնք իրենց տարբեր արտահայտություններով գործածվել են Շիրակի հեքիաթներում: Նպատակ ունենալով բացահայտելու Կարնո բարբառի Շիրակի խոսվածքին բնորոշ բարբառայնությունները՝ դրանք ուսումնասիրել ենք որոնողական և զուգադրական մեթոդաբանությամբ:

Կարնո բարբառի հնչյունական և ձևաբանական հատկանիշները քննվել են Հ. Մկրտչյանի կողմից [4]: Սույն աշխատանքում մեր ուշադրությանն են արժանացել հատկապես Կարնո բարբառի Շիրակի խոսվածքի բառային բնորոշ միավորները, որոնք դասակարգել ենք ըստ խոսքիմասային պատկանելության՝ զուգահեռաբար քննելով դրանց կազմության և կապակցելիության առանձնահատկությունները, քանի որ նշված բառերի իմաստների պարզաբանման համար անհրաժեշտ են թե՛ մեկը, թե՛ մյուսը:

Հավաքագրված բառապաշարը դասակարգել ենք ըստ խոսքիմասային պատկանելության՝ զուգահեռաբար քննելով դրանց կազմության և կապակցելիության առանձնահատկությունները, քանի որ նշված բառերի իմաստների պարզաբանման համար անհրաժեշտ են թե՛ մեկը, թե՛ մյուսը:

1. Իրանիշ **գոյականները** ներկայացվում են ինքնատիպ կապակցություններով, ինչպես **չալի-չոթի** «1. Մացառ, խոիվ, ցախ-մախ: 2. Հնամաշ իրեր» [5, Դ, 368] իմաստով հարադրությունը կիրառվում է որպես «թոփ էնել» ներգործական սեռի հարադրության լրացում, որը հնարավոր է մի դեպքում «ծախել», մյուս դեպքում՝ «վառել», օրինակ՝ *Ամեն օր կերթար մեշեն էս հալիվորը, չալի-չոթի թոփ կէներ կը բերեր քաղաք, որը կծախեր, որն էլ տունը կը վառեր....* [4, 22]: Հեքիաթներում կիրառված մի շարք բարբառայնություններ բարբառագիտական բառարաններում վկայված չեն, ինչպես **հաթահուր** գոյականը՝ «բարձր երաժշտություն» նշանակությամբ, վերջինս որպես կանոն գործածվում է գործիական հոլովով՝ որպես որոշիչ լրացնելով **հարսանիք** գոյականին, օրինակ՝ *Հաթահուրով զրոյթի հարսնիքմ էրաւ* [4, 49]: «Գազար» նշանակությամբ **փուրչուլուկ** բառը փոխառություն-բուսանուն է, որ Կարնո բարբառի խոսվածքներում գործածական է նաև **փուրչուլուխ** տարբերակով: Այն

հանդիպում է «Հաբմանի» հեքիաթում. «Կայ, ընչի՛ չէ, քա՞նի գրուանքայ փուրչուլուկ կուգես» [4, 33]:

Դիրկեարխանայ¹ տեղանիշ, կազմությամբ բարդ գոյականի առաջին բաղադրիչը բարբառներում տարածված **դուրգալ** «հյուն» բառն է [5, 1, 362]: Շիրակի խոսվածքին բնորոշ հնչյունափոխված տարբերակն է՝ **դյուկյար**, որից էլ կազմվել է բառաբարդումը՝ գործածվելով «Թագաւորի պզտի տղէն» հեքիաթում՝ իբրև տեղանիշ բազմակի ուղիղ խնդիրների մեկ բաղադրիչ, օրինակ՝ *Էլ բազազի դիւքեան, միկիտան, ֆռուն, դամրչնոց, դիրկեարխանայ, բիրադի լաւ – իրանց դայտի սարքած* [4, 69]: Այս շարքում նույն կերպ առանձնանում է նաև **դամրչնոց** ածանցավոր կազմությունը: Բարբառներում գործածական «դարբին» նշանակությամբ **դամիրչի** բառի շիրակյան տարբերակն է **դամրչի** [5, Ա, 304], որով տեղանվանական ածանցով կազմությունը նույնպես վկայված չէ բառարաններում:

Հետաքրքիր է, որ **Ֆ** հնչյուն-տառով են սկսվում «արտասովոր անասուններին» տրվող անունները: Արևմտյան բարբառներում հանդիպող **Ֆիլիկ** «Մի տեսակ այծ, որ ունի նուրբ ու երկար մազեր» [5, Է, 194] գոյականը Շիրակի խոսվածքում կիրառվում է առանց ածանցման, օրինակ՝ *Էս մորթին էնպէս մարիֆաթ ունի, թէ որ, ըսաւ, ֆիլի ոսկորից մէկ հատ պալատ շինուի, չամչրադի պէս չորս բոլորը լուս կուտայ* [4, 53]: Քաստուն հատ **ֆիլ** տոճիկ տալով, սարերուց պրծան էկան, հաւուզներու վրա թափան [4, 55]: Այսպես նաև **Ֆիլիզ** իրանիշ գոյականը ըստ երևույթին «ձեղ» նշանակությամբ «Հաբմանի» հեքիաթում գործածվում է որպես փոխակերպման արդյունք, օրինակ՝ *Հաբմանին էլ էն սհաթին կնկան դարձրեց մէկ բարակ ֆիլիզ, ինքն էլ էղաւ մէկ օձ, փաթտուաւ էդ ֆիլիզին ու գլուխը դրեց ֆիլիզի ծերին* [4, 34]:

Այս շարքում առանձնանում է **դուլլուդտար** անձնանիշ գոյականը՝ կազմված «դուլլուդ (ծառայություն) + տար» կաղապարով, որ կիրառվել է **Ղուլլուդտարները թագաւորի դրկած ձկի հրմար յայտնեցին թագուհուն** [4, 6] արտահայտության մեջ «սուրհանդակ» իմաստով:

2. **Բայերը** Կարնո բարբառում կիրառվում են ինքնատիպ ածանցումներով, ինչպես՝ **կառավարցնել** կազմությունը, որտեղ ներգործական սեռի բայը, ստանալով պատճառական ածանց, արտահայտում է նաև անդրադարձ գործողության իմաստ, օրինակ՝ ... *թող ընծի մէկ կոտ օսկի տար՝ հերիք էր. էս ընծի կը կառավարցնէի* [4, 16]: Նշված նախադասությունը «Բաղդաւոր տղայ» հեքիաթում կրկնավոր արտահայտություններից է, որը սակայն հաջորդ կապակցության մեջ արտահայտվում է*էս իմ գլուխը կը պատէի* [4, 17] հոմանիշ դարձվածքով՝ «գլխի ճարը տեսնել» իմաստով: Ի դեպ նշված դարձվածքը նույնպես բառարանում ներկայացված չէ, և մեր որոնողական

¹ Ժողովածուում հանդիպում են և՛ դասական, և բարբառային ուղղագրությամբ կազմություններ, որոնք մենք նույնությամբ արտագրել ենք:

աշխատանքի ընթացքում այլ բարբառներով գրաված հեքիաթներում նույնպես չենք հանդիպել, ուստի կարող ենք վերապահությամբ նշել, որ այն նույնպես Կարնո բարբառին բնորոշ արտահայտություններից է: Շիրակի խոսվածքին բնորոշ է նաև **կառավարել** բայի վ ածանցով կազմությունը՝ «իջևանել» իմաստով, օրինակ՝ *Հըմա քովը մէկ աղքատանոց էլ շինել տուեց էդ թագաւորի անունով, որ գնացող էկող աղքատ ճամփորդները կառավարուին* [4, 20]: Հեքիաթներում գործածական բայերից առանձնացրել ենք նաև **կիսկսել** արմատի կրկնությամբ բազմապատկական բայը, որ այլուր չենք հանդիպել, օրինակ՝ *Ես կը կիսկսեմ ու երբ որ ձեզի կանչեցի, արեք ամենքիդ բաժինը իրան տամ* [4, 4]: Ինչպես **ֆ** հնչյուն-տառով սկսվող գոյականներին հատուկ էր կախարդական ոգի նշանակությունը, այնպես էլ **ֆոլտալ** գործողությունը Շիրակի հեքիաթներում հատուկ է կախարդական «չարիներին» (իր առանցքի շուրջ պտտվող անիվ), օրինակ՝ *Բիրադի գլխէ գլուխ էնպէս արծլի չարիւներ էին շինել, էդ չարիւները էնպէս կը ֆոլտային, որ մարդ մօտենար քիմի՝ կը կտրտէին* [4, 58]:

Շիրակի խոսվածքին բնորոշ **փեղքստալ** բայը մուգ կը ճյուղի բարբառներին հատուկ **փայլքստալ** «փայլփլել, շողշողալ» իմաստով [5, Է, 343] բայի հնչյունափոխված տարբերակն է, որ «Աւճի Շաբուրի տղէն» հեքիաթում արևի հետ կատարված համեմատությամբ վերագրվել է սպանված «ջանավարի» մորթուն, ինչպես՝ *.....վրայի մորթին էնպէս մէկ սամուրմ էր, որ արեգակի պէս կը փեղքստար* [4, 51]:

3. Շիրակի խոսվածքին բնորոշ **ածականները** արտահայտում են ինչպես իրանիշ, այնպես էլ անձնանիշ գոյականների անմիջական հատկանիշ՝ հանդես գալով որոշի կամ ստորոգելիի շարահյուսական պաշտոններով, ինչպես՝ **սուր** հասկացությունը՝ «Աւճի Շաբուրի տղէն» հեքիաթում բնութագրվում է **զիլֆիխար** փոխառությամբ՝ «Հալունի թուրը, որ իբր թէ շինած է կայծակի հալած երկաթից» նշանակությամբ [2, 312], օրինակ՝ *....ըսաւ աւճի Շաբուրի տղէն ու զիլֆիխար թուրը դուս քաշեց, հասաւ վրա* [4, 58]: Բարբառային հատկանիշ է նաև **ամրկենի** ածականը, որով «Կատուն ու առիծը» առակում բնութագրվում է **փայտ** գոյականը, օրինակ՝ *Յետոյ վեր առնելով մի հաստ ամրկենի փայտ, ընկնում է առիծի ջանին ...* [4, 80]: Կարնո բարբառում «ահարկու, երկյուղալի» [5, Ա, 34] նշանակությամբ է կիրառվում **սահոտ** ածանցավոր ածականը, օրինակ՝ *Իջած տեղերը շատ սահոտ էր* [4, 39]: **Սայմազ** «Հիմար, անխելք» նշանակությամբ փոխառություն-ածականով են բնութագրվում հնարամիտ, բայց հասարակության կողմից չհասկացված տղաները [5, Ե, 261], օրինակ՝ *....տարէք էդ սայմազ տղի գլուխը գարկէք* [4, 10]:

Ածականների մեջ նույնպես կան կազմություններ, որոնք բառարաններում ներկայացված չեն, դրանցից շատերը հեքիաթներում հանդիպում են ասացողների մեկնաբանությամբ: Կարծես թե դրանց կիրառությունների եզակիությունը, անհասկանալի լինելու հանգամանքը գիտակցելով՝ պատմողը զուգահեռաբար ներկայացնում է կազմության բացատրությունը: «Մարդակերպ

ձուկը» հեքիաթում **անիաթ** ածականով բնութագրվել է **տղա** անձնանիշ գոյականը, որ ասացողը մեկնաբանել է «բան չէր գիտի» արտահայտությամբ. *Մէկէլ ընկերն էլ՝ հէջ զանիաթ – բան չէր գիտի* [4, 39]: Բառարաններում ներկայացված չեն նաև մի շարք հնչյունափոխական տարբերակներ, ինչպես՝ **ածելի** գոյականի [5, Ա, 22] **արծլի** ձևը, որ «Աւճի Շաբուրի տղէն» հեքիաթում կիրառվել է ածականական «սուր» իմաստով, օրինակ՝ *...բիրաղի գլխէ գլուխ էնպէս արծլի չարխեր էին շինել* [4, 58]:

4. Ժամանականիշ **եսոնաւոր** մակբայը՝ «Ետի օրը, հետագայում, ապագայում» [5, Ա, 375] իմաստով, գրաբարյան «աւորս յետինս» կազմության բառայնացումն է, որին հատուկ է ապառնի ժամանակաձևերին կապակցվելը, օրինակ՝ *.....ու չեղնի թէ յեսոնաւոր իմ հացս իլէ ու անունս կոտրէ* [4, 3]:

Շիրակի խոսվածքին բնորոշ են նաև մի շարք դարձվածքներ, որոնք հիմնականում վերաիմաստավորված բայական բառակապակցություններ են, որ վերագրվում են անձնանիշ գոյականներին, օրինակ՝ **կէծակի զարկած դառնալ** դարձվածքը «Մաստիկ զարմանալ, ապշել՝ հանկարծակիի գալով» իմաստով [5, Գ, 71] բնութագրում է թագավորի հրամանը լսող ռանչպարին «Ռանչպարի տղէն» հեքիաթում. *Ռանչպարը էս որ իմացաւ, կէծակի զարկած դառաւ...* [4, 4]:

Դարտը կապուտ էր դարձվածքը «Նպատակը ուրիշ լինել» [5, Ա, 315] նշանակությամբ է գործածվել «Ռանչպարի տղէն» հեքիաթում. *Հըմա իրան փորի ցալը ուրիշ էր – դարտը կապուտ էր* [4, 3]: Հեքիաթներում հետաքրքիր է դարձվածքը դարձվածքով բացատրելու հանգամանքը, որի արդյունքում կիրառվում են հոմանիշ դարձվածներ՝ խոսքը դարձնելով ավելի պատկերավոր և հասկանալի:

Արև բաղադրիչով դարձվածքները բարբառներում բազմաթիվ են, որոնք հիմնականում կապվում են գեղեցիկի, լուսավորի, կյանքի և մահվան հետ, օրինակ՝ *արև ալ, արև անել, արև անցնել, արև աչքեր, արև առնել, արև հասակ, արևեն հանել* և այլն [5, Ա, 123]: Սակայն **արևը երդիկից թռել** դարձվածքը բառարաններում վկայված չէ, այն կիրառվել է «Ռանչպարի տղէն» հեքիաթում՝ «եղածը եղած է» դարձվածային իմաստով, ինչպես՝ *....հըմա էլ ի՞նչ օգուտ, արևն երդիկիցը թռել էր, էղածն էղած էր* [4, 10]: Բազմաթիվ են նաև **ջուր** բաղադրիչով դարձվածքները, որոնցից վկայված չէ նույն հեքիաթում կիրառված **ջրով ջաղաց** կայուն արտահայտությունը՝ «նույնը լինել» նշանակությամբ, օրինակ՝ *....մնացած քառասուն ջառիէքին էլ տեսան որ բիրաղի էն ջրով ջաղացն են* [4, 15]: Այս շարքում առանձնանում է «Բաղդաւոր տղայ» հեքիաթում կիրառված **բերնին գողի քար դիպած** արտահայտությունը՝ ասացողների *սառած մարդու պէս մնալ* մեկնաբանությամբ [4, 21]:

Բայական արտահայտությունների մեջ առանձնանում են թագավորներին ողջունելու ձևերը: Սրանցից **թամալլահ անել**՝ «ողջունել» իմաստով դարձվածքը

բառարաններում վկայված չէ, այն կիրառվել է «Ռանչպարի տղեն» հեքիաթում, ինչպես՝ *...ռանչպարի տղեն օխտը տեղ թամալլահ էրավ* [4, 7]:

Չվկայված փոխառությունները հասկանալի են լինում խոսքում, ինչպես՝ **տաւարճուղ** բառաբարդումը նշանակում է «տավարած» օրինակ՝ *Մէկ քիչ ճամբու պաշար դրին տաւարճուղները, կապին շալակները...* [4, 15]: **Ումուզ** նշանակում է «ուս» *Մորթին քցեց ումուզին ու ուրախ-ուրախ ընկավ ճամբայ գնաց տուն* [4, 51]: **Արթը** նշանակում է «հերթով», *օրինակ՝ Տղեն արթը պատմեց* [4, 51]:

Ուսումնասիրելով՝ հեքիաթների բառապաշարային միավորների իմաստաբանությունը՝ պարզ դարձավ, որ ժողովրդական մտածողության պարզաբանման բանալիները թաքնված են ժողովրդական ստեղծագործությունների մեջ: Բարբառային բառերը քննելով բարբառառագիտական բառարաններում հաճախ էինք հանդիպում դժվարությունների, քանի որ բառերի մի ստվար խումբ գրառված չէ և կարոտ էր լուսաբանման:

Գրականություն

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:
2. Աճառյան Հ., Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913:
3. Բառնասյան Ջ., Կարնո բարբառի խոսվածքներին անդրադառնալու մի փորձ, էջ 112 <http://shirak.asj-oa.am/290/1/109-112.pdf>
4. Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա, Ալեքսանդրապոլ, 1901:
5. Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, հ. Ա, 2001, հ. Բ, 2002, հ. Գ, 2004, հ. Դ, 2007, հ. Ե, 2008, հ. Զ, 2010, հ. Է, 2012:
6. Մկրտչյան Հ., Կարնո բարբառը, Երևան, 1952:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ր.գ.թ. Հ.Ս.Ղազարյանը:

Սովորատ ԽԱՆՅԱՆ

ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն, ք.գ.թ.,

ԱրՊՀ պատվավոր պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

ԺԱՄԱՆԱԿԻ ՊՈԵԶԻԱ՝ ԱՊԱԳԱՅԻ ԹԵՎԵՐՈՎ

Սույն գիտական հոդվածում վերլուծվում ու գնահատվում են ականավոր գրող Էդվարդ Միլիտոնյանի 2021 թվականին հրապարակած «Ժամանակի գիր» բանաստեղծական ժողովածուն:

Գիրքը դիտվում է որպես հանրագիտարանային ժողովածու, որի մեջ ներառված են 16 բանաստեղծական շարքեր, որոնցում գեղարվեստական բարձր մակարդակով ներկայացված է մերօրյա կյանքը՝ իր բազմաշերտ ու բազմերանգ ընթացքում:

Գիրքը որակվում է որպես նոր ներդրում արդի հայ պոեզիայի հարուստ գանձարանում:

Բանալի բառեր՝ Էդվարդ Միլիտոնյան, պոեզիա, ժամանակի գիր, Չարենց, ազգային ճակատագիր, հայ ժողովուրդ, միլիտոնյանական լեզու և ոճ:

С. ХАНЫАН

СОВРЕМЕННАЯ ПОЭЗИЯ КРЫЛЬЯМИ БУДУЩЕГО

В данной научной статье автор разбирает и оценивает сборник стихов «Письмена времени» (2021) знаменитого писателя Эдварда Милитоняна.

Книга определяется как энциклопедический сборник, в котором помещены 16 циклов стихов, в которых повседневная многослойная и разноцветная жизнь отражается в виде высокого художественного искусства.

Книга представляется как новое внедрение в сокровищницу современной армянской поэзии.

Ключевые слова: Эдвард Милитонян, поэзия, письма времени, Чаренц, национальная судьба, армянский народ, милитоняновский язык и стиль.

S. KHANYAN

POETRY OF TIME WITH WINGS OF THE FUTURE

This scientific article analyzes and evaluates the collection of poems "Chronicles of Time" (2021) by the writer Edward Militonyan.

The book is considered an encyclopedic collection, which contains sixteen cycles of poems, reflecting everyday, multi-layered and colorful life in high art.

The book is considered as a new treasure embedded in modern Armenian rich poetry.

Key words: Edward Militonyan, poetry, characters of the time, Charents, national destiny, Armenian people, Militonyan language and style.

Էդվարդ Միլիտոնյանը, որ բանաստեղծական անակնկալների բազմափորձ վարպետ է, իր հերթական 81-րդ գիրքը անվանել է **«Ժամանակի գիր»**։ Ժողովածուի այս անսովոր վերնագիրը մեզ մտովի տարավ դեպի Մեծն Չարենցի աստվածալեզու երգերի աշխարհը, որտեղ նրա մարգարեական խորհուրդներից մեկը հնչում է որպես հավերժական պատգամ՝ ուղղված գալիք երգասաններին.

*Թե ուզում ես երգը լսեն՝
Ժամանակիդ շունչը դարձիր,
Կապվի՛ր նյարդով յուրաքանչյուր
Քո օրերին ու քո դարին,
Կյանքը սիրիր լիահնչուն
Ու մի դավիր քո քնարին՝*

Ստեղծագործական ներքին մղումով Միլիտոնյանը արձագանքել է անմահ Չարենցին՝ պոեզիան ժամանակի շունչ ընկալելու առումով՝ չմոռանալով, որ Գ. Նարեկացուց, Հ. Թումանյանից, Ավ. Իսահակյանից, Դ. Վարուժանից, Ե. Չարենցից, Պ. Սևակից հետո դժվար է լինել հայ բանաստեղծ։

«Ժամանակի գիր» ժողովածուն բացվում է «Առավոտ լուսո» բազմիմաստ աղոթքով.

*Իբրև «Հայր մեր» աղոթք
Ահա այս առավոտ
Ծավալվել է լույսը հաղթող
Անհավակնտոս:
Սոսնձում է իրար հակառակորդ եզրեր,
Որոճում է աշխարհն՝ ասես մի եզ,
Նան լույսն այս ցրեց, ինչ թվում էր հավերժ,
Նշխարի պես բաժնեց վերին, վարին ու քեզ՝*

Հասկանալի է, որ բանաստեղծական այս դիպուկ խոսքը 20-րդ դարի քաղաքական-հասարակական կացութաձևի էության ու նրա փլուզման մասին է։

Դարաշրջանի բնութագրական երևույթների և իրադարձությունների էությունը գրքում հստակորեն բացահայտվում է մարդու ներաշխարհի նկարագրությամբ։

¹ Ե. Չարենց, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 4, ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1968, էջ 26:

² Էդ. Միլիտոնյան, Ժամանակի գիր, «Ծիծեռնակ» հրատ., Ե., 2021, էջ 6

Պատահական չէ, որ առանձին շարքն անվանված է «Մարդկանց ցուցահանդես», որը վկայում է բանաստեղծի աշխարհընկալման փիլիսոփայական խորքը, կյանքի տարաբնույթ հանգամանքներն ու իրադարձությունները, մարդկային հոգեկան տեղաշարժերը, կրքերի ու պատկերացումների ալեկոծումներն ու փոփոխությունները հմտորեն պատկերման կարողությունը:

Գրքի առաջին շարքի առաջին էջին Միլիտոնյան-նկարչի ստեղծած մարդկային երևակայության դիմանկարներն են՝ արևադեմ, ինքնավստահ, զարմացած, քողարկված, կենսածարավ, մանկաժպիտ հայացքներով, որոնց ավարտամասում՝ դագաղի մեջ հավերժական իր քունը գտած ադամորդին է:

Ուշագրավն այն է, որ նկարիչ-բանաստեղծն իր ստեղծած երևակայական կերպարների ներաշխարհը հմտորեն բացահայտել է պոետական խոսքարվեստով: Հիրավի, շարքերի մեջ հստակ երևում են դարաշրջանի մատուցած այն ակնկալվող անակնկալները, որոնց ընտելացան մարդիկ՝ դառնալով դարաշրջանի համոզիչ պատկեր:

Էդ. Միլիտոնյանը հոգեբան գրող է: Նա ճանաչում է մարդուն: Այդ են վկայում նրա թևավոր արտահայտությունները մարդկային բարդ ներաշխարհի վերաբերյալ: Լսենք նրան.

Մարդու ներսը անճանաչելի է հաճախ,

Ասես՝ ստորգետնյա ճարտարապետություն:

Բնչալիսի դամբարան ու գերեզման ունի,

Բնչալիսի հիվանդանոց է դիմում,

Բնչալիսի նկար է գնում անունը գաղտնի պահած,

Բնչալիսի խարդավանքներ է լարում,

Բնչալիսի խաղեր է խաղում,

Բնչալիսի Աստծու հավատում կամ պարզապես աղոթում

Այդպիսի մարդ է՝

Սակայն կարևորն այն է, որ Միլիտոնյանը մարդասոցություն չի քարոզում: Նա հետևում է թումանյանական մարդասիրական փիլիսոփայությանը:

Միլիտոնյան-գեղագետը չի մեղանչում ճշմարտության առաջ, քարոզներ չի հնչեցնում: Նրա բարոյախրատական չափատողերը ծիածանվում են որպես ժողովրդական թևավոր առած-ասացվածքներ: Բերենք օրինակներ. «Մարդ եթե չի տազնապում կյանքից, չի տազնապի և մահից», «Կյանքն ու մահը՝ մարդու առանցքի կողքերին երկու հավասար նժար», «Մարդը կյանք ու մահից գնդած մի Զատկի կղզու արձան», «Մարդ երբ ծիծաղում է, չի թաքցնում իր ատամները, որ չվախենան թշնամիներն ու բարեկամները»: Նման թևավոր մտքերը կարելի է ավելացնել շարքի մյուս բանաստեղծական տողերով: Ընդհանրության մեջ «Մարդկանց ցուցահանդես» շարքը մարդերգության գրական նոր տեսակ է արդի հայ պոեզիայում, որտեղ համարձակորեն ներկայացված է Մարդը և՛ իր

¹ Նույն տեղում, էջ 6

աստվածահաճո բարությանը, և՛ սատանայական չարությամբ: Այլապես չէին լինի մարդկանց ներաշխարհը ներկայացնող այսպիսի դիտարկումներ. «Մարդիկ երբեմն ուզում են խաբված լինել», «Մարդիկ երբեմն ասում են ճշմարտությունը», «Մարդիկ երբեմն խաղ են անում մահվան հետ», «Մարդիկ երբեմն ապրում են մեռած», «Մարդիկ երբեմն երագում են կործանել աշխարհը...», «Մարդիկ վրեժ են փորձում լուծել կյանքից ու մահից, Աստծուց ու սատանայից»¹:

Այսպես շարունակելով իր դիտարկումները՝ բանաստեղծը Սևակյան ավանդույթով ափամեջ է բերում 21-րդ դարի մարդուն, որը «...Երբեմն խնդում է Աստծո վրա, երբեմն հպարտանում է ցինիզմով... Երբեմն փառաբանում է մեղքը իր և ուրիշի, բայց ձաղկում է միայն ուրիշին»²:

Մեծանուն Չարենցը, որպես ժողովրդի հանճարի խորհրդանիշ, որպես նրա տառապանքի ցավակիր, վերջապես որպես ապագայի դեսպան, ներկայացված է ետջարենցյան ժամանակաշրջանի համարյա բոլոր գրողների երկերում: Կարող ենք ասել՝ առ այսօր ստեղծվել է Չարենցյան պատկերասրահ գրականության, գեղանկարչության, քանդակագործության, թատերարվեստի և այլ բնագավառներում:

Էդ. Միլիտոնյանը հպարտության ու երախտագիտության ամենանուրբ զգացումներով ձգտել է իր մասնակցությունն ունենալ այդ սրբազան գործում: Եվ՝ հաջողվել է նրան: «Ժամանակի գիր» ժողովածուի երկրորդ շարքը՝ «Չարենց» խորագրով միլիտոնյանական նոր ներդրում է մեր պոեզիայում և նկարչական արվեստում: Շարքը բացվում է «Չարենցի վերջին աշունը» խորագիրը կրող գեղանկարների փնջով, որի հեղինակը Միլիտոնյան-պոետն է: Էջի կենտրոնում Չարենցի դիմանկարն է՝ զանգրահեր գլուխը զարդարված աջից՝ դափնեպսակով, ձախից՝ փշե պսակով. հպարտության ու սրտակեղեք ցավի մի պատկեր, որի մտահղացումն ու արարումը ստեղծագործական լուրջ հաջողություն կարելի է համարել: Դիմանկարի ձախ կողմում բանտախցի պատկերն է, ներքևի մասում՝ Կարսի այն եկեղեցին, որտեղ կնքվել է ապագա բանաստեղծը: Դեպի եկեղեցու մուտքը սևաշոր կնոջ պատկերն է, իսկ գմբեթի խաչի մոտ՝ թևատարած աղավնին: Մի խոսքով, նկարների մի համահավաք, որտեղ բանաստեղծ-գեղանկարիչը պատկերել է պատմական դարաշրջանի դաժանությունը հանճարների հանդեպ և, ի հեճուկս ստալինյան բթացած գլուխների, ժողովրդի հավերժված սերը իր արժանապատիվ զավակների հանդեպ:

Շարքի «Չարենցի վերջին աշունը» ենթավերնագրի տակ Միլիտոնյանը բերում է բանաստեղծությունների մտահղացման հետևյալ աղբյուրը. «Մոցցանցային մեկնաբանությունների նմանակություններ՝ մեջբերած երեսնական թվականների մատնագրերից, բանաստեղծի մասին կարծիքներից և ասված-չասված խոսքերից»³:

¹ Նույն տեղում, էջ 11-12:

² Նույն տեղում, էջ 12:

³ Նույն տեղում, էջ 26:

Անցնելով Չարենցի կյանքի էջերի, նրա տաղանդի անեզր սահմանների, բնավորության երկրային ու երկնային բարեմասնությունների, ժամանակի շունչը դառնալու կարողության նկարագրությանը, Միլիտոնյանը հյուսել է մեծ գեղագետի բազմաշերտ ներաշխարհի պատկերը, նրանում հստակ ծիածանված են անմահ Չարենցի աշխարհընկալումը, կենսասիրության ինքնաբուխ դրսևորումները, ճակատագրի ողբերգական ու հերոսական էջերը՝ Միլիտոնյան-բանաստեղծի լեզվառճական առանձնահատկությունների վիպական մասշտաբայնության, խոհերի ու գեղումների քնարական տարերքի, պատմակենսագրական սկզբունքների պահպանման, երգիծանքի մտրակող ուժի շնորհիվ:

Գեղարվեստական պատկերների ինքնատիպ մի վառ համակարգ են շարքի երգերը և տողատակ մեկնաբանությունները: Բանաստեղծը համարձակորեն, տեղին բացում է փակագծերը, նշում մատնիչների և՛ կոնկրետ անունները, և՛ կեղծանունները: Այսպես, «Բորբ» բանաստեղծության վերջում Միլիտոնյանը ընդհանրացնում է Չարենցի անմահությունը հետևյալ պատկերով. «Բորբ, բորբ, հետմահու՝ բորբ: Ագնի, Արեգ, գառ, ար: Կրակի ծնունդ, կրակի գոհ: Փառք քեզ, բառ»:

Նման պոետական դիտարկումից հետո Միլիտոնյանը բերում է մեկնաբանությունը, որի տակ խորհրդանշական անվամբ Քյաբաբչի Մխոյի փսիտցը. «Համա թե բորբվեցիր, սուտ հեղափոխական»:

«Բորբ» բանաստեղծությանը հետևում է «Բանաստեղծն ու պաշտոնյաները» խոսուն պատկերը՝ տողատակ մեկնաբանությամբ, ուր ձախողված գրող Գևորգ Աբովի հարձակողական մոլուցքն է. «Չարենցը պետք է ցույց տա, որ ինքը գիտակցել է իր սխալները, ավելի ճիշտ, հանցանքները»: Եվ անմիջապես Սև Մկոյի զկոտոցը. «Ճիշտ է բռնելը, թող փտի բանտում»:

Դառնանք Գ. Աբովի մոլուցքին և շեշտենք, որ Չարենցի սխալներից մեկը եղել է «Երեքի» խմբում իր արևային անվան մոտ Գ. Աբովի անունը գրելը: Բացի այդ, սխալվել է՝ գրախոսելով Աբովի 1923թ. Մոսկվայում հրատարակված «Դանակը բկին» լրարիկ գրքույկը՝ ազնիվ մղումներով: «Լուրջ սպասելիքներ ունեինք Աբովից, նշել է նա:՝ Սպասելիքները չիրականացան գոնե առայժմ: Աբովը նման է Ռեմբոյին, խոստումներ ինչքան կուզեք, իրականացրած գործ-գրոշի»¹:

Ու եկել էր ժամանակը, որ պոեզիայում ձախողված Աբովը կույր վրիժառությամբ իր մատնությունը հնչեցներ՝ անմեղ հանճարին համարելով հանցագործ:

Դառնանք Միլիտոնյանի «Պետությունն ու բանաստեղծը» հյուսվածքին: Նրանում հնչում են հետևյալ դարապատկեր տողերը.

*Չարմանալի բան է կյանքը,
Պետությունը զենքեր ունի,
Վախենում է սակայն բառից,
Նույնիսկ նրա լռությունից
Ու փլվում է հենց այդ վախից: (էջ 30)*

¹ Տե՛ս **Չարենց**, «Երկերի ժողովածու» 6 հատորով, հ. 6, ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1967, էջ 75-79:

Ու տողատակ բերում է մեկնաբանությունը՝ ՀՄՀ ՊԱԿ-ի հավատարիմներից մեկի՝ Հր. Քոչարի ցինիկ կոչով, «Չարենցը մի քար է՝ ընկած խորհրդային պոեզիայի ճանապարհին»:

Միլիտոնյանը որոշ բանաստեղծությունների մեկնաբանությունների տակ բերում է նաև հայ ազնվասիրտ մեծությունների կարծիքները Չարենցի մասին:

Текст обнаруживает новые свойства изучаемых языковых единиц и открывает путь к совершенствованию речевых умений и навыков. Такой подход к изучению текста представляет интерес для решения методических задач, связанных с формированием у учащихся-армян коммуникативных умений в единстве с изучением лексического и грамматического материала. Текст, объединяющий в себе все языковые уровни, позволяет научить учащихся-армян мыслить не формально, не отстраненно (как это происходит при анализе разрозненных слов и предложений), а системно, исходя из содержания, контекста. Работа с текстом развивает кругозор учащихся, способствует их нравственному и эстетическому воспитанию.

Предлагаемые ниже тексты с заданиями побуждают учащихся не только связно, последовательно и правильно строить свое сообщение, но и логически рассуждать.

1. Ознакомьтесь с последним абзацем текста и определите, какое содержание может ему предшествовать. Прочитайте весь текст. Переведите предложения с глаголами движения на армянский язык. Сравните их значения. Передайте содержание текста с некоторой модификацией (измените конец или начало, введите новое действующее лицо). Выразите свое отношение. Напишите сочинение - эссе по теме.

Чем отблагодарить?

Поселянин гнал на мельницу осла, нагруженного зерном. Тяжелый мешок соскользнул со спины животного и упал на землю. Поселянин был человек слабосильный, а потому он остановился в недоумении из-за своей беды. Проезжал в это время какой-то богато одетый господин, но поселянин не осмелился просить его о помощи. Тот же, будучи истинно благородным человеком, без просьбы спрыгнул с коляски и предложил мужику свою помощь. Когда мешок был укреплен на спине

животного, поселянин снял шапку и, почтительно кланяясь помогавшему, спросил его: “Чем я могу отблагодарить Вас за услугу?”

- Это нетрудно, любезный, - ответил спрошенный. - Когда Вы кого-нибудь увидите в затруднительном положении, то Вы вообразите, что это я нуждаюсь в Вашей помощи, и помогите. Это будет действительная благодарность. [5, с.456]

2. Ознакомьтесь с текстом. Охарактеризуйте действующих лиц (место действия, эпоху и т. д.). Побеседуйте. Определите вид и время глаголов движения. Воспроизведите прочитанный текст, но измените сами конец (начало, середину). Напишите небольшое сочинение по теме.

Родной язык

Пески. Чужбина. Чужое небо над головой...

Старик в рваной одежде на горячем песке одну за другой выводит буквы алфавита. Возле него в таких же лохмотьях – мальчишки. Старик – учитель. По песочному букварю он обучает детей родному языку.

Раздается сигнал. Колонна снимается и идет дальше. Проходят вдаль синие тени беженцев.

Куда идут эти странники в рубищах, что ждет их впереди?

Вглядись, моя маленькая, взгляди! Может, найдешь в этом потоке людей бабушку свою или деда, счастливо уцелевших от кривого ножа турецкого янычара.

Снова привал. Костры. В закопченных мисках скудный обед. А чуть подальше, в кругу тесно обступивших детишек, старый учитель выводит и выводит свои песочные буквы...

Бессмертен ты, родной мой язык, если ветры пустынь тебя не замели. [2, с.327]

3. Прочитайте и озаглавьте текст так, чтобы это заинтересовало читателя. Определите время глаголов движения. Перескажите текст как можно точнее. Развивайте в себе навыки точного запоминания слов автора. Обсудите. Переведите текст на армянский язык.

Лебеди приходят из дали и уходят в даль. Я вижу их вытянутые напряженные шеи, желтые лапки, прижатые к телу.

Птицы летят крыло к крылу, будто взявшись за руки. Летят высоко, храбро, не оглядываясь. Я смотрю на них: лебедь – чистая и гордая птица... Потеряв подругу, лебедь не ищет новой семьи, остается верен первой любви.

Что это? Легенда? Сказка? Не знаю. Может, человек придумал все это, вложив в выдумку свои гордые помыслы.

Но что бы то ни было, я благодарен вам, лебеди. Не будь вас, может, я прошел бы мимо самого себя, не отличил бы настоящую любовь от корыстного расчета, подлинную честь от честности поддельной. Летите, лебеди! [2, с.12]

4. Посмотрите на заголовок. Как вы думаете, о чем идет речь? Ознакомьтесь с текстом. Найдите приставочные глаголы движения. Охарактеризуйте действующих лиц (место действия, эпоху и т. д.). Дайте

оценку прочитанному. Придумайте новый заголовок и другое окончание истории.

Портной Сарибек и его нерадивый ученик

В Шуши, стольном городе Карабаха, жил да поживал портной Сарибек, и про его портняжное мастерство шла в округе слава. Со всего Карабаха приходили к нему заказчики.

Многие считали за честь определить сына к нему в ученики. И старый мастер не жалел сил, обучал учеников своему ремеслу. Десятки его подмастерьев прославили потом имя своего мастера.

Но Сарибеку не повезло с одним из учеников. Красивый, ладный парень, а толку - никакого. Как мастер ни старался обучить его, привить любовь к ремеслу - ничего не выходило. Не проявлял ученик интереса, за шесть месяцев не научился ни кроить, ни шить.

Позвал мастер отца парня и сказал ему:

- Ничего из твоего сына не выйдет. Забери его. Пусть хоть научится по дому помогать.

Убитый горем отец забрал нерадивого сына. А через день-другой тот говорит отцу:

- Прости, отец. Портной из меня не получился. Боюсь, что и помощник в хозяйстве не выйдет. Отпусти меня на все четыре стороны. Поеду в далекие страны искать свое счастье. Не вечно же прозябать мне здесь, на твоей шее сидеть.

Неудачливому отцу ничего не оставалось, как согласиться. Сборы были недолгими. Сын положил в хурджин пару тонирных лепешек, кусок сыра, головку лука, низко поклонился родной земле и, крепко затянув шнуры трехов, пустился в дорогу.

Погоревали-погоревали родители о непутевом сыне, а там и утешились: “Не всем же быть портными. Может Бог смилостивится и повезет нашему Газаросу, улыбнется ему счастье”.

И счастье улыбнулось. Газарос стал богачом, купцом первой гильдии. Таким богачом, что слава о нем докатилась до родных гор. Следом за славой пришел сам Газарос. Знатно одетый, располневший, с золотой цепью через грудь. Со всего села сбежались смотреть на именитого земляка.

Поговорив с односельчанами о том о сем, Газарос спросил: “Жив ли Сарибек?”

- Жив, жив, - ответили ему, - Да продлятся годы его. Много добра приносит он людям.

Газарос послал за мастером коня. Сарибек явился. Газарос сидел на тахте, утопая в мягких мутаках и подушках. При виде мастера он не поспешил ему навстречу, не оказал должных почестей. Поприветствовав его, Газарос спесиво улыбнулся:

- Ну как, уста Сарибек? Вышел из меня человек?

Сарибек отрицательно покачал головой:

- Боюсь, Газарос, что нет, и вправду ничего не вышло. Какой же ты человек, если не уважаешь стариков, здороваешься с мастером, не поднявшись с места? [3, с.271]

5. Прочитайте текст. Выделите его главную мысль. Определите вид глаголов движения. Охарактеризуйте действующих лиц (место действия, эпоху и т. д.). Обменяйтесь мнениями. Придумайте новый заголовок. Воспроизведите прочитанный текст, но измените сами конец (начало, середину).

Чинара

Давно это было. Чужеземцы обманывали и обсчитывали наш народ. В стране не умели ни читать, ни писать. Не было еще письменности.

В одном селе жил бедный человек, у которого рос сын. Юноша был красив собой и знатен умом.

- Отец, - однажды сказал он, - я решил собрать буквы, научить людей читать, избавить народ от грабителей-чужеземцев.

Родители выслушали сына ни живы ни мертвы. Буквы эти были за тридевять земель, за семью морями, за семью океанами. Богачи спрятали их от бедняков...

Провожать юношу в далекий путь вышел весь народ. Разное говорилось ему в напутствие, но вот подошел к нему старик. Он держал в руках горсть земли и корень чинары.

- Сын мой, - сказал старик, - ты будешь далеко-далеко от родины. Длинный ожидает тебя путь. Нелегко придется в чужой стороне. Возьми с собой эту горсть земли и корень. Если старость придет и смертный час постучится к тебе на чужбине, посадишь корень в землю, вырастет чинара, на ней запоют соловьи, те, которые пели у твоей колыбели, зажурчат ручьи, такие же, как у нас в горах, и ты будешь не одинок.

Склонив голову, юноша выслушал напутствие, взял корень и землю, отвесил низкий поклон, пустился в дорогу.

Долго, очень долго шел юноша. Узнав, зачем явился странник в такую даль, богачи спрятали все буквы.

Но свет не без добрых людей. Нашлись друзья и у нашего земляка. Такие же бедняки, как он, помогли ему достать одну за другой все тридцать шесть букв.

Глубоким стариком пустился он в обратный путь. Но старость есть старость, иссякли силы, ноги отказались идти, а родина еще так далеко. "Неужто мне умирать на чужбине?" — думалось путнику. И вспомнил он о корне и горсти земли.

Старик сделал так, как посоветовали ему на родине, посадил он корень в землю, выросла чинара, на ней защебетали птицы, родные ветви зашумели над головой.

И путник остался доживать под чинарой остаток своих дней.

Прислонившись спиной к стволу дерева, из букв, собранных им с таким трудом, он слагал песни, посвящая их чинаре, такой же одинокой среди пустыни, как и он.

Не из тех ли букв, люди, пошла наша письменность, как знать? [3, с.259]

6. Ознакомьтесь с текстом. Озаглавьте его так, чтобы это заинтересовало читателя. Придумайте окончание истории, используя глаголы движения.

В тот день все, кто шел от Канакера, останавливались, удивленные невиданным зрелищем. Толпы горожан – мужчины, женщины, дети – бежали к нижней части города. Центральная улица кишела народом. В этот поток вливались новые люди из боковых улиц. Старики, старухи, школьники, должностные лица, военные. Многие бежали, не зная даже куда. Пытались расспрашивать: бегущим не до ответов было. Делали руками неопределенные знаки, глухо мычали. Самые доброжелательные поворачивали головы, кричали: “Корабль!” - и исчезали. Корабль? [4, с.222-223]

7. Прочитайте первый абзац и определите тему текста. Дочитайте до конца. Определите вид и время глаголов движения. Перескажите текст эмоционально, включая в него серию риторических вопросов. Придумайте новый заголовок и другое окончание истории.

Баллада о крылатом мальчике

В одном селе родился крылатый мальчик. Рос мальчик, вырастали и его крылья. Поначалу он летал вокруг своего дома, потом вокруг деревни, задевая крылом облака.

Крылатый мальчик стал юношей. И задумал он вступить в бой с орлом.

А тем временем в доме, где родился необычный мальчик, царил непокой. Убитые горем родители не жалели денег, со всего света сзывая лекарей, чтобы излечить сына от недуга, сделать его таким, как и все.

Лекари приходили – уходили, а мальчик рос и рос, на своих сильных крыльях поднимался все выше и выше, теряясь в облаках.

Но нашелся лекарь, который взялся вылечить юношу. И нашелся он в тот самый час, когда юноша должен был вступить в бой с орлом.

Ночью, когда юноша безмятежно спал, набираясь сил для дерзкого полета, лекарь незаметно срезал ему крылья. Наутро, поднявшись и ничего не подозревая, юноша ушел в горы, на орлиную скалу, чтобы оттуда ринуться в синь неба, в полет.

Только в воздухе, стремительно несясь вниз, к своей гибели, юноша понял, что он бескрылый. [2, с.342]

8. Объясните заголовок: о чем этот текст? Ознакомьтесь с текстом, наблюдая за употреблением глаголов движения. Дайте оценку прочитанному. Придумайте новый заголовок. Сделайте рекламу этому тексту так, чтобы слушатели захотели прочитать его. Перескажите текст эмоционально.

Верность

Отара овец спускалась с гор, с летних пастбищ, на зимовку в низины. На полдороге старший чабан вдруг обнаружил, что нет в своре лучшей сторожевой собаки.

- Карабаш! - звал чабан собаку. Эхо далеко отдавалось в горах, а собака не отзывалась. “Наверное, издохла”, - решил чабан. Собаки, чувствуя свою кончину, уходят от хозяина.

Погоревал, погоревал чабан, а там и забыл о ней. Вслед за пропажей собаки чабан не нашел и своей бурки. Должно быть, позабыл на летней стоянке. Чабан пожалел и о бурке.

Ранней весной колхозное стадо снова поднялось в горы на летний отгон. И здесь чабан увидел свою бурку, а возле нее Карабаша, пропавшую собаку. Чабан понял все: собака осталась сторожить бурку.

Вокруг бурки и собаки вся трава была измята, обгрызана. И сама собака была другая, остались от нее кожа да кости, клочьями торчала бурая свалывшаяся шерсть.

- Карабаш! - кинулся к собаке чабан, доставая из сумки хлеб. Но собака не приняла ни хлеба, ни ласки. Она отчужденно ощерила желтые зубы. Потом ушла, поджав хвост, не оборачиваясь на зов. Ушла совсем, не простив хозяину его забывчивости. [2, с.332]

Լիտերատուրա

1. Акишина А.А., Каган О. Е., Учимся учить. Для преподавателя русского языка как иностранного. – 3-е издание, испр. и доп.- М.: Рус. яз. Курсы, 2004. – 256 с.
2. Гурунц Л.К., Избранное: В 2-х т. – Ер.: Совет. Грох, т. 1. Роман, рассказы, миниатюры. 1983. – 376с.
3. Гурунц Л.К., Избранное: В 2-х т. – Ер.: Совет. Грох, т. 2. Роман, рассказы, очерки. 1983. –258 с.
4. Зарян К.Х., Корабль на горе. Роман. – М.: Известия, 1974. – 416 с.
5. Пища для души. Москва, типография ОАО “Молодая гвардия”, 2004. - 734 с.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ր.գ.թ. Հ.Ս.Ղազարյանը:

ՀՏԴ 941(479.243)

Պատմություն

Վահրամ ԲԱԼԱՅԱՆ

ԱրՊՀ պատմության և քաղաքագիտության ամբիոն, պ.գ.դ., պրոֆեսոր

**ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ
ԱՐՑԱԽՈՒՄ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԿԵՐՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
(1890-2020ԹԹ.)**

Պատմական ասպարեզ իջնելով 19-րդ դարի վերջերին՝ ՀՅ Դաշնակցությունը հայ ժողովրդի ուժերը մեկտեղելու, հայրենիքը ազատագրելու և հայոց պետականությունը վերակերտելու համար նպատակաուղղված գործունեություն էր ծավալել:

Հետևողական այդ պայքարի արդյունքում ՀՅ Դաշնակցությանը 20-րդ դարում հաջողվել էր երկու անգամ՝ 1917-20 թվականներին և 1991թ. սեպտեմբերի 2-ին Արցախում վերականգնել պետականությունը: Առավել մեծ ջանքեր է պահանջվում արդյուն և քրտինքի միջոցով ձեռք բերած պետականությունը պահել և զարգացնել:

Տարածքային և մարդկային ահռելի կորուստներ կրած ԱՀ-ն դեռևս դժվարին ճանապարհի ունի անցնելու: Այդ ամենը հաղթահարելու համար ՀՅ Դաշնակցությունը իր աշխարհասփյուռ կառույցներով կանգնելու է արցախահայության և ԱՀ կողքին:

Բանալի բառեր՝ ՀՅ Դաշնակցություն, ազատություն, պայքար, պետականություն, հայրենիք, Արցախ, Հայաստան, Ռուսաստան, Ադրբեյջան, Շուշի, արցախահայություն, գաղափարներ:

В.БАЛАЯН

**РОЛЬ АРМЯНСКОЙ РЕВОЛЮЦИОННОЙ ПАРТИИ
ДАШНАКЦУЦИОН В ВОССТАНОВЛЕНИИ
ГОСУДАРСТВЕННОСТИ В АРЦАХЕ.
(1890-2020ГГ.)**

Взойдя на историческую арену в конце 19 и начале 20 века Армянская Революционная партия Дашнакцуюн, развернула деятельность направленную на объединение сил армянского народа, освобождение Родины и восстановлению армянской государственности.

В итоге этой борьбы Армянская Революционная партия Дашнакцүцюн в 20 веке удалось два раза: в 1917-20 г.г. и 2 сентября 1991г. восстановить государственность в Арцахе. Больших усилий требует сохранить и развить государственность приобретенную потом и кровью.

В 2020г. в следствии развязанной войны со стороны Азербайджана, Турции и международных террористических группировок, с огромными территориальными и человеческими потерями, Республика Арцах еще предстоит пройти сложнейший путь. Для того чтобы все это преодолеть Армянская Революционная партия Дашнакцүцюн всеми своими структурами по всему миру стоит рядом с армянством Арцаха и Республикой Арцах.

Ключевые слова: Армянская Революционная партия Дашнакцүцюн, свобода, борьба, государственность, Арцах, Армения, Россия, Азербайджан, Шуши, армянство Арцаха, идея.

19-րդ դարի երկրորդ կեսին Հայաստանը շարունակում էր երկփեղկված մնալ: Արևմտյան Հայաստանը գտնվում էր Թուրքիայի, իսկ Արևելյան Հայաստանը ցարական Ռուսաստանի գերիշխանության տակ:

Արևմտյան Հայաստանում հայ ժողովուրդը գտնվում էր ամենադաժան ճնշումների, ազգային արժանապատվության ոտնահարման, ֆիզիկական բնաջնջման ամենօրյա վտանգի պայմաններում:

Օսմանյան կայսրությունում հայերն ունեին «ռայա»-ի՝ ըստ էության ստրուկի կարգավիճակ: Նրանք զրկված էին տարրական իրավունքներից՝ ձի նստելու, իրենց հանգուցյալներին բարձր բռնած հուղարկավորելու, զենք բռնելու, դատարանում վկայություն տալու: Ոչ մահմեդական ժողովուրդների հողերը հայտարարված էին նվաճված և օգտագործողներին էին տրվում պայմանական իրավունքով:

Հայ գյուղացիները տարատեսակ հարկեր (աշար, խարաջ (հողահարկ), ջիզյե (գլխահարկ), մարդահարկ կամ մանկահավաք (դեվշիրմե) էին վճարում պետությանը, թուրք և քուրդ ցեղապետերին:

Թուրք և քուրդ ցեղապետերը կարող էին մտնել հայկական գյուղերը, թալանել, սպանել ու մնալ առանց դատ ու դատաստանի: Բռնի հավատափոխությունը, եկեղեցիները մզկիթների վերածելը սովորական երևույթներ էին: Պատերազմների ժամանակ անսանձ բռնությունները բազմապատկվում էին: 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ անգլիական «Թայմս» թերթի թղթակից Նորմանը, գտնվելով թուրքական զորքերի մեջ և Արևմտյան Հայաստանում նրանց ոճրագործություններին ականատես լինելով, 1877թ. գրել է. «Իմ թույլ գրիչը անկարող է նկարագրել այն

բոլոր սարսափները, որ նյութեցին Հայաստանի մեջ քրդերն ու Օսմանյան բանակի այլ կամավոր վաշտերը: Ամենուրեք լքված գյուղեր, պարպված, ամայացած քաղաքներ: Ավգուլ գյուղի մեջ հրդեհեցին եկեղեցին, ուր ապաստանել էին կանայք ու երեխաներ, ապա բռնաբարեցին բոլորին ու թողեցին մերկ:...Ծնողները կողբան իրենց խոխոխված գավակների համար:...Այլևս չեմ կարող գրել»¹:

Կոստանդնուպոլսում Ռուսաստանի դեսպանության հաղորդագրություններից մեկում ընթերցում ենք. «Հնարավոր չէ նկարագրել հայի տառապանքները: Նրան ջարդում են ,... տունը թալանում, գեղեցիկ աղջկան առնանգում: Դաշտերը ավերվել են վերածվել անապատի: Եթե մեկը դուրս է գալիս տնից, համոզված չէ, որ կվերադառնա...»²:

19-րդ դարի 60-70-ական թվականներին Հայ առաջադեմ մտավորականության ներկայացուցիչները (Գրիգոր Օտյան, Մկրտիչ Փորթուգալյան, Բաքի, Մկրտիչ Խրիմյան) արևմտահայության ստրկական շղթաները թոթափելու համար պայքարի կոչեցին: Բայց ազգային միասնականությունից զրկված, անհույս կացության մեջ հայտնված, պարզապես գոյությունը քարշ տվող արևմտահայության համար հայ մտավորականների խոսքը մնում էր որպես «ձայն բարբառո հանապատի»: Խրիմյան Հայրիկը վշտահար գրել է. «Ողորմի՜մ քեզ ժողովուրդ Հայոց, ողորմիմ, արդեօք լաւագոյն չէր քեզ, որ մի անգամ մեռնէիր և կնքէր քո հանգստեան գերեզման...քան թե այսպէս ի գետին թալկանալով, արինացամաք մեռնի...: Մինչէ երբ անսամ քեզ, որ ինքնագոհ մեռնիլ սորվիս. աշխարհ սորվեցաւ այդ դասը, իւր մրցանակն առաւ, դու դեռ անուս մանուկ մնացիր...»³:

Ի տարբերություն թուրքահպատակ Հայաստանի ռուսահպատակ Հայաստանում հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը երաշխավորված էր: Ավելին, տնտեսական, մշակութային կյանքի զարգացման առավել նպաստավոր պայմաններ ստեղծվեցին: Արևելյան Հայաստանը հայահավաք կենտրոն դարձավ: Ինչպես Արևելյան Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանի հայաշատ վայրերում, մասնավորապես՝ Թիֆլիսում, Բաքվում, Մոսկվայում, Պետերբուրգում, գրողները իրենց ստեղծագործություններով փորձում էին հայության տարբեր շերտերի, մասնավորապես՝ երիտասարդության մեջ ներարկել ազատասիրական գաղափարներ, նրանց ոգևորելով հայ քաջ նախնիների՝ Հայկի, Արամի, Տիգրան Մեծի օրինակներով⁴:

¹ Վարանդեան Մ., շՅ. Դաշնակցութեան պատմութիւն, հ.Ա, Թեհրան, 1981, էջ 30:

² Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под ред М.Г.Нерсисяна, Ереван, 1983, с 174.

³ Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 30:

⁴ «Մեղու Հայաստանի», թիվ 23, 1869:

Արևելահայությունը միջոցներ էր որոնում օգնելու արևմտահայ եղբայրներին ու քույրերին: Այդ մտահոգությունից դրդված հասարակության որոշ շերտեր սկսեցին համախմբվել և ուղիներ որոնել:

Հայ ազատագրական շարժման հորձանուտներում ծնվեցին նախ ժողովրդին լուսավորելու և ազգային ինքնագիտակցության բերելու գաղափարները, իսկ ավելի ուշ՝ հրապարակ իջան հասարակական-քարեգործական, կրթամշակութային կազմակերպությունները, ազատագրական խմբակները, այնուհետև քաղաքական կուսակցությունները:

Վերոնշյալ կազմակերպությունում 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո քննարկում էին նաև ռուսահպատակ Հայաստանին առնչվող հարցեր:

Միացյալ Հայաստանի և հայության ազգային իդեերի իրագործման տեսլականը ի չիք դարձնելու նպատակով ցարական կառավարությունը 1840-60-ական թվականներին իրականացրեց վարչական մի շարք «բարեփոխություններ»: Դրա միջոցով հայահոծ նահանգները իրարից բաժանվեցին: Ստեղծվեցին խառը ազգային խայտաբղետ կազմ ունեցող և զարգացման տարբեր աստիճանների վրա կանգնած ժողովուրդներով բնակեցված վարչական նոր միավորներ:

Զբաղարարվելով դրանով՝ 1880-ական թվականների կեսերից սկսեցին փակվել հայ կրթական, քարեգործական, հասարակական կազմակերպությունները: 19-րդ դարի վերջերին հակահայ ալիքը նոր թափ ստացավ: Հակակառավարական կառույցներ հայտարարվեցին նաև հայ քաղաքական կուսակցությունները:

Ցարական կառավարության նպատակը պարզ էր: Նրանք ձգտում էին Այսրկովկասը, այդ թվում՝ Հայաստանը, դարձնել իր հումքային կցորդը և արտադրված ապրանքների շուկա, «այն կապելով Ռուսաստանի հետ քաղաքացիական և քաղաքական կապերով իբրև մեկ մարմին, և ստիպելով տեղի բնակիչներին խոսել, մտածել և զգալ ռուսաբար», ինչպես ժամանակին գրել էր գեներալ Պասկևիչը, սենատորներ Մեչնիկովն ու Պ. Կուտաիսովը¹:

Ցարական կառավարությունը ազգային փոքրամասնություններից պահանջում էր մոռանալ իրենց անցյալը և հավատարմորեն ծառայել Ռուսաստանին: Ցարի պատգամն ազգային փոքրամասնություններին բանաձևած ներկայացրել է Զ. Ավալովը. «Ձեզ համար աշխարհում կա միայն մեկ իշխանություն. դա ռուսական ցարի կառավարությունն է Պետերբուրգում և նրա ներկայացուցիչը՝ Թիֆլիսում: Ճիշտ է, դուք ունեք ձեր լեզուն, ազգային սովորությունները և այլ առանձնահատկություններ, դա լավ է, բայց դուք

¹ Колониальная политика Российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., т. I, М-Л, 1936, с. 21, հմմտ., **Բալայան Վ.**, Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, 2012, էջ 32:

հաղորդակցվում էք ռուսական քաղաքակրթության և ռուս ժողովրդի հետ, ուրեմն դուք պետք է լինեք ռուսներ կամ, առնվազն նմանվեք նրանց»¹:

Ինչպես Արևելյան այնպես էլ Արևմտյան Հայաստանում վերոհիշյալ զարգացումները քաղաքական պայմաններ ու նախադրյալներ են հասունացնում Դաշնակցության պատմական ասպարեզ իջնելու համար: Բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը նպաստել էր նաև բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի հաջողությունները, Եվրոպայում սոցիալիստական, իսկ Ռուսաստանում նարոդնիկական հեղափոխական գաղափարների ծավալումն ու տարածումը:

ՀՅԴ գաղափարախոսության մեջ ի սկզբանե առկա՝ ազգային նպատակների ու համամարդկային արժեքների նոր համադրությունը իրականում ոչ թե հայկական մշակույթի քաղաքական կյանքի դարավոր ավանդույթներից շեղվելու, այլ դրանց վերականգնման միջոցով ազտ ազգերի ու պետությունների ընտանիքում սեփական ժողովրդի տեղն ու դերը վերականգնելու համար փորձերի ամենավառ վկայությունն էր²:

Սոցիալական արդարության, ազգային իղձերի շուրջ հայ ժողովրդի միավորման, ազատագրական պայքարի միջոցով ստրկական շղթաների թոթափման և ազգային պետականության վերականգնման նպատակով և հայ ժողովրդի պահանջով ստեղծվեց ՀՅ Դաշնակցությունը:

Մինչ այդ՝ 19-րդ դարի 80-ական թվականներին, ռուսահպատակ հայաշատ վայրերում, մասնավորապես՝ Թիֆլիսում, ռուսական միջավայրում գոյություն ունեցած հեղափոխական խմբերի, տվյալ պարագայում նարոդնիկների ազդեցության տակ ձևավորվեցին ընդհատակյա մանր կազմակերպություններ, որոնք քննարկում էին ցարական Ռուսաստանի ապագա ճակատագիրը, բռնապետական կարգերի տապալման հնարավորությունները, արձարծում սոցիալական արտադրության հարցեր: Այդ խմբակներում որոշակի դերակատարություն ուներ Դաշնակցության հիմնադիրներից մեկը՝ Քրիստափոր Միքայելյանը, որին հաջողվեց այդ խմբակներում ներգրավված երիտասարդներին ուղղորդել դեպի ազգային հիմնահարցերն ու լծել հայրենիքի ազատագրության գործին:

«Ուժ» անունով նմանօրինակ մի խմբակ էլ 19-րդ դարի 80-ական թվականներին ստեղծվել էր Շուշիում³:

Հայ հեղափոխականների դաշնակցությունը ձևավորվեց շուրջ մեկուկես ամիս (1890թ. հուլիսի երկրորդ կեսից մինչև օգոստոսի վերջը) տևած հիմնադիր ժողովներում ընդունված՝ կուսակցության ստեղծման մասին որոշման, անվան հստակեցման, նպատակների ձևակերպման, վարչության կազմավորման

¹ Авалов З., Национальный вопрос на Кавказе, «Русская мысль», N 12, СПб, 1911, с. 27.

² Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 499:

³ Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 71:

միջոցով: Հիմնադիր ժողովները որոշեցին միավորել արևմտահայերի ազատագրության համար պայքարող բոլոր կազմակերպություններին, խմբակներին ու անհատներին և ստեղծել Հայ հեղափոխականների դաշնակցություն կուսակցությունը: 1890թ. սեպտեմբերի սկզբներին լույս տեսավ կուսակցության «Մանիֆեստը»¹:

Կազմվեց Դաշնակցության կենտրոնական վարչությունը, որի անդամներն էին Քրիստափոր Միքայելյանը, Սիմոն Զավարյանը, Աբրահամ Դաստակյանը, Հովհաննես Լոռու-Մելիքյանը և Լևոն Սարգսյանը²: Վերջինս ծագումով Արցախից է: Ծնվել և մեծացել է Շուշիում, բարձրագույն կրթությունը ստացել է Մոսկվայում: 1880-ական թվականներին գլխավորել է Մոսկվայի հայ ուսանողների հեղափոխական գործունեությունը: Լևոն Սարգսյանը դարձել է «Երկրականների» ուսանողական խմբի հիմնադիրը: 1890-ական թվականների սկզբներին նա վերադառնում է հարազատ Շուշի, դառնում Արցախում ՀՅԴ հիմնադիրներից մեկը: Շուշիի առաջադեմ ուժերի ճնշման տակ Լևոն Սարգսյանին նշանակում են թեմական դպրոցի տեսուչ: Թեմականում նա նոր աստիճանի հասցրեց ազգային դաստիարակության հարցը: Լևոն Սարգսյանի նկատմամբ հետադիմական ուժերը հալածանքներ են սկսում: Նրանք «Նոր դար» թերթի միջոցով մի արշավ սկսեցին շամշյանական գաղափարները ոչնչացնելու ուղղությամբ: «Նոր Դար»-ականներն ինտրիգների միջոցով Լևոն Սարգսյանին հեռացրին աշխատանքից՝ նրան մեղադրելով անասովածության մեջ: Լևոն Սարգսյանի հետ դպրոցից հեռացավ ողջ ուսուցչական կազմը: Ազգային հեղափոխական գործունեության համար դպրոցից հեռացրին մի խումբ աշակերտների՝ Սուրեն Մալխասյանին, Բ. Տոշյանին, Գրիգոր Գորգյանին, Դավիթ Տեր-Մկրտչյանին, Գևորգ Առստամյանին³:

Զնայած այդ ամենին՝ Լևոն Սարգսյանի և դաշնակցական մյուս գործիչների թողած հունդերը թեմականում պտղավորվեցին: Թեմականը դարձել էր ազատագրական շարժման գործիչների դարբնոց: Այստեղ կրթություն ստացան և որպես անհատականություններ ձևավորվեցին ազատագրական պայքարի պայծառ դեմքեր, դաշնակցական գործիչներ Եգոր Առստամյանը (Մենակ), Թուման Թումյանցը (Թորգոմ), Նիկոլ Պողոսյանը (Իշխան), Նիկողայոս Տեր-Հովհաննիսյանը (Նիկոլ Դուման), Սարգիս Հովհաննիսյանը (Արամ Մանուկյան), Վարդան Մեիրաբյանը (Խանասորի Վարդան), Գրիգոր Միրզաբեկյանը (Մածուն Խեչոն) և ուրիշներ:

Սկզբում նրանք ազատագրական գաղափարները սկսեցին տարածել աշակերտների և համերկրացիների շրջանում: Այդ նպատակով

¹ Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, էջ 501:

² Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 81:

³ Բալայան Վ., Շուշի, տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, 2017, էջ 352-353:

ազատագրական խմբակի ներկայացուցիչներն սկսեցին հրատարակել «Կոկոն» ձեռագիր թերթը¹:

Հեղափոխական քուրայում իմաստնացած այդ գործիչները, արցախահայության՝ բազում դարերի ընթացքում ազատագրական պայքարի և պետականաշինության ասպարեզում կուտակած հարուստ կենսափորձը Դաշնակցության ազգային գաղափարախոսության հետ համադրելով, կարողացան որակապես փոխել հայության մտածելակերպն ու ապագայի նկատմամբ ունեցած տեսլականը:

Մի առիթով Դրոն Նիկոլ Դումանի մասին գրել է. «Հայ ազատագրական պայքարի հերոսներուն մեջ չկար մեկը, որ անոր մտքի պատրաստութիւնը ունենար»², իսկ Աբրահամ Գյուլխանդարյանի վկայությամբ՝ «...հայ մարտական երիտասարդութեան պաշտամունքը» Նիկոլ Դումանն էր³:

20-րդ դարի սկզբներին արևմտահայության ազատագրական պայքարին նոր որակ հաղորդեցին դաշնակցական երկու գործիչներ՝ շուշեցի Արամ Մանուկյանը և քոսսնեցի Իշխանը:

1906թ. Վանի կուսակալ Թահիր փաշան, իր մոտ հավաքելով ոստիկանության և զինվորականության ղեկավարությանը, ասել է. « Շատ-շատ վտանգաւոր կացութեան մէջ ենք. մենք մեզ չխաբենք: Անշուշտ նույնքան, եթե ոչ անոր տասնապատիկը պահեստներ կը գտնուին լեռներու մէջ, Իշխանի տրամադրութեան տակ եւ վտանգաւոր Արամը՝ շրջաններն ալ զինուած ու ցրած ուժեր ունի եւ մեր գլխուն փորձանք կը պատրաստէ: ...Հոս միայն մէկ թշնամի կայ, որ գիտէ թէ ինչ կուգէ. Ան արժանի է փաշա կոչելու, Արամն է: Հոն լեռներու մէջ բէկ կայ, Իշխանն է: Ասոնք փեթակներու մայրը եւ այժմ թէ քաղաքի եւ թէ գիւղերու առաջնորդներն են...»⁴:

Դաշնակցության գաղափարների տարածման կենտրոններ դարձան Շուշիի կրթամշակութային հաստատությունները: Այդ շարքում իր ուրույն տեղն ունեւոեալական ուսումնարանը: Այդ դպրոցի շրջանավարտներ դարձան Միքայել Հովհաննիսյանը (Միքայել Վարանդյան) և Վահան Նավասարդյանը: Միքայել Վարանդյանը Ժնևի, իսկ Վահան Նավասարդյանը Պետերբուրգի համալսարանը ավարտելուց հետո իրենց ողջ կյանքը նվիրեցին հայ ժողովրդի ազատագրության և Դաշնակցության ազգանպաստ գործին:

Եթե Նիկոլ Դումանը, Արամ Մանուկյանը հայ ժողովրդի ազատագրական պայքարի և պետականության վերակերտման գործնական կազմակերպիչներ էին, ապա Հունան Դավթյանը, Միքայել Վարանդյանն ու Վահան

¹ *Աճեմեան Հ., Սգապսակ Իշխանի, Թիֆլիզ, 1916, էջ 7:*

² *«Հայրենիք», հմ. 8, Պոսթըն, 1964, էջ 49:*

³ *Գևորգյան Հ., Նիկոլ Դուման, Երևան, 2001, էջ 5, 62:*

⁴ *Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Ե, Երևան, 1990, էջ 267-268:*

Նավասարդյանը ըստ էության Դաշնակցության ազգային-քաղաքական և գաղափարական-ռազմավարական ուղին ուրվագծող գործիչներն էին:

Արցախում ազգային ազատագրական գաղափարների տարածման և հայ հեղափոխական ուժերի մեկտեղման գործում մեծ էր ՀՅԴ «Ապառաժ»-ի կառույցի դերակատարությունը:

Ազգային պետականությունից զրկված հայության հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային-կրթական կյանքն ինքնահոսի չմատնելու և այն ուղղորդելու նպատակով դաշնակցությունը տեղերում ստեղծեց ոստիկանական, դատական, կրթական մարմիններ:

1905թ. Պ. Բարսեղյանը ՀՅԴ Արցախի կառույցի մասին գրել է. «Գիւղերը կազմակերպւում էին համայնական ձեւով ամբողջ գիւղի համայնքը-գիւղական մարմինները ընտրւում էին ազդեցիկ մարդկանցից, պրոպագանդիստ-շրջիկները աշխատում էին, որ մարտիկների մէջ չլինեն վաշխառուներ եւ այլ վնասակար տարրեր, զանազան տեղեր եղել են ենթակոմիտէներ, զինուորական ներկայացուցիչներ, դատաւորներ: Այդ շրջանում կազմակերպութիւնը հանդիսացել էր իբրեւ մի կառավարութիւն իր բոլոր ֆունկցիաներով»¹:

Ցարական Ռուսաստանի հատուկ ծառայություններն այդ օրերին, հետևելով և ուսումնասիրելով ՀՅԴ պետականաշեն գործունեությունը, նկատել են, որ «...դաշնակցությունն ինքնին ներկայացնում է ինչ-որ պետություն պետության մեջ... ոչ մեկ հեղափոխական կուսակցություն (բացառությամբ դեռ ոչ լրիվ քողագերծված «Միջազգային հրեական միության») չունի այն բարդ կազմակերպությունը, ինչպես հայկական դաշնակցությունը: Նայելով կազմակերպության ուրվագծին՝ մենք տեսնում ենք հանրապետական ձևի պետական մեխանիզմի կմախք: Պետական այդ կմախքը, ի դեմս իր աշխատողների ներկայացնում է ոչ այլ ինչ, եթե ոչ հայկական պետության պաշտոնյաների կազմ...»²:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Հայաստանի ինքնավարության հետ կապված հարցը Դաշնակցության կողմից այնքան ակտիվ քննարկվում և հանրայնացվում էր, որ նույնիսկ հայ հեղափոխականների նկատմամբ նախատեսվող պատժամիջոցների վերաբերյալ ցարը կառավարության նիստ էր հրավիրել: Գոլիցինը առաջարկում էր հայ «անջատողականներից» ազատվելու նպատակով ազգովի նրանց ուղարկել Սիբիր: Սակայն զինվորական նախարար Կուրոպատկինը կանխեց խելահեղ այդ ծրագիրը: Նա, կառավարության նիստի ժամանակ դիմելով ցարին, ասաց. «-Ինչ էք կարծում, Ձերդ պայծառափայլություն, որքան կլինի հայ խռովարարների թիվը մի այնպիսի հայաբնակ կենտրոնում, ինչպիսին Շուշին է կամ Երևանը:

¹ Նիկոլայ ՀՅ Դաշնակցության պատմության համար, հ. Ե, Պեյրուր, 2007, էջ 303:

² Նույն տեղում, հ. Բ, էջ 332:

-Մոտավորապես 50 կլինի:

-Այո, համարյա այդքան:

-Ես ընդունում եմ նույնիսկ, - ավելացրեց նախարարը,-կրկնապատիկը՝ 100: Եվ կարծում եմ, որ «հայկական շարժումը» արմատախիլ անելու ամենալավ միջոցն է՝ կալանավորել այդ 100 խռովահույզներին, դուրս բերել երկրից և աքսորել Սիբիր: Դրանով դուք կատարելապես ազատած կլինեք երկիրը վտանգից՝ առանց աքսորելու մի ամբողջ ժողովուրդ»¹:

20-րդ դարի սկզբներին արցախահայությունն իր ազատության և անկախության ուղիներում հանդիպեց առավել ծանր իրավիճակների: Եթե նախկինում ցարական իշխանությունները հայության դեմ պայքարում էին ավելի «քաղաքակիրթ» միջոցներով, ընդունվում էին որոշումներ, օրենքներ, կամ էլ հետապնդվում էին առանձին անհատներ, կազմակերպություններ, ապա այս անգամ բռնարարքների ենթարկվեց ողջ ժողովուրդը:

Դարավերջին դա հիմնականում կապված էր 1903թ. հունիսի 12-ի Նիկոլայ Երկրորդի տխրահռչակ հրամանագրի հետ, որով բռնագրավեցին հայ լուսավորչական եկեղեցու կալվածքներն ու գույքը: Այսրկովկասի հայաշատ վայրերում ապստամբական տրամադրություններ էին տիրում: Հակակառավարական պայքարի մեջ ներքաշվեց նաև արցախահայությունը: 1903թ. սեպտեմբերի 8-ին նահանգապետ Լուցաուն 500 կոզակների ուղեկցությամբ Գանձակից հասնում է Շուշի և փորձում ի կատար ածել կառավարության որոշումը: Ժողովրդի դիմադրությանը կոզակները պատասխանեցին կրակոցներով: Ընդհարումների ժամանակ երկու կողմից կային սպանվածներ և վիրավորներ: Զինված դիմադրությունը շարունակվեց մի քանի օր: Ձերբակալվեց ավելի քան 120 մարդ: Քաղաքում ռազմական դրություն հայտարարվեց²:

Դաշնակցության «Ապառաժ»-ի կառույցը որոշեց վրեժխնդիր լինել արյունալի ընդհարումների կազմակերպիչների հետ:

Ահաբեկման ենթարկվեց Գանձակի փոխնահանգապետ Անդրեևը, Շուշիում սպանվեց Սախարովը, գավառապետ Շումակովիչը, Ժանդարմ Պողշիվալովը, գաղտնի ոստիկան Խասինը, գանձարանի պաշտոնյաներ Բադինը և Կոպրունովը³:

Ցարական իշխանությունների դեմ դիմակայության ալիքը չէր մարել, երբ 1905-1906թթ. նույն ուժերի կողմից սանձազերծվեցին ազգամիջյան ընդհարումներ:

Այդ ծանր տագնապի օրերին պետականությունից ու սեփական իշխանությունից զուրկ հայ ժողովրդի ինքնապաշտպանությունը

¹ *Բալայան Վ., Դրվագներ..., էջ 60:*

² *Ակնունդի Է., Դեպի կոիվ, Ժնև, 1904, էջ 235-241: Բալայան Վ., Դրվագներ ..., էջ 57:*

³ *Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1984, էջ 356, «Դրոշակ», հմ.2, 1905, էջ 31:*

կազմակերպելու բարդ և պատասխանատու գործը ստանձնում է Հայ Հեղափոխական Դաշնակցությունը: «Եվ մի ազգ, եթե ուզում է մնալ հարգված, եթե չի ուզում կորչել, պետք է լինի կազմ ու պատրաստ ինքնապաշտպանության համար, մանավանդ քաղաքական ցնցումների վայրկյաններում»¹: Այդ օրերին նման սկզբունքով էր գործում ՀՅԴ անվեհեր մարտիկ Նիկոլ Դումանը:

Այսրկովկասի հայաշատ վայրերը պաշտպանելու նպատակով ՀՅԴ-ը ժողով գումարեց, որտեղ Նիկոլ Դումանը ռազմական ծրագիր ներկայացրեց, ըստ որի՝ ամեն մի գյուղ և շրջան պետք է ստեղծեր ինքնապաշտպանական ջոկատ, սակայն խմբապետը պետք է լիներ ոչ տեղացի փորձառու ֆիդայիներից մեկը:

Նիկոլ Դումանը քաջ գիտակցում էր, որ ֆիդայական ջոկատներով անհնարին է դիմակայել թուրք-թաթարական բազմահազար զինյալ ավազակախմբերին և նրանց աջակցող ցարական կանոնավոր զորքերին: Ուստի պետք է ստեղծել կանոնավոր ինքնապաշտպանական բանակ, որը պետք է ունենար համապատասխան կառուցվածք, հստակ սահմանվեին հրամանատարների և զինվորների պարտականությունները: Այդ նպատակով մշակվում և շրջանների ինքնապաշտպանական խմբերին առաջարկվում է 4 մասերից և 33 կետերից բաղկացած «Հրահանգ» շրջաբերականը²: Առանց ազգային պետության գոյության Դաշնակցությանը հաջողվել էր ստեղծել 16 հազարանոց բանակ:

Մուսավաթական Ադրբեջանի հիմնադիրներից մեկը՝ Ադաևը, Դաշնակցությանը ցարական իշխանությունների առջև վարկաբեկելու նպատակով 1906թ. փետրվարի 27-ին Կովկասի փոխարքայի մոտ խորհրդակցության ժամանակ նշել է. «Դաշնակցությունը 15 տարի գոյութիւն ունի, իմացանք որ հիանալի մաուզերներ ունի, մի ամբողջ արմիա, այն ժամանկին կուում էր Թիւրքիայի դէմ, երէկ կառաւարութեան դէմ, էսօր՝ մեր թուրքերիս դէմ...»³:

ՀՅԴ Արևելյան բյուրոն Արցախում կազմում է Զինվորական մարմին, որը զլխավորում էր դշլաղեցի Սարգիս Մեհրաբյանը (Խանասորի Վարդանը): Նրան հանձնարարված էր կազմակերպել Արցախի և Սյունիքի հայության ինքնապաշտպանական մարտերը: Զինվորական մարմնի որոշմամբ՝ Արցախն ըստ գավառների բաժանվեց պաշտպանական շրջանների, որոնց հրամանատարներ նշանակվեցին փորձառու ֆիդայիներ: Վարանդայի պաշտպանությունը կազմակերպում էին Հայրում Վարդանյանը, Արամայիսը (Միսաք Տեր-Դանիելյանը) և Մաժուն Խեչոն: Խաչենի շրջանի հրամանատարն էր Համազասպը:

Զինվորական շրջաններն իրենց հերթին բաժանվում էին ենթաշրջանների⁴:

¹ Նիկոլ Դուման, Նախագիծ ինքնապաշտպանության, Երևան, 1992, էջ 7:

² Գևորգյան Հ., Նիկոլ Դուման, Երևան, 2013, էջ 244:

³ «Արշալոյս», հմ. 46, 2 մարտի, Թիֆլիս, 1906:

⁴ Ստեփանյան Գ., Համազասպ Սրվանձտյանց, Երևան, 2016, էջ 90-91:

Նման գործելակերպն Այսրկովկասի տարբեր բնակավայրերում թուրքերին ստիպեց պարզել սպիտակ դրոշակ և սկսել բանակցություններ: Այդ ամենի շնորհիվ հայությունը փրկվեց վերահաս մասայական ջարդերից:

1917թ. հոկտեմբերյան պետական հեղաշրջումից հետո նախկին ռուսական կայսրության ողջ տարածքում քաղաքական նոր իրավիճակ է ստեղծվում: Տեղերում զգալի էր անիշխանության մթնոլորտը: Նախկին իշխանության մարմինները կազմալուծվեցին: Արցախի բնակչության մտահոգությունը փարատելու, երկրամասում կարգ ու կանոն հաստատելու իրավասու իշխանություն ստեղծելու նպատակով ՀՅԴ Արցախի կառույցը նպատակահարմար գտավ, գործող բոլոր քաղաքական ուժերի ջանքերի համադրությամբ, կյանքի կոչել լիազոր մի մարմին, «որ գործելու է իբրև Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր տեղական իշխանություն և որի հիմնական նպատակն էր կազմակերպել ժողովրդին, վերջ տալ գլուխ բարձրացրած անիշխանությանը և բոլոր միջոցներով պահպանել խաղաղությունը և համերաշխությունը երկու հարևան ժողովուրդների՝ հայերի և մուսուլմանների միջև»¹: «Քաղաքական լուրջ անհրաժեշտություն էր նույնպես, որ Ղարաբաղի հայության կառավարող օրգանն իր կազմով լիներ այնպիսին, որ կարողանար հավատ և վստահություն ներշնչել նաև հարևան մուսուլմանությանը»²:

Նախախորհրդարանական աշխատանքներից հետո՝ 1917թ. դեկտեմբերի 24-ին, Շուշիում կայացած հայ քաղաքական ուժերի հավաքն ստեղծեց տեղական իշխանության մի մարմին, որն անվանվեց «նոր հեղափոխական կուսակցությունների և կազմակերպությունների ժամանակավոր խորհուրդ»: Այդ մարմինը հետագայում անվանվեց Միջկուսակցական բյուրո: Այն օժտված էր օրենսդիր և գործադիր գործառույթներով: Որոշվեց կառավարության մեջ ներառել, համամասնական սկզբունքներով, տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների: Փոխադարձ համաձայնությամբ՝ 5 պորտֆելներ տրվեցին դաշնակցությանը, իսկ մնացած կուսակցությունները՝ մենշևիկները, էսեռները, բոլշևիկները ներկայացվեցին երեքական անդամներով: Խորհրդի նախագահ ընտրվեց դաշնակցական Հայրապետ Մուսայելյանը³:

Վերոհիշյալ փաստերն ու դեպքերի զարգացման ընթացքը մեզ հիմք են տալիս եզրակացնելու, որ 1917թ. դեկտեմբերին, մի քանի ամիս առաջ, դեռևս մինչև անդրկովկասյան 3 հանրապետությունների ծնունդը, Արցախում դրվեց պետական մի միավորի հիմք, որն ամբողջական տեսք ստացավ արցախահայության առաջին համագումարում 1918թ. հուլիսին: Այն ուներ

¹ **Թումյան Հ.,** *Դեպքերը Լեռնային Ղարաբաղում (1917-20), պատմական ակնարկ, Երևան, 2008, էջ 51:*

² *Նույն տեղում, էջ 50:*

³ **Բալայան Վ.,** *Դրվագներ, էջ 74-75:*

պետությանը հատուկ բոլոր ինստիտուտները՝ օրենսդիր մարմին, գործադիր դատական իշխանություն, բանակ, մայրաքաղաք:

Պատահական չէ, որ 1918թ. ապրիլին Անդրկովկասյան սեյմը Լեոնային Ղարաբաղին տվել էր ազատ շրջանի կարգավիճակ¹: Մինչև Արցախում խորհրդային կարգերի հաստատումը արցախահայությունը, դաշնակցության գլխավորությամբ պայքարելով Թուրքիայի և Ադրբեջանի զավթողական ծրագրերի դեմ, պաշտպանեց պետականությունը՝ հույսով, որ կգա նաև ՀՀ հետ վերամիավորման ժամը:

1917-1920թթ. Արցախում ազգային պետության գոյության փաստի հետ խորհրդային տարիներին բոլշևիկները ստիպված հաշվի են նստել՝ Լեոնային Ղարաբաղի հայությանը տալով ինքնավար կարգավիճակ:

Ոչ հեռավոր անցյալի պատմական այս իրադարձությունները խոսում են այն փաստի մասին, որ Արցախը որևէ կապ չի ունեցել Ադրբեջանի 1918-1920թթ. Հանրապետության հետ, և այսօր այս հանգամանքը պետք է ծառայեցվի ԱՀ միջազգային ճանաչմանը:

Արցախում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո չնայած դաշնակցական գործիչները հիմնականում հեռացել էին երկրամասից այնուամենայնիվ, Արցախի ազատագրության և Հայաստանի հետ վերամիավորման հարցը կուսակցության համար մնում էր առօրեական: Այդ կապակցությամբ Ռուբեն Տեր-Մինասյանը գրել է. «ՀՀ Դաշնակցությունը, իբրև հայ ժողովրդի հույսի և հավատի խտացում, չի դավաճանած Գանձակ-ղարաբաղցիին, ընդառաջ է գացած անոր բաղձանքին և ամեն տագնապալի վայրկյանին իսկ չէ մոռացած զայն: Այսօր ալ իր հալածական վիճակին մեջ, իր ծրագրին մեջ ունի հին Արցախ գավառներուն ազատագրումը: Այդ ծրագիրն ինքը չէ հղացած, այլ քաղած է Ղարաբաղի ժողովրդեն կամքեն»²:

1920-ական թվականների սկզբներին արցախահայության ազատագրական պայքարը համակարգում էր Թավրիզում 1921թ. ստեղծված «Ղարաբաղի ազատագրման» միությունը: Դաշնակցության ջանքերով, գաղտնի ճանապարհով Արցախում են հայտնվում այդ միության գործիչները, որոնք տեղում հայրենասեր ուժերի հետ փորձում էին ժողովրդի մեջ կենսունակ պահել ազատագրական շարժման գաղափարները:

Մինչև 1929թ. Թարթառի մերձակա անտառներում, Ջրաբերդում, Էրքեջ, Բուզլուխ և Գետաշեն գյուղերի մոտակայքում Գրիգոր Դանիելյանի, Մովսես Քոթիկի, Մերգեյ Բալայանի, Ալեքսանդր Տեր-Սարգսյանի գլխավորությամբ գործում էին զինված ջոկատներ³:

¹ «Մշակ», հ. 144, 25 հուլիսի, 1918:

² Ռուբեն, Գանձակ Ղարաբաղի վեճը, «Դրոշակ», հմ.2, 1926, էջ 52:

³ Բալայան Վ., Դրվագներ..., էջ 257:

1925-1927թթ., Արցախում ապստամբական շարժումներ կանխելու նպատակով, Ստեփանակերտում, Շուշիում և շրջկենտրոններում մասսայական խուզարկություններ և ձերբակալություններ են կատարվել: Բռնի ուժով հայ գյուղացիության շրջանում եղած զենքը և զինամթերքը բռնագրավվում էր¹:

1920-ական թվականների կեսերին Դաշնակցության ջանքերով Արցախում հակաադրբեջանական շարժումը ղեկավարելու նպատակով, ստեղծվել է «Ղարաբաղը Հայաստանին» միությունը²: Այն իր բջիջներն ուներ ոչ միայն Ղարաբաղի, այլ նաև Գանձակի հայկական շրջաններում: Միության հետ համագործակցության համար 500 հոգու ձերբակալվել են³:

Ազատագրական շարժման գործիչները Շուշիի շրջանում պահեստարհեստանոց էին կազմակերպել: 1930թ. արտակարգ հանձնաժողովի կողմից ձերբակալվել են 17 զինագործ վարպետներ: Առգրավվել է 6 թնդանոթ, 30 գնդացիներ և այլ տեսակի զենքեր ու զինամթերքներ: Ապստամբել էին Խծաբերդի բնակիչները: Զորքերը փորձել են ճնշել այն, բայց չի հաջողվել: Արցախում համաժողովրդական հուզումները ճնշելու համար Բաքվից մեծ քանակությամբ զորքեր են տեղափոխվել⁴:

1931թ. Միր Զաֆար Բաղիրովը ԼՂԻՄ մարզկոմի ղեկավարությանը մեղադրեց նացիոնալիզմի, նացիոնա-ուկլոնիզմի, Լեոնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու փորձերի և Դաշնակցական գաղափարների դեմ չպայքարելու մեջ⁵: Նրա հրահանգով 1937թ. մարտ, ապրիլ ամիսներին Ստեփանակերտում «բացահայտվեց», այսպես կոչված նացիոնալիստական հակախորհրդային խմբավորում: Մի շարք պաշտոնյաների հեռացրին աշխատանքից և դատի տվեցին՝ մեղադրելով դաշնակցական կուսակցության հետ ունեցած կապերի, Ադրբեջանի կոմկուսի կենտկոմին և կառավարությանը զրպարտելու, ԼՂԻՄ շահերը Ադրբեջանի Հանրապետության շահերին հակադրելու մեջ⁶:

Միր Զաֆար Բաղիրովի կողմից շրջանառության մեջ դրվեց «Ադրբեջանի անբաժանելի մաս հանդիսացող Լեոնային Ղարաբաղ» արտահայտությունը: Դա առաջօր օգտագործվում է Ադրբեջանի տարբեր տրամաչափի պաշտոնյաների կողմից:

Չնայած բռնաճնշումներին Դաշնակցության գաղափարները ժողովրդի մեջ ապրեցին և 1980-ական թվականներին բարենպաստ պայմաններում հանրային ընկալման առավել լայն շրջանակներ ունեցան:

¹ **Բալայան Վ.**, *Դրվագներ...*, էջ 260:

² Հալածանքներ Ղարաբաղում 1927թ. *Դրոշակ», *հմ.12, 1927, էջ 383, Ա.Արծրունի*, Հակառակորդի քանակում, «Դրոշակ», *հմ.10, 1828, էջ 251*:

³ **Բալայան Վ.**, *Դրվագներ...*, էջ 261:

⁴ **Սարուր**, Կացությունը Ադրբեջանի մեջ, «Դրոշակ», *հմ.4, 1930, էջ 120*:

⁵ «Заря Востока», 24 мая, 1931.

⁶ **Ռուբեն**, Գանձակ Ղարաբաղի վեճը, «Դրոշակ», *հմ.2, 1926, էջ 52*:

1985թ. մինչև 1988թ. փետրվարը ՀՀ և ԼՂԻՄ բնակավայրերում հանդես եկան քաղաքացիներ, որոնք փորձում էին Արցախը խորհրդային Հայաստանի հետ վերամիավորման հարցը նորից առարկայական դարձնել: Ըստ էության այդ մարդիկ էլ դարձան Արցախյան շարժման կազմակերպիչներ:

Իգոր Մուրադյանի կարծիքով նրանց թիվը հասնում էր մոտ 100-ի, որոնցից 32-ը դարձան Դաշնակցության մեծ ընտանիքի անդամներ¹:

Այդ երիտասարդներից շատերը հետագայում դարձան Դաշնակցության Արցախի կառույցի հիմնադիրներ և փայլուն մարտական ճանապարհ անցան: Շատերն էլ այդ ճանապարհին իրենց կյանքը նվիրաբերվեցին:

Զենքի առաջի խմբաքանակը Արցախ հասավ 1988թ. ՀՅԴ արտասահմանյան կառույցների միջոցով: Իգոր Մուրադյանը հետագայում գրել է. «Ըստ էության, զենքի հարցն արմատապես լուծուեց 1989թ. վերջին ՀՅ. Դաշնակցութեան կուսակցական կառույցների կազմակերպմամբ»²:

Զինված պայքարին զուգընթաց անհրաժեշտ էր նաև որոնել և գործել հարցի լուծման իրավական ճանապարհները:

Այդ նպատակով կազմակերպվեց ժողովրդական հանրաքվե, այնուհետև կայացվեցին խորհրդային, կուսակցական մարմինների համապատասխան որոշումներ: Այդ ամենի բարձրակետը դարձավ 1988թ. փետրվարի 20-ին կայացած մարզխորհրդի արտահերթ նիստում ընդունված ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ի հետ վերամիավորման պատմական որոշումը: Սակայն դեպքերը այլ հունով ընթացան:

Արդեն ակնհայտ էր, որ ԽՍՀՄ –ը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, կդադարի գոյություն ունենալուց:

1991թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանի գերագույն խորհուրդը հռչակագիր ընդունեց 1918-1920թթ. մուսավաթական հանրապետության սահմաններում անկախ պետականության վերականգնման մասին³: Մյուս կողմից էլ ՀՀ ՀՀՇ-ական իշխանությունը լիովին չէր կողմնորոշվել Հայաստանին Արցախի վերամիավորման՝ համայն հայության պահանջի հարցում: 1991թ. սեպտեմբերի 2-ին Մոսկվայում կայացած ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ նստաշրջանում Լ. Տեր-Պետրոսյանը միայն պահանջեց բարձրացնել ինքնավար մարզի կարգավիճակը⁴:

Ստեղծված անորոշության պայմաններում ապագա արհավիրքներին դիմակայելու, բնակչության անվտանգությունն ապահովելու Արցախի ճակատագիրը կանխորոշելու համար շարժման ղեկավարները պահի առումով ճիշտ ու հստակ որոշում կայացրին:

¹ *Բալայան Վ., Դրվագներ..., էջ 261:*

² «Ազրալ», քաղաքիկ համար, փետրվար, Քելրուր, 1998, էջ 126:

³ «Бакинский рабочий», 31 августа, 1991.

⁴ *Արутյան В., События в Нагорном Карабахе, Хроники, т. IV, Ереван, 1994, с. 71.*

1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցած ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջան, որտեղ ընդունվեց «Հռչակագիր ԼՂՀ հռչակման մասին»¹: Այդ որոշումը ամրապնդվեց 1991թ. դեկտեմբերի 10-ին կազմակերպված հանրաքվեով: Հարցման ենթարկվածների 99.89 տոկոսն արտահայտվեց ԼՂՀ հռչակման օգտին²: Հաջորդ քայլը պետական համակարգի ձևավորումն էր: Այդ բախտորոշ ժամանակահատվածում դաշնակցությունը իր վրա պատասխանատվություն վերցրեց և գլխավորեց Արցախում պետականության վերակերտման գործընթացը:

1991թ. դեկտեմբերի 28-ին կայացան ԼՂՀ գերագույն Խորհրդի առաջին ընտրությունները, որի արդյունքում ընտրվել են 56 պատգամավոր: Նրանցից 23-ը Դաշնակցականներ էին: Անկուսակցական պատգամավորների զգալի մասը հարում էր Դաշնակցությանը: 1992թ. հունվարի 8-ին դաշնակցական Արթուր Մկրտչյանն ընտրվեց ԳԽ առաջին նախագահ:

Չնայած Գերագույն խորհրդի պատգամավորները մեծամասնությամբ ՀՅԴ անդամներ էին, ԱՀ-ում գործող բոլոր քաղաքական ուժերը մեկտեղելու, թշնամու դեմ համաժողովրդական ճակատ ստեղծելու և ՀՀԾ-ական իշխանությունների հետ կանոնավոր հարաբերություններ ստեղծելու նպատակով նախարարական պորտֆելները, այդ թվում՝ վարչապետի, հանձնվեցին հանրապետությունում գործող այլ ուժերի ներկայացուցիչներին:

Անհրաժեշտ էր գրոյից ստեղծել պետական մի համակարգ, որը պատերազմական պայմաններում պետք է կենսունակ լիներ: Նորաստեղծ պետական այդ համակարգը, ժողովրդին առաջնորդելով, անհնարինը հնարավոր դարձրեց մի՝ քանի անգամ գերազանց ուժեր ունեցող թշնամու նկատմամբ ապահովելով փայլուն հաղթանակ:

Հետպատերազմյան տարիներին (1994-2007թթ.) Դաշնակցությունը իր պետականաշեն գործունեությունը ծավալեց ընդդիմադիր դաշտում՝ փորձելով օրվա իշխանություններին մղել ժողովրդանպաստ որոշումների կայացմանն ու իրագործմանը:

2007-2020թթ. Դաշնակցությունը դարձավ իշխանության հետ համագործակցող ուժ: Դժվարություններով հանդերձ, և երբեմն էլ իշխանությունների կողմից Դաշնակցությանը մինչև վերջ չընկալելու, և այս կամ այն կարևոր հարցերի շուրջ կուսակցության տեսակետների անտեսման պարագայում էլ, ընդհանրության մեջ այդ տարիները մեր գնահատականով արգասաբեր էին:

¹ «Հայաստանի Հանրապետություն», 3 Սեպտեմբերի, 1991:

² О некоторых политико-правовых аспектах проблемы Нагорного Карабаха, Ереван, 1991, с.15-16.

Երկիրը ունեցավ ներքին քաղաքական կայունություն, տնտեսական համաչափ զարգացում: ԱՀ միջազգային ճանաչման գործում որոշակի քայլեր կատարվեցին:

2020թ. մարտի 31-ին ԱՀ-ում կայացած նախագահի և Ազգային Ժողովի ընտրություններից հետո հանրապետությունում ձևավորվում է նոր իշխանություն:

Հաշվի առնելով ներքին և արտաքին քաղաքականության ասպարեզում «Ազատ հայրենիք, ՔՄԴ» դաշինքը և «Միասնական հայրենիք» կուսակցությունները ներկայացնող ուժերի կողմից ձևավորված նոր իշխանությունների գործելաճը և երկիրը կառուցելու հարցում Դաշնակցության տեսլականի հետ անհամադրելի լինելու հանգամանքը՝ ՀՅԴ-ն նորից սկսեց գործել ընդդիմադիր դաշտում: Պատերազմական գործողությունների ընթացքում հայկական կողմի պարտությունը առարկայական ձևով ցույց տվեց Դաշնակցության մտահոգությունների իսկությունը: ԱՀ տարածքի 75 տոկոսը անցավ Ադրբեյջանի գերիշխանության տակ: Հազարավոր մարդիկ զոհվեցին կամ դարձան հաշմանդամ:

Հետպատերազմյան քաղաքական, տնտեսական, փլուզված անվտանգային համակարգի գոյության պայմաններում ՀՅ Դաշնակցությունը շարունակում է հավատարիմ մնալ իր դավանած պետականամետ գաղափարներին և աշխարհասփյուռ կառույցներով կանգնած է արցախահայության ու ԱՀ կողքին:

Այսպիսով պատմական ասպարեզ իջնելով 19-րդ դարի վերջերին ՀՅ Դաշնակցությունը հայ ժողովրդի ուժերը մեկտեղելու, հայրենիքը ազատագրելու և հայոց պետականությունը վերակերտելու համար նպատակաուղղված գործունեություն էր ծավալել:

Հետևողական այդ պայքարի արդյունքում ՀՅ Դաշնակցությանը 20-րդ դարում հաջողվել էր երկու անգամ՝ 1917-20 թվականներին և 1991թ. սեպտեմբերի 2-ին, Արցախում վերականգնել պետականությունը: Առավել մեծ ջանքեր է պահանջվում արյուն և քրտինքի միջոցով ձեռք բերած պետականությունը պահել և զարգացնել:

Տարածքային և մարդկային ահռելի կորուստներ կրած ԱՀ դեռևս դժվարին ճանապարհ ունի անցնելու: Այդ ամենը հաղթահարելու համար ՀՅ Դաշնակցությունը իր աշխարհասփյուռ կառույցներով կանգնելու է արցախահայության և ԱՀ կողքին:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյանը:

ՀՏԴ 32

Քաղաքագիտություն

Հրայր ՓԱՇԱՅԱՆ

ԱրՊՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.

E-mail: hrayr.pashayan@mail.ru

ՄԵԾ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
(ԾԱԳՈՒՄԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ,
ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ)¹

Ժամանակակից աշխարհում սեփական քաղաքացիների անվտանգությունը, իրավունքների ու շահերի պաշտպանությունը յուրաքանչյուր պետության գոյության իմաստն ու առաքելությունն է հանդիսանում, որի համար մշակվում և կյանքի են կոչվում տարբեր անվանումներով, գաղափարներով ու հիմնադրույթներով ծրագրեր, ինչպես մարտահրավերներին դիմակայելու, այնպես էլ կարճաժամկետ ու երկարաժամկետ նպատակների իրականացման համար:

Հոդվածում ներկայացվում են «Մեծ ռազմավարություն» հասկացության ծագումն ու էությունը՝ տարբեր հեղինակների մեկնաբանությունների ուսումնասիրությամբ ցույց տալով հասկացության վերաբերյալ ձևավորված հիմնական տեսակետները, պատմական դրսևորումներն ու դրանց արդի օրինակները

Բանալի բառեր՝ ռազմավարություն, մեծ ռազմավարություն, հիմնական ռազմավարություն, մարտահրավերներ, պետական շահ, ռեսուրսներ, կառավարում իշխանություն

¹ Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության № scs20-003 գիտական թեմայի շրջանակներում:

Г. ПАШАЯН**БОЛЬШАЯ СТРАТЕГИЯ
(ПРОИСХОЖДЕНИЕ, СУЩНОСТЬ, ОСНОВНЫЕ
ВАРИАНТЫ ТОЛКОВАНИЯ)**

В современном мире безопасность граждан, защита их прав и интересов - это смысл и миссия каждого государства, для которого разрабатываются, реализуются программы с разными названиями, идеями и принципами как для решения задач, так и для достижения краткосрочных и долгосрочных целей.

В статье представлены истоки и сущность концепции «Большой стратегии», изучены трактовки разных авторов, показаны основные взгляды на концепцию, исторические проявления и их современные примеры.

Тем временем французская дипломатия сосредоточила свое внимание на двух проблемах: на смешанной комиссии и на подготовке проекта соглашения между компанией Суэцкого канала и вице-королем⁵. В решении этих проблем положительную роль сыграло ответное письмо императора султану, где говорилось о заинтересованности Наполеона III в строительстве Суэцкого канала, о его значении для торговли и согласия Франции создать смешанную комиссию. Мустье после

¹ Мустье — Друэн де Люис. Пера 5 апреля 18645 г. Дипломатические документы.

² Друэн де Люис — Мустье. Пера 5 мая 1865 г. Дипломатические отношения.

³ Друэн де Люис — Мустье. Париж 19 мая 1865 г. Дипломатические документы.

⁴ Мустье — Друэн де Люис. Пера 31 мая 1865 г. Дипломатические документ

⁵ Три депеши были посвящены этому: Друэн де Люис — Мустье. Париж 9 июня 1865 г., 14 июля 1865 г. и Мустье — Друэн де Люис, 4 июля 1865 г. Дипломатические документы.

встречи с султаном отметил: «.. есть основание надеяться, что отныне завершение этого дела не встретит серьезных возражений»¹.

Проекта соглашения, где были учтены замечания Лессепса, с которыми он ознакомился во время своего пребывания в Константинополе, подготовил Мустье². В нем были также учтены результаты совместной работы с генеральным секретарем МИД Турции и, разумеется, пожелания французского правительства. Али-паша ознакомился с этим проектом и одобрил его. Мустье³ информировал Друэн де Люиса: «.. проект, представленный Али-паше, не вызвал возражений. Следовательно, мы можем надеяться на то, что пришли к завершению этой фазы переговоров относительно Суэцкого канала»⁴. Проект был направлен и в Александрию, французскому консулу⁵ с тем, чтобы он ознакомил с ним Лессепса. Что касалось смешанной комиссии, то с обеих сторон были назначены ее комиссары: с французской — Лебастер и Малле⁶, с турецкой — Сервел-эффенди, который занимал посты первого секретаря турецкого посольства в Париже и Петербурге. Мустье, характеризуя его, отмечал: «...он является одним из самых способных среди всех турецких функционеров. Этот выбор делает честь оттоманскому правительству и свидетельствует о его очевидном желании сделать нам приятное»⁷ французские комиссары отправились в Египет в середине января 1866 г.⁸. К этому же времени ожидалось прибытие эффенди.

На завершающей стадии переговоров в дипломатической переписке принял участие Макс Отрей, генеральный консул Франции в Александрии. Он замыкал треугольник Париж-Константинополь-Александрия. Последние пункты соглашения Лессепс составлял именно с ним, а Отрей, в свою очередь, информировал о них Друэн де Люиса и Мустье.

Как уже отмечалось, Мустье направил проект соглашения консулу для того, чтобы последний пригласил и ознакомил с ним Лессепса. Во время обсуждения у Лессепса возникли вопросы относительно юрисдикции и, в частности, о том, что споры между вице-королем и компанией должны рассматриваться в суде. Но, по настоянию консула, Лессепс признал, что иначе и не может быть, поскольку компания, будучи египетской, подчинена законам данной страны. Другим предметом спора были земли, отданные в распоряжение компании. Лессепс принимал цифру в 10 тыс. гектаров, т. е. то, что было отражено в арбитражном решении императора, и не допускал уменьшения этой цифры смешанной комиссией. Однако Лессепс, спустя день после обсуждения, объявил Отрею, что он настроен рекомендовать административному совету компании принять за основу проект

¹ Мустье — Друэн де Люис. 25 июля 1865 г. Дипломатические документы.

² Мустье — Друэн де Люис. Пера 22 ноября 1865 г. Дипломатические документы.

³ Мустье — Друэн де Люис. Пера 14 декабря 1865 г. Али-паша показал проект, подготовленный Мустье своим коллегам по правительству, ознакомившись с ним они также одобрили его.

⁴ Мустье — Друэн де Люис. Пера 3 января 1866 г. Дипломатические документы.

⁵ Мустье — Друэн де Люис. Пера 20 декабря 1865 г. Дипломатические документы.

⁶ Мустье довел до сведения Али-паши о назначении Лебастер и Малле 5 декабря 1865 г. Мустье — Друэн де Люис. Пера 5 декабря 1865 г. Дипломатические документы.

⁷ Мустье — Друэн де Люис. Пера 29 ноября 1865 г. Дипломатические документы.

⁸ Друэн де Люис — Мустье. Париж 29 декабря 1865 г. Дипломатические документы.

соглашений, подготовленный Мустье. В этой ситуации консул считал своим долгом уговорить вице-короля не быть «слишком требовательным и позволить своему комиссару определенную свободу действий».

Вместе с тем Отрей резонно полагал, что навряд ли смешанная комиссия, зная о 18-месячной «страстной борьбе» по вопросу о землях, пойдет навстречу желаниям Лессеписа относительно цифры арбитражного решения. Консул заключал: «Лессепис решительно отказался уступить в этом пункте. Его доводы основывались на письме императору от 21 октября 1865 г. и на согласии Друэн де Люиса по этому вопросу»¹.

Мустье ознакомил с отчетом консула Друэн де Люиса, а последний, отправляя комиссаров Франции для работы в смешанной комиссии, предписывал им «не просто установить границы, отмеченные в арбитражном решении, но и приступить к переоценке земель, конечные результаты которых могут быть выше или ниже установленной цифры, т.е. 10 тыс. га². Причем министр предписывал придерживаться этой линии не только комиссарам, но и президенту компании. Такая позиция французского правительства принесла свои плоды. Уже в следующей депеше Отрей сообщал Друэн де Люису, что «все трудности относительно Суэцкого канала решены специальной конвенцией между вице-королем и компанией». Дело в том, что вице-король через консула предложил Лессепису уступить область Уади, которая была куплена еще Саид-пашой. Несмотря на все «отвращение» к этому предложению, Лессепис согласился, но при условии большой компенсации. Этот компромисс привел к соглашению между двумя сторонами.

Рассмотрим его основные моменты. Египетское правительство займет земли, зарезервированные за компанией; все стратегические точки, которые оно посчитает нужным для защиты страны, и установит на этих землях свою юрисдикцию. Пресноводный канал передавался египетскому правительству со всеми прилегающими к нему землями, на которых правительство обязывалось поддерживать и создавать необходимые плантации. Область Уади была передана вице-королю. Компенсируя уступки, компании, египетское правительство обязалось выплатить 10 млн. франков за покупку пресноводного канала по арбитражному решению императора и 10 млн. за область Уади. Сумма ущерба, принятая египетским правительством, составляющая 57.750.000 франков будет выплачена компании с 1 января 1867 г. до 1 декабря 1869 г., т. е. за 36 месяцев с ежемесячной выплатой в 1.604.166 франков. По мнению консула, конвенция была выгодной для обеих сторон. Египетское правительство пользовалось всеми правами суверенитета на всем протяжении морского канала, оно приобрело в свое владение пресноводный канал и земли, пригодные для пахоты и, наконец, важнейшая область Уади вновь возвращалась Египту как обновленная провинция. Это было заслугой компании, которая вдохнула жизнь в область некогда покинутую.

Компании также должна была быть довольной новой конвенцией и в первую очередь тем, что были устранены причины проблемы, которые возникали раньше и могли бы возникнуть в любое время между компанией и египетским

¹ Отрей, генеральный консул Франции в Александрии — Мустье. Александрия 7 января 1866 г. Дипломатические документы.

² Друэн де Люис — Отрею. Париж 18 января 1866 г. Дипломатические документы.

правительством.

Лессепс, по мнению Отрея, поступил мудро, приняв «реальные и непосредственные» выгоды. Согласившись на выплату 57 млн. франков в течение трех лет вместо четырнадцати, он получил прибыль в сумме 15—18 млн. франков. Но что самое главное, он смог выполнить многочисленные обязательства, подписанные с предпринимателями. Другими словами, он остался с активом в 150 млн. франков, которые обеспечивали ему ведение строительства до 1869 г. Если к этому времени строительство канала не будет завершено, то будет легко предусмотреть следующие финансовые потребности. Отрей также подчеркнул, что это решение с удовлетворением было воспринято в Египте, поскольку оно поставило точку на антагонизме в Египте и наконец успокоило европейскую политику ¹.

30 января 1866 г. в 23 ч. соглашение было подписано и послано вице-королем Египта в Константинополь для одобрения. Получил экземпляр соглашения и Друэн де Люис. Али-паша, министр иностранных дел Турции, одобрил его². Наконец, после этих процедур 22 февраля за подписью Исмаил-паши — вице- короля Египта и Фердинанда де Лессепса — президента компании появилось генеральное соглашение из 17 статей³, а 19 марта 1866 г. султан своим фирманом это соглашение утвердил⁴. Итак, строительство Суэцкого канала было санкционировано, что было большим успехом французской дипломатии- Концентрированным выражением этого успеха можно считать участие императрицы Евгении в торжественном открытии Суэцкого канала, которое продолжалось три дня, с 17 по 20 ноября 1869 г. 135 кораблей во главе с яхтой императрицы «Эгль» вошли в Суэцкий канал. Наполеон III при открытии сессии парламента 29 ноября 1864 г. подчеркнул: «Научный прогресс сближает народы: Франция и Италия могут протянуть друг другу руки через туннель в Альпах, Средиземное и Красное моря соединены Суэцким каналом. Вся Европа представлена в Египте при открытии этого гигантского предприятия. Отсутствие императрицы на сессии связано с тем, что она свидетельствует симпатии Франции в отношении предприятия, которое обязано своим возникновением настойчивости и гению Француза» (подчеркнуто мною, речь идет о Лессепсе. — В. А.).

Депутат Ларабюр в июле 1867 г. на сессии Законодательного корпуса, говоря о европейских проблемах, отметил, что Англия, являясь островной державой, имеет крупные торговые интересы вне Европы и, воспользовавшись «континентальным шоком», может овладеть Египтом и Суэцким каналом, которые для нее являются «желанными», поскольку это открывает ей самую короткую дорогу к Индии, Китаю, Японии, с которыми Англия ведет активную торговлю. Ларабюр опасался, что эти планы Англии в отношении Суэцкого канала рано или поздно реализуются. Его слова оказались пророческими.

Подведем итоги. Французское правительство, официально вмешавшись в конфликт, с одной стороны, между частной компанией, возглавляемая Фердинандом де Лессепсом,

¹ Отрей — Друэн де Люис. Каир 1 февраля 1866 г. Дипломатические документы.

² Мустье — Друэн де Люис. Пера 14 февраля 1866 г. Дипломатические документы.

³ Отрей — Друэн де Люис. Александрия 26 февраля 1866 г. Дипломатические документы.

⁴ Мустье прислал Друэн де Люис преамбулу к фирману и сам текст фирмана. Мустье — Друэн де Люис. Пера 28 марта 1866 г. Дипломатические документы.

и вице-королем Египта, являющимся субъектом Османской империи, с другой, усиливая дипломатический нажим через Мустье на турецкое правительство с целью добиться санкции султана, дало понять, что оно намерено укрепить свое влияние в этом регионе. По существу, такое вмешательство явилось продолжением сирийской политики. Кроме того, французская дипломатия подтвердила давние притязания своей страны на Египет. Два треугольника (Париж — Константинополь — Бейрут-Дамаск и Париж: — Константинополь — Каир-Александрия) преследовали одну и ту же цель. Наполеон III проявил личную заинтересованность в этом деле. Он прекрасно понимал значение канала не только для французской, но и для международной торговли. Ценой компромисса (смешанная комиссия) император добился благоприятного исхода. Несмотря на огромное влияние Морни, Наполеон III не позволил ему помешать строительству канала. Морни встретился также с сильным противодействием со стороны императрицы Евгении и принца Наполеона. Поэтому есть все основания признать успех французской дипломатии. Присутствие императрицы Евгении на торжественном открытии Суэцкого канала символизировало этот успех.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը:

ՀՏԴ342.9

Իրավագիտություն

Հայկ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ Եվրոպական համալսարան, իրավագիտության ամբիոնի հայցորդ

E-mail: ghazaryanhayk@yahoo.com

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՒՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Յուրաքանչյուր իրավական և ժողովրդավարական պետության Սահմանադրությամբ առաջնային խնդիրը պետք է հանդիսանա մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորումը և պաշտպանությունը:

Նոր կորոնավիրուսային հիվանդության տարածումը լուրջ մարտահրավեր է նետել մարդու իրավունքների պաշտպանությանը: Հաշվի առնելով վարակի տարածման դեպքերը՝ 2020թ.մարտի 16-ից ՀՀ ամբողջ տարածքում հայտարարվեց արտակարգ դրություն¹, որը շարունակաբար երկարաձգվել է²:

Այս ընթացքում ոչ միայն քաղաքացիական սահմանափակվել են քաղաքացիների իրավունքները, այլ նաև այդ սահմանափակումները գործնականում կրում էին ոչ իրավաչափ բնույթ և չէին ծառայում իրենց նպատակին. այն է՝ վարակի կանխարգելմանը, այլ միայն նպաստում էին տուգանքի նշանակմանը, որ շատ դեպքերում կրում էր ոչ իրավաչափ բնույթ:

Հարկ է ընդգծել, որ թեև մեկուսացման, ինքնամեկուսացման, հավաքների ազատության, տնտեսական գործունեության արգելքի կամ մարդու իրավունքներին և ազատություններին միջամտություն ենթադրող այլ միջոցառումների իրավական հիմքերը սահմանված են, այնուամենայնիվ, չափազանց կարևոր է, որ այդ բոլոր սահմանափակումները գործնականում լինեն խիստ համաչափ հետապնդվող նպատակին:

Մեր կողմից սույն հոդվածում քննվում են արտակարգ դրության պայմաններում վարչական ակտի իրավաչափության, դրանց

¹ ՀՀ կառավարության 16.03.2020 թ., N 298-Ն որոշում

² ՀՀ կառավարության 13.07.2020 թ., N1161-Ն որոշում

բողոքարկման հիմնահիմունքները, վեր են հանվում գործող իրավունքների բացերը և պրակտիկայի հիման վրա առաջարկվում են լուծումներ՝ հետազայում նմանատիպ երևույթները կանխարգելելու համար՝ կիրառելով նաև դատական պրակտիկան:

Բանալի բառեր՝ Արտակարգ դրություն, փարսական ակտ, արտադատական կարգ, դատական կարգ, փարսական արդարադատություն, սահմանափակում

A. KAZARYAN

АНАЛИЗ ПРАВОВОЙ ОСНОВЫ ПРОБЛЕМ АДМИНИСТРАТИВНЫХ ДЕЙСТВИЙ И ПРОБЛЕМ ИХ СОВЕРШЕНСТВОВАНИЯ В УСЛОВИЯХ ЧРЕЗВЫЧАЙНОЙ СИТУАЦИИ

Согласно Конституции любого правового демократического государства первоочередной задачей должно быть обеспечение и защита основных прав и свобод человека. Распространение нового коронавируса бросило серьезный вызов правам человека. Учитывая случаи распространения инфекции, 16 марта 2020 года на всей территории РА было объявлено чрезвычайное положение, которое постоянно продлевалось.

За это время не только права граждан ограничивались, но и эти ограничения были практически незаконными, не служили своей цели, то есть предотвращению заражения, а только способствовали наложению штрафов, которые во многих случаях были незаконными.

Следует отметить, что независимо от того, установлена ли правовая основа для изоляции, самоизоляции, свободы собраний, запрета экономической деятельности или других мер, нарушающих права и свободы человека, тем не менее очень важно, чтобы все эти ограничения были практически соразмерными к преследуемой цели.

В данной статье обсуждаются вопросы законности административного акта в условиях ЧП, их обжалования, выявляются пробелы в действующих правовых нормах.

Ключевые слова: чрезвычайное положение, административный акт, внесудебная категория, судебная категория, административная юстиция, административная ответственность, ограничение.

H. GHAZARYAN

ANALYSIS OF THE LEGAL BASIS OF ADMINISTRATIVE ACTION PROBLEMS AND THEIR PROBLEMS OF IMPROVEMENT IN CONDITIONS OF EMERGENCY»

According to the Constitutions, the orthodox democratic government's special task must be to deprive and protect the basic rights and freedoms of man. The spread of the new coronavirus virus has made me a sergeant. Study of cases of widespread infections, March 16, 2020, in all territories of the Republic of Armenia, a contagious disease was reported, which was constantly spreading.

For the time being, not so many rights restricted a citizen, but even those restrictions were practically illegal, did not serve their purpose, that is, pre-opening infections, and only enabled the imposition of a screw, which in many cases was not possible.

It follows that, regardless of whether we establish a legal basis for isolation, self-isolation, free assemblies, restraint of economic activities or other measures, violation of rights and freedoms of a person, it is not important to limit the practice. to follow goals. In the present article, the question of the legalities of the administrative act in the conditions of the FP, their complaints, will be examined in the current legal norms.

Key words: State of emergency, administrative act, extrajudicial order, court order, administrative justice, administrative responsibility, restriction.

Ներածություն

Խոսելով մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակման մասին հարկ է նշել այն կարևոր հանգամանքը, որ նոր Սահմանադրությամբ դրանց կարգավորմանը տրվել է առավել արդյունավետ լուծում:

Հատկանշական է մի հանգամանք, որ եթե նախկին Սահմանադրությամբ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների գլխում սահմանափակման մասին և դրա կարգավորման ձևերի մասին խոսվում էր առանձին հոդվածով, ապա նոր Սահմանադրության մեջ դրա կարգավորումը այլ ընթացակարգ է ներկայացնում:

Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններով, մարդու իրավունքների և ազատությունների գլխում ներկայացված յուրաքանչյուր իրավունք, որը սահմանափակման ենթակա է, նշվում է տվյալ հոդվածում, իսկ ահա այն իրավունքները, որոնք բացարձակ են և սահմանափակման ենթակա չեն, խոսվում են մեկ այլ հոդվածում:

Մեր կարծիքով, վերը նշված փոփոխությունը առավել դյուրացված է դարձնում իրավունքների և ազատությունների սահմանափակմանը վերաբերող խնդրի պարզաբանումը:

Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի առանձնահատկությունները մեկն այն է, որ այն բնական իրավունք է, որը մարդ ձեռք է բերում ծննդյան պահից: Մեկ այլ կարևոր առանձնահատկություն ևս, որ ի տարբերություն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց, որոնք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն ամենը, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները¹:

Ձևական իրավական առումով մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը նշանակում է օրենսդրությամբ նախատեսված դեպքերում

¹ Վ.Ն.Այվազյան, Մարդու իրավունքներ: Ուսումնական ձեռնարկ, Եր. 2014թ. էջ 112

դրանց իրականացման իրավական անհնարինությունը կամ հավասարապես օրենքով սահմանված դրանց ծավալի կրճատումը:

Ինչպես հայտնի է, իրավունքների և ազատությունների սահմանափակումը իրականացվում է օրենսդրությամբ սահմանված հիմքերով և կարգով: Այս առումով հարկ է առանձնացնել այն իրավունքները և ազատությունները, որոնց սահմանափակումների համար օրենքով նախատեսվում են հատուկ եղանակներ: Սահմանադրությամբ ամրագրված մարդու որոշ իրավունքներ և ազատություններ բացարձակ չեն և կարող են սահմանափակվել: Իսկ որպեսզի այդ սահմանափակումները լինեն իրավաչափ և չխաթարեն մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրական հիմունքները, սահմանափակման հիմքերն ամրագրված են հենց Սահմանադրությամբ:

ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածի համաձայն՝ արտակարգ և ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, բացառությամբ 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում¹:

Սահմանադրությունն առաջին անգամ ուղղակիորեն ամրագրում է հիմնական իրավունքների պաշտպանության համար հիմնարար նշանակություն ունեցող համաչափության սկզբունքը:

Այստեղից կարող ենք պնդել՝ ինչպիսին էլ որ լինեն պետության կողմից իրավունքների ու ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները, դրանք իրենց բնույթով և նպատակային նշանակությամբ պետք է լինեն պիտանի, արդարացված և համարժեք, հակառակ դեպքում տեղի կունենա իրավունքների ու ազատությունների խախտում և ինչու չէ նաև ռոնահարում:

Արտակարգ դրության պայմաններում վարչական ակտի իրավաչափության և դրանց բողոքարկման հիմնախնդիրները

Արտակարգ դրությունը ՀՀ ամբողջ տարածքում կամ դրա առանձին տարածքներում հայտարարվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև նրանց պաշտոնատար անձանց գործունեության իրավական հատուկ ռեժիմ է²: Այն հայտարարվում է ՀՀ սահմանադրական կարգին անմիջական վտանգ սպառնալու դեպքում, ներառյալ ՀՀ սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու կամ տապալելու, իշխանությունը զավթելու փորձերը, նաև արտակարգ իրավիճակները: Անհրաժեշտ է նշել, որ արտակարգ դրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում

¹ **Պողոսյան Վ., Ն. Սարգսյան**, ՀՀ Սահմանադրության համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016թ., էջ 81:

² ՀՀ օրենքը «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին», (Ընդունված է 2012 թվականի մարտի 21-ին): URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75358> (մուտքի ամսաթիվ 26.02.2021), հոդված 1:

են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

Արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում արտակարգ դրության ընթացքում, արտակարգ դրության տարածքում կարող են կիրառվել մի շարք միջոցառումներ և իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումներ¹: 2020 թվականի մարտ ամսից մինչև սեպտեմբեր իրականացվել են հետևյալ սահմանափակումները՝

- անձանց տեղաշարժման ազատության սահմանափակում,
- տարածք մուտք գործելու և տարածքից դուրս գալու հատուկ ռեժիմի սահմանում,
- հավաքներ կամ հանրային միջոցառումներ իրականացնելու սահմանափակում,
- տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակում և դրանց գնման իրականացում,
- անձը հաստատող փաստաթղթերի ստուգում,
- անձնական առարկաների զննում և այլն:

Այսպիսով, վերը նշած կետերը իրենց բնույթով և առանձնահատկություններով հստակորեն նախատեսում են արտակարգ դրության ժամանակ իրագործվելիք գործողություններ, որոնք իրականացվում են բացառապես օրենսդրության շրջանակներում, և անգամ անձանց իրավունքների ու ազատությունների սահմանափակման դեպքում օրենքով նախատեսված կարգով երաշխավորվում է դրանց անխախտելիությունն ու ոտնահարումներից զերծ պահելը: Այսինքն, մեր համոզմամբ իրավունքների ու ազատությունների նկատմամբ թույլատրվող սահմանափակումները պետք է կիրառվեն բացառապես այն նպատակներով, որոնց համար նախատեսվել են, և դրանից զատ պետք է լինեն համաչափ և նպատակային:

Այս առումով հարկ է նշել, որ արտակարգ դրության պայմաններում գործադիր իշխանության մարմինների գործողությունները պետք է համարժեք լինեն արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներով պայմանավորված իրավիճակին: Սահմանադրական իրավունքներ և ազատություններ սահմանելիս հարկ է դեկլարվել արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորություններով: Այսինքն, արտակարգ դրության իրավական ռեժիմի վերաբերյալ օրենքներում ամրագրված բոլոր հնարավոր սահմանափակումները պետք է բխեն բացառապես արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորություններից, բացի դրանից, օրենքների և միջազգային պայմանագրերի միջև հակասության դեպքում, ինչը բխում է՝ Սահմանադրության 5-րդ հոդվածի դրույթներից, հարկ է անմիջականորեն դեկլարվել վավերացված միջազգային պայմանագրերով: Միջազգային պարտավորությունների շրջանակներում գործելու պահանջից անմիջականորեն բխում է նաև այլ կարևոր հիմնադրույթ, մասնավորապես՝ իրավունքներ ու ազատություններ սահմանափակելիս կարող են օրենքով

¹ ՀՀ օրենքը «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին», (Ընդունված է 2012 թվականի մարտի 21-ին) URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75358> (մուտքի ամսաթիվ 26.02.2021)

սահմանված սահմանափակումները կիրառվել միայն այն դեպքում, երբ դրանցից կոնկրետ յուրաքանչյուրի համար առկա են բավարար հիմքեր, հանգամանքներ¹:

2020 թվականին մեր երկրում հայտարարված արտակարգ դրությունը և մասնավորապես՝ իրավունքներ ու ազատություններ սահմանափակելիս, պատկան մարմինների ընտրված միջոցները մեր կարծիքով իրենց բնույթով և նպատակային նշանակությամբ պիտանի չէին, արդարացված և իհարկե համարժեք չէին, և շատ դեպքերում հասարակության մեջ դժգոհության, բողոքի և նաև բազմաթիվ գործերով դատական վեճերի առարկա են դարձել, որոնք ավարտվել են դատարանի այնպիսի վճիռներով, որով հաստատվել են վարչական մարմինների կողմից ոչ իրավաչափ գործողությունները:

Սակայն, եթե համավարակի սկզբնական շրջանում կարելի է ասել, որ մարդու իրավունքները ժամանակավորապես զոհաբերվեցին օպերատիվ որոշումներ ընդունելուն, ապա նման պրակտիկայի շարունակականությունը լուրջ մարտահրավեր էր նետել մարդու իրավունքների ողջ հայեցակարգին: Խնդիրն առավել էր սրվում՝ հաշվի առնելով, որ արտակարգ իրավիճակի պայմաններում իշխանությունը կենտրոնացնում է կառավարության, շատ հաճախ՝ նույնիսկ մեկ անձի ձեռքում: Չէին կիրառվում հանրության լայն շերտերի ներգրավմամբ խորհրդակցություններ, հասարակական կարծիքը լսելու հնարավորություն տվող այլ մեխանիզմները: Գործում էր միայն տուգանելու ինստիտուտը, որը շատ դեպքերում ոչ մի կապ չուներ համավարակի կանխարգելման հետ, քանի որ հստակ էր, որ «հաց ուտելու» կամ «ջուր խմելու» ընթացքում դիմակ չկրելը կարող էր համավարակի բռնկման վտանգ ստեղծել: Ծատ դեպքերում հենց այդ իրավիճակներում էին քաղաքացիներին ենթարկում վարչական պատասխանատվության, և շատ դեպքերում դա իրականացվում էր բռնության միջոցով, որը ոչ իրավաչափ է և հիվանդության կանխարգելման հետ ոչ մի առնչություն չունի: Դա է պատճառը, որ վարչական մարմինների սույն գործողությունները դատարանի կողմից վերացվում էին: Ցանկացած քաղաքակիրթ և իրավական պետության մեջ մարդը բարձրագույն արժեք է, իսկ մարդու իրավունքները հարգելն ու պաշտպանելը՝ պետության գոյության առանցքային նպատակ և պարտականություն², հանրային իշխանության բոլոր մարմինները կաշկանդված են մարդու հիմնական իրավունքներով և ազատություններով³, ուստի նույնիսկ արտակարգ դրության պայմաններում հիմնական իրավունքների սահմանափակմանը պետք է վերաբերվել ծայրաստիճան գոյությունամբ: Այս է պատճառը, որ տարբեր երկրների իրավագիտական հանրության շրջանակներում լուրջ քննարկման առարկա են դարձել այն հարցերը, թե որքանով էին անհրաժեշտ վարակով պայմանավորված՝ մարդու հիմնական իրավունքների սահմանափակումները, եթե անգամ անհրաժեշտ էին, ապա ի՞նչ ժամանակով և ի՞նչ ծավալներով: Քննարկման թեման, նախ և առաջ, հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության և որոշակիության հարցն է:

¹ Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, ՀՀ Սահմանադրության համառոտ պարզաբանումներ, Ե., 2016 թ., էջ 523:

² ՀՀ Սահմանադրություն, հոդված 3, մաս 1 (Ընդունված է 2015 թվականի դեկտեմբերի 6-ին) URL:

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510> (մուտքի ամսաթիվ 01.03.2021):

³ ՀՀ Սահմանադրություն, հոդված 3, մաս 3 (Ընդունված է 2015 թվականի դեկտեմբերի 6-ին) URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510> (մուտքի ամսաթիվ 01.03.2021)

Սահմանափակումների իրավաչափության գնահատումը մի շարք երկրներում, ինչպես նաև ՀՀ-ում, դարձել է նաև դատարանների գնահատման առարկան:

Սահմանադրության 76-րդ հոդվածը, իհարկե, արտակարգ դրության ժամանակ տալիս է հնարավորություն մարդու հիմնական իրավունքները և ազատությունները ժամանակավորապես կասեցնելու կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկելու: Սահմանադրական նույն նորմը, միաժամանակ, պետությանը ներկայացնում է շատ կարևոր պահանջ, այն է՝ հիմնական իրավունքները և ազատությունները պետք է սահմանափակվեն միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը: Սահմանադրական այս պահանջին համահունչ, «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ իրավունքների և ազատությունների թույլատրվող սահմանափակումները պետք է կիրառվեն բացառապես այն նպատակներով, որոնց համար նախատեսվել են, և լինեն համաչափ՝ հիշյալ նպատակների համեմատությամբ¹:

Համաչափության սկզբունքի տեսանկյունից մեր կարծիքով չափազանց կարևոր է, որ Կառավարության կողմից ընդունվեն որոշումներ, որոնք լինեն ճկուն և թույլ տան յուրաքանչյուր կոնկրետ դեպք գնահատել առանձին, այլ ոչ թե լինեն կոշտ և անկախ հանգամանքներից բոլոր դեպքերի համար համընդհանուր լուծում նախատեսող մոտեցումներ սահմանեն:

Մեր կարծիքով, արտակարգ դրության ժամանակ մի շարք սահմանափակումների արդյունքում մարդկանց և իրավաբանական անձանց վրա նոր, լրացուցիչ պարտավորությունները, որոնք հանգեցնում են նաև ֆինանսական ծախսերի, ենթակա են փոխհատուցման:

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անհատական պաշտպանության միջոցների ապահովումն իրականացնում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները: Մեր կարծիքով, այդ պարագայում ակնհայտ է, որ արտակարգ իրավիճակում ֆիզիկական անձանց վրա չպետք է լինեի այդ անհատական պաշտպանության միջոցը ձեռք բերելու պարտականությունը/դիմակ, ձեռնոցներ/: Այստեղ ուրիշ խնդիր ունենք, որը վերաբերում է քաղաքացիներին տուգանելուն: Սահմանադրությամբ ունենք վնասի հատուցման իրավունք, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքում նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Այստեղ մեր կարծիքով գոյություն ունի իրավաչափության խնդիր, քանի որ արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքը նախկինում նախատեսել էր պարետի ինստիտուտ, սակայն պարետի ինստիտուտի համար արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքում փոփոխություններ կատարվեցին միայն 2020 թվականի ապրիլի 29-ին, որի ժամանակ էլ նախատեսվեց պարետի կողմից որոշում

¹ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, (հոդվ. 10, մաս 1) (Ընդունված է 2012 թվականի մարտի 21-ին) URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75358> (մուտքի ամսաթիվ 04.03.2021):

ընդունելու հնարավորությունը: Սակայն մարտ ամսից մեր երկրում արտակարգ դրություն էր հայտարարված, պարետի կողմից մի շարք որոշումներ էին ընդունվել, սակայն միայն մայիսի 7-ին ապրիլի 29-ին ընդունված օրենքի փոփոխություններն ուժի մեջ մտան¹: Այսինքն՝ որպես օրենք՝ իրավական հիմքը բացակայում է: Խնդիրը, սակայն, ավելի լուրջ է, որովհետև անգամ իրավական հիմքի բացակայության պարագայում էլ, երբ օրենքում փոփոխություններ կատարվեցին, և պարետին նորմատիվ ակտ ընդունելու հնարավորություն տրվեց, այս պարագայում նույնպես խնդիրներ են առաջացել: Միայն սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել՝ ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Պատահական չէ, որ նախկինում արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքը, նախատեսելով պարետի ինստիտուտը, չէր նախատեսել նրա կողմից որոշումներ ընդունելու հնարավորությունը:

Վարչարարության տեսանկյունից, մեր համոզմամբ, պարետի բոլոր որոշումները ենթակա են վիճարկման, և այս համատեքստում յուրաքանչյուր ոք հատուցման իրավունք ունի: Հետևաբար՝ քաղաքացիները մեր համոզմամբ կարող են պարետի կողմից կայացած ցանկացած որոշում բողոքարկել Վարչական դատարան, որը մեծամասամբ և իրականացվում էր: Այսպիսով ստացվում է, որ կառավարության որոշմամբ հայտարարվել է արտակարգ դրություն, այնուհետև այս ամբողջ ընթացքում դրանից բխող հարցերը կարգավորվել են պարետի որոշումներով, որոնք մինչև մայիսի 7-ը ընդհանրապես իրավական հիմք չեն ունեցել:

Գալիս ենք այն համոզման, որ քաղաքացիները ոչ միայն կարող են բողոքարկել վարչական մարմինների կողմից կայացված վարչական ակտերը, որի իրավական հիմքը հենց պարետի որոշումն է, այլ նաև կարող են բողոքարկել պարետի որոշումը, որը հիմք է հանդիսացել իրենց պարտադրելու X քանակի գումար ծախսել այս ամբողջ ժամանակահատվածի համար և դիմակ ձեռք բերել: Այստեղ մեր կարծիքով իրավիճակը երկու մասի է բաժանվում, այսինքն՝ այն անձանց շրջանակը, որոնք արդեն իսկ տուգանվել են և բողոքարկում են հատուցում ստանալու նպատակով, և երկրորդ հատվածն էլ նորմատիվ ակտի գոյության փաստն է, որի հիման վրա անձանց պարտադրում են կոնկրետ գործողություններ իրականացնել:

Գործերի մեծ մասով վարչական մարմնի կողմից չի իրականացվել վարչական վարույթ, մասնավորապես, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածում, որպես պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքի բաղկացուցիչ տարր, ամրագրված է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտ ընդունելը, լսել նրան: Վարչական վարույթի մասնակիցների՝ ընդունվելիք վարչական ակտի հասցեատիրոջ և երրորդ անձանց լսված լինելու իրավունքի իրացման միջոցով վերջինները հնարավորություն են ստանում արդյունավետ կերպով պաշտպանելու և իրականացնելու իրենց այն իրավունքներն ու շահերը, որոնց վերաբերում է տվյալ վարչական վարույթը: Այդ իրավունքի պատշաճ կենսագործման շնորհիվ վարչական վարույթի մասնակիցներն իրազեկվում են իրենց իրավական և փաստական վիճակի

¹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141952>

վրա ազդող վարչական վարույթի հարուցման և դրա արդյունքում արձակվելիք վարչական ակտի հիմքում դրվող փաստական և իրավական հանգամանքների վերաբերյալ՝ հնարավորություն ունենալով վարչական գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող այս կամ այն հարցի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողություններ կատարելու միջոցով ազդելու վարչական մարմնի վերջնական որոշման վրա, իսկ այդ հնարավոր է միայն այն դեպքում, երբ վարչական մարմինը լսի, ի գիտություն ընդունի և գնահատի վարույթի մասնակիցների դիրքորոշումները: Վարչական վարույթի ընթացքում վարույթի մասնակիցների ներկայությունն ապահովելու վարչական մարմնի պարտականությունը կարևոր երաշխիք է հանդիսանում վարույթի մասնակցի՝ իրեն ընձեռնված իրավունքներն իրացնելու և պաշտպանության միջոցներից օգտվելու համար: Ընդ որում, այդ իրավունքի իրացմանը խոչընդոտելը, այդ իրավունքի իրացման համար լիարժեք հնարավորություն չապահովելը կամ անհիմն՝ ոչ ողջամիտ սահմանափակումներ ստեղծելն անթույլատրելի է:

Այսպիսով, իրավական պետության պայմաններում պատշաճ վարչական վարույթի պարտադիր նախապայման է վարչական վարույթի մասնակիցների լաված լինելու իրավունքը գործնականում իրացնելը¹:

Այդ նպատակին հասնելու համար օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում սահմանել է վարչական վարույթի մասնակիցների լաված լինելու իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Այսպես, նախևառաջ օրենսդիրը, որպես ընդհանուր կանոն, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասում ամրագրել է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին լսելու վարչական մարմնի պարտականությունը, որի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է վերջիններին հնարավորություն տալ արտահայտվելու տվյալ վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Մեր կարծիքով վարչական վարույթի մասնակիցների լաված լինելու իրավունքի գործնական իրացումը կարող է տեղի ունենալ միայն վարույթի ընթացիկ փուլում, երբ վարչական մարմինն իրականացնում է գործի փաստերի ուսումնասիրություն և պարզում է կիրառման ենթակա իրավական ակտերը: Այդ փուլում կատարվում են վարչական ակտ ընդունելուն ուղղված հիմնական գործողությունները, մասնավորապես՝ վարչական գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքների բացահայտումը, անհրաժեշտ ապացույցների ձեռքբերումը և գնահատումը, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը: Բացի այդ, վարույթի ընթացիկ փուլում լուծումները պետք է իրականացվեն այն հաշվառմամբ, որ վարույթի մասնակիցները դեռ հնարավորություն ունենան իրենց դիրքորոշմամբ ազդելու վարչական մարմնի որոշման վրա: Բազմաթիվ դեպքերով վարչական մարմինը առանց ապացույցներ ներկայացնելու քաղաքացիներին

¹ Տիգրան Աբադյանն ընդդեմ Երևան համայնքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի՝ թիվ ՎԴ/5539/05/11 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը:

տուգանում է դիմակ չկրելու համար և այդ պարագայում հարկ չէր համարում իրականացնել պատշաճ վարչական վարույթ, քանի որ վարույթի ընթացքում շատ դեպքերում կպարզվի իր կայացրած որոշումների ոչ իրավաչափ բնույթը և դա է պատճառը, որ շատ դեպքերում միանգամից եզրափակիչ փուլով կայացնում է որոշում վարչական տույժ նշանակելու մասին:

Վարչական վարույթի մասին ծանուցելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով նախատեսված կառուցակարգն անհրաժեշտ նախադրյալ է հանդիսանում վարչական վարույթի ընթացքում մարդու լավամտ լինելու իրավունքի կենսագործման համար, քանի որ առանց վարչական վարույթի մասնակիցներին վարույթի հարուցման կամ վարչական վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների (օրինակ՝ լուսնների) անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին ծանուցելու հնարավոր չէ ապահովել վարչական վարույթի մասնակիցների լավամտ լինելու իրավունքի գործնական իրացումը: Թեև վարչական վարույթի մասնակիցներին վարույթի մասին ծանուցելը և վարույթի մասնակիցներին քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ արտահայտվելու հնարավորություն տալը՝ լսելը, կատարվում են վարչական վարույթի երկու տարբեր փուլերում և նախատեսված են վարչական վարույթի հարուցման ու ընթացիկ փուլերը կարգավորող իրավական նորմերով, սակայն նշված ընթացակարգային գործողությունները հետապնդում են մեկ միասնական նպատակ, որը հանգում է մարդու՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի և 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքների իրացման երաշխավորմանը:

Այդ է պատճառը, որ դատարանում գտնվող գործերով հաղթող է ճանաչվում քաղաքացին, քանի որ դատարանի համար ակնհայտ է վարչական մարմնի կողմից ոչ իրավաչափ գործողությունների արդյունքով քաղաքացու իրավունքների խախտումը: Բազմաթիվ գործերով, մասնավորապես՝ ՎԴ/6520/05/20¹, ՎԴ/7880/05/20², ՎԴ/7324/05/20³ դատարանը մատնանշել է, որ վարչական վարույթի մասնակիցների լավամտ լինելու իրավունքի գործնական իրացումը կարող է տեղի ունենալ միայն վարույթի ընթացիկ փուլում, երբ վարչական մարմինն իրականացնում է գործի փաստերի ուսումնասիրություն և պարզում է կիրառման ենթակա իրավական ակտերը: Այդ փուլում կատարվում են վարչական ակտ ընդունելուն ուղղված հիմնական գործողությունները, մասնավորապես՝ վարչական գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքների բացահայտումը, անհրաժեշտ ապացույցների ձեռքբերումը և գնահատումը, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը: Բացի այդ, վարույթի ընթացիկ փուլում լուսնները պետք է իրականացվեն այն հաշվառմամբ, որ վարույթի մասնակիցները դեռ հնարավորություն ունենան իրենց դիրքորոշմամբ ազդելու վարչական մարմնի որոշման վրա:

¹ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809949253

² http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809950769

³ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809950078

Ուսումնասիրելով վարչական գործերում առկա փաստաթղթերը՝ Դատարանը վերևում նշված գործերով փաստել է, որ վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած վարչական վարույթի նյութերում բացակայում է որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց առ այն, որ հայցվորը սահմանված կարգով ծանուցվել (իրագրելվել) է պատասխանողի որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի ինչպես հարուցման, այնպես էլ գործի քննության տեղի, օրվա և ժամի մասին, որից ելնելով՝ արձանագրում է, որ տվյալ դեպքում հայցվորի՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննող վարչական մարմինը չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ վարչական վարույթին վարչական պարտավորություններ ստանձնող անձի մասնակցությունն ապահովելու, քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ արտահայտվելու և վերջինիս կողմից իր իրավունքները լիարժեքորեն իրացնելու իրական հնարավորություն ընձեռելու ուղղությամբ, ինչի արդյունքում չի ապահովվել վարչական վարույթի բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունը՝ վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքը:

Նաև շատ հետաքրքիր է այն փաստը, որ վարչական դատարանի կողմից կայացված վճիռները վարչական մարմինների կողմից չէին բողոքարկվում վերաքննության կարգով, որը մեր կարծիքով վկայում է այն մասին, որ վարչական մարմինն էլ էր հասկանում իր կայացված ակտերի ոչ իրավաչափության աստիճանը:

Միաժամանակ գտնում ենք, որ վարչական վարույթն իրականացնող մարմինը իր ակտերում պետք է կոնկրետ մատնանշի, թե հայցվորը կոնկրետ որ իրավական ակտի որ դրույթն է խախտել:

Մեր համոզմամբ՝ վիճարկվող որոշումների մեջ որպես խախտված իրավանքում նշված ՀՀ պարետի 2020թ. մայիսի 3-ի թիվ 63 որոշման 14-րդ հավելվածը, որը չափազանց անորոշ ձևակերպում է, չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, և քաղաքացիները, ստանալով վարչական ակտերը, չէին կարող հասկանալ, թե կոնկրետ որ կանոնների խախտման համար են ենթարկվել վարչական պատասխանատվության:

Նույնանման դիրքորոշում է հայտնել նաև վճռաբեկ դատարանն իր մի շարք նախադեպային որոշումներով անդրադառնալով վարչական ակտի հիմնավորվածության պարտադիր լինելու հանգամանքին¹:

Սույն պարագայում գտնում ենք, որ քաղաքացիների նկատմամբ կայացած վարչական ակտերը մեծ մասամբ չէին պարունակում անհրաժեշտ և բավարար նշումներ գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքի և տվյալ վարչական իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտերի մասին:

Հարկ է նշել, որ պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտի նշում ասելով պետք է հասկանալ այն ակտերի և դրանց համապատասխան նորմերի ամբողջությունը, որոնք կապահովեն իրավախախտման բնորոշումը և դրա համար սահմանված պատասխանատվությունը, այլապես՝ կարելի է ենթադրել, որ վարչական մարմինն օրենքի մակարդակով հնարավորություն է տրվում չհիմնավորված որոշումներ կայացնելու:

¹ ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի թիվ ՎԴ/2127/05/11 որոշում:

Եզրակացություն

Հաշվի առնելով վերևում բերված փաստերը՝ մեր կողմից առաջարկվում են կատարել հետևյալ փոփոխությունները՝

- «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անհատական պաշտպանության միջոցների ապահովումն իրականացնում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները: Մեր կարծիքով, այդ պարագայում ակնհայտ է, որ արտակարգ իրավիճակում ֆիզիկական անձանց վրա չպետք է լինել այդ անհատական պաշտպանության միջոցները ձեռք բերելու պարտականությունը /պաշտպանիչ դիմակ, ձեռնոցներ, պաշտպանիչ գլխարկներ/:

- Գործերի մեծ մասով վարչական մարմնի կողմից չի իրականացվել վարչական վարույթ, մասնավորապես 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածում, որպես պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքի բաղկացուցիչ տարր, ամրագրված է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտ ընդունելը լսել նրան: Այսպիսով, իրավական պետության պայմաններում պատշաճ վարչական վարույթի պարտադիր նախապայման է վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքը գործնականում իրացնելը, որը պետք է տվյալ դեպքում պարտադիր կիրառվեր: Մեր կարծիքով վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքի գործնական իրացումը կարող է տեղի ունենալ միայն վարույթի ընթացիկ փուլում, երբ վարչական մարմինն իրականացնում է գործի փաստերի ուսումնասիրություն և պարզում է կիրառման ենթակա իրավական ակտերը: Այդ փուլում կատարվում են վարչական ակտ ընդունելուն ուղղված հիմնական գործողությունները, մասնավորապես՝ վարչական գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքների բացահայտումը, անհրաժեշտ ապացույցների ձեռքբերումը և գնահատումը, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը:

- Հաջորդ կարևոր առաջարկությունն այն է, որ քաղաքացիների նկատմամբ կայացված վարչական ակտերը մեծ մասամբ չէին պարունակում անհրաժեշտ և բավարար նշումներ գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքի և տվյալ վարչական իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտերի մասին, որը քաղաքացիների համար իրենց իրավունքների իրացման հարցում լրջագույն խոչընդոտներ էր առաջացնում:

- Նաև մեր կարծիքով, անհրաժեշտ է տվյալ դեպքում օգտագործել արտասահմանյան փորձը, քանի որ սա նոր իրավիճակ է մեզ համար և պարտադիր է այլ երկրների հետ համագործակցության միջոցով իրականացնել միջոցառումներ, որոնք այս կամ այն չափով սահմանափակում են Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները, սակայն գերծ են պահում հիմնական իրավունքների խախտումներից:

- Մեկուսացման կանոնների կարգավորումների հետ կապված մեկ այլ խնդիր է նաև վերանայումների և բողոքարկման մեխանիզմի հարցը, այդ թվում՝ կապված դատական պաշտպանության իրավունքի հետ: Օրինակ, եթե անձը գտնում է

մեկուսացման մեջ, և իրեն ներկայացված պահանջն ապօրինի է, ինչպես է բողոքարկելու այն: Արդյո՞ք կարողանալու է դիմել վարչական մարմնին, թե պետք է հարցը լուծվի դատական կարգով: Եթե անձը ենթարկվում է մեկուսանալու պահանջին, դա նշանակում է, որ մեկուսացման պետք է ենթակա լինեն նաև իր հետ նույն բնակարանում ապրող մարդիկ և եթե վերջիններից որևէ մեկը համաճայն չէ մեկուսացման ենթարկվելուն, ապա արդյո՞ք կարող է բողոքարկել այդ պահանջը: Այս մասին կարգավորում առկա չէ և ոչ մի օրենքում, հետևաբար նման կարգավորումները ևս անհրաժեշտություն են: Նշված բոլոր դեպքերում պետք է լինեն հատուկ կարգավորումներ՝ հաշվի առնելով հրատապությունը:

- Նաև փաստում ենք, որ օրենսդրորեն կանոնակարգված չեն արտակարգ իրավիճակի վերաբերյալ մի շարք հիմնական գործընթացներ: Մասնավորապես, օրենսդրությամբ սահմանված չեն այն դեպքերը, երբ որոշակի իրադրության պատճառով առաջացած հետևանքների ծանրության աստիճանը կամ հանրապետությունում և դրա առանձին հատվածներում առկա այն իրավիճակը, որոնց պարագայում կարող է կամ պետք է սահմանվի արտակարգ իրավիճակի ռեժիմ: Ավելին, բաց է այն հարցը, թե պետական որ մարմինը և ինչ ժամկետներում ու կարգով է իրավասու հայտարարել արտակարգ իրավիճակ: Այլ կերպ ասած՝ արտակարգ իրավիճակ հայտարարելու որևէ իրավական հիմք և չափանիշներ համապատասխան օրենքներով սահմանված չեն:

- Խնդրահարույց է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի» 182.4 հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական պատասխանատվությունը՝ կապված կարանտինի ընթացքում անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի կամ տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումները խախտելու, ինչպես նաև դրանց գնման իրականացմանը խոչընդոտելու համար, իսկ նույն հոդվածի 7-րդ մասով վարչական պատասխանատվություն է նախատեսվել կարանտինի ընթացքում տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումները խախտելու, ինչպես նաև դրանց գնման իրականացմանը խոչընդոտելու համար: Ակնհայտ է, որ 182.4-րդ հոդվածի թե 2-րդ և թե 7-րդ մասերով պատասխանատվություն է նախատեսվում բացառապես նույն արարքի համար, որպիսի պայմաններում արարքի որակման խնդիր է առաջանալու: Այսինքն, նման կարգավորման պայմաններում տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումները խախտելու կամ դրանց գնման իրականացմանը խոչընդոտելու դեպքերում հարց է առաջանալու, թե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.4-րդ հոդվածի որ մասով է անձը ենթակա լինելու պատասխանատվության՝ նկատի ունենալով նաև, որ որպես վարչական պատասխանատվություն նախատեսված տուգանքի չափերը տարբեր են (համապատասխանաբար՝ 10.000 ՀՀ դրամ և 50.000 ՀՀ դրամ):

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ի.գ.դ. Գ.Մ. Ղազինյանը:

ՀՏԴ 355

Հոգեբանություն

Վիզեն ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՀ ՁՈՒ փոխգնդապետ, ՀՊՄՀ հայցորդ

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՌԱՋԱՅՈՂ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀՈԳԵՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Հոգիվածում խոսվում է պատերազմական գործողությունների (մարտական իրադրության) ժամանակ զինծառայողների մոտ մարտական սթրեսի արդյունքում դրսևորվող հնարավոր բացասական հոգեվիճակների առաջացման պատճառների, դրանց դասակարգման, ինչպես նաև բովանդակային առումով արտաքին դրսևորումների ուսումնասիրման ու ընդհանրացման մասին:

Կատարված աշխատանքների արդյունքում վեր հանված տվյալները, որոնք բնորոշում են մարտում զինծառայողի բացասական հոգեվիճակները, նախորդում են հետագա մասնագիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների նոր ուղղություններ:

Բանալի բառեր՝ պատերազմ, մարտական իրադրություն, բացասական հոգեվիճակներ, բնական և արհեստական գործոններ, անձնային հատկանիշ, հոգեբանական պատրաստվածություն, մարտական սթրես, վարքային մոդել:

В.МАНУКЯН

О ПРИЧИНАХ НЕГАТИВНОГО ПСИХИЧЕСКОГО СОСТОЯНИЯ И ИХ ПРОЯВЛЕНИЯХ У ВОЕННОСЛУЖАЩИХ, ВОЗНИКАЮЩИХ ВО ВРЕМЯ БОЕВЫХ ДЕЙСТВИЙ

В статье говорится о причинах возникновения возможного негативного психического состояния, проявляющегося в результате боевого стресса у военнослужащих во время боевых действий (боевой обстановки), их классификации по типам, а также исследовании и обобщение внешних проявлений по содержанию.

Полученные в результате проделанной работы данные, характеризующие негативные психические состояния военнослужащего, предопределяют новые направления в дальнейших специализированных изучениях и исследованиях.

Ключевые слова: война, боевая обстановка, негативное психическое состояние, естественные и искусственные факторы, личная черта, психологическая подготовка, боевой стресс, поведенческая модель.

V.MANUKYAN

ABOUT CAUSES OF NEGATIVE PSYCHOLOGICAL STATES AND THEIR MANIFESTATIONS THAT ARISE AMONG SERVICEMEN DURING COMPAT OPERATIONS

The article discusses the causes of possible negative psychological states manifested during military operations (combat situation), as a result of combat stress among servicemen, their classification by types, as well as the study and generalization of external manifestations in terms of content.

The data obtained as a result of the work done, which characterize the negative psychological states of the serviceman in battle, predetermine directions of future professional studies and researches.

Key words: war, combat situation, negative psychological conditions, natural and artificial factors, personal traits, battlemind training, combat stress, behavioral model.

Հայտնի իրողություն է, որ պատերազմների և/կամ/ զինված հակամարտությունների ելքը կանխորոշող անկյունաքարային գործոններից է մարդկային ռեսուրսի հոգեբանական ու բարոյամարտական ներուժը:

Պատերազմը սոցիալ-քաղաքական երևույթ է, պետությունների, ժողովուրդների, ազգերի, դասակարգերի և սոցիալական խմբերի միջև ռազմական ազդեցության (մարտական գործողությունների) միջոցներով սոցիալ-քաղաքական, տնտեսական, գաղափարական, ինչպես նաև ազգային, կրոնական, տարածաշրջանային և այլ հակասությունների լուծման արտահայտություն:^[1]

Զինվորական մշակույթի բազմադարյան էվոլյուցիայի ողջ ընթացքում, ինչպես նաև տեխնոլոգիական զարգացման արդի ժամանակներում, մարտնչող ռազմիկի (զինվորի) հոգեբանական պատրաստվածությունը ժամանակի ռազմաքաղաքական դեկավարության համար մշտապես համարվել է գերխնդիր:

Հոգեբանական պատրաստվածությունն արտահայտվում է մարդու վերաբերմունքով, տրամադրվածությամբ, անհրաժեշտ որակներով ու

արհեստավարժությամբ՝ գործնականում նրա հոգեկան գործընթացների արդյունավետ դրսևորումներով:^[2]

Կարևորելով վերոնշյալ հանգամանքները՝ մեր կողմից հոդվածի **նպատակներ** են սահմանվել մարտական գործողությունների (իրադրության) ժամանակ զինծառայողների մոտ հնարավոր բացասական հոգեվիճակների առաջացման պատճառների ուսումնասիրումը, ընդհանրացումը, դրանց դասակարգումը, ինչպես նաև հետազոտական աշխատանքների նոր ուղղությունների նախորոշումը:

Մարտական իրադրությունը ներառում է մի շարք տարրեր, որոնք, ընկալվելով մարդու զգայարաններով, էապես փոխում են նրա հոգեվիճակն ու վարքը: Մարտական իրավիճակի տարրերն ընդունված է անվանել **մարտի հոգեծին գործոններ** (մարտական սթրես) կամ **մարտական սթրեսորներ**:^[3]

Մարտական սթրեսը հոգեկան վիճակների ամբողջություն է, որը զինվորները զգում (ապրում) են մարտական իրադրության պայմաններին հարմարվելու ընթացքում, այնպիսի իրադրություն, որն անբարենպաստ է և սպառնում է զինվորի կյանքին կամ նրա առողջությանը:^[4]

«Մարտական գործողությունների ժամանակ զինծառայողների մոտ բացասական հոգեվիճակների» վերաբերյալ 2020թ. մեկուկեսամսյա պատերազմի անմիջական մասնակցության ընթացքում կատարած ուսումնասիրությունների արդյունքներով, մեր կողմից բացասական հոգեվիճակների առաջացման հանգամանքները՝ գործոնները, բաժանվել են երկու խմբի՝ բնականի և արհեստականի:

Բացասական հոգեվիճակների առաջացման համար որպես բնական պատճառ հանդիսացող գործոններն են.

1. *Ռազմական հակամարտության գոտում տիրող իրադրության առանձնահատկությունները.*

- զարգացումների ինտենսիվությունն ու անկանխատեսելի փոփոխությունները,

- մարտի բնույթը՝ առաջխաղացում կամ նահանջ,

- կիրառվող զինատեսակների նորույթն ու բազմազանությունը,

- մտերիմների կամ համաժառայակիցների կորուստները (կամ դրա վերաբերյալ տեղեկատվությունը),

- մեծաքանակ վիրավորների ու զոհվածների, ինչպես նաև անբնական մահվան առանձին տեսարանների ականատես լինելը,

- զինտեխնիկայի շարքից դուրս գալն ու շրջակա շինությունների ավերածությունները,

- աշխարհագրական և կլիմայական առանձնահատկությունները:

2. *Մարտական իրադրության պայմաններին զինծառայողների հարմարվելու խընդիրները:*

Մարտական իրադրության պայմաններին զինծառայողների հարմարվելը ընթանում է 3 (երեք) փուլով՝

1) սկզբնական (նախնական) փուլում նկատվում է օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի վատացում ու մասնագիտական գործունեության (մասնագիտական աշխատունակության) արդյունավետության նվազում,

2) երկրորդ փուլում օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունները հարաբերական վերականգնվում են, և դրսևորվում է մասնագիտական աշխատունակության նոր դինամիկական կարծրատիպ,

3) երրորդ փուլում խորանում են ապահարմարումային գործընթացները, և գրանցվում է զինծառայողների մարտունակության ինտենսիվ անկում:

Մարտական գործունեության պայմաններին զինծառայողների հարմարվելու փուլերի տևողությունը պայմանավորված է մարտական ծանրաբեռնվածության մակարդակով:^[5]

3. Զինծառայողների անձնային հատկանիշներն ու պատրաստության աստիճանը՝

1) անձնային հատկանիշներ.

- մարտական իրադրությունում գործունեության շարժառիթների բացակայությունը, դրանց ոչ բավարար ձևավորվածությունը կամ հակասականությունը,

- զինծառայողի ցայտունորեն արտահայտված տազնապախողությունը, ագրեսիվությունը, ռիսկի դիմելու մեծ հակումը, անհամբերությունը,

- ձգտումների մակարդակի և ինքնագնահատման աստիճանի անհամապատասխանությունը, թուլակամությունը,

- մարտական գործունեության ծավալման համար բացասական հուզական հատկությունների առկայությունը (ոյուրագգայություն, հուզական անկայունություն, բարձր հուզական գրգռվածություն, անհավասարակշռվածություն),

- հարմարման թույլ ընդունակությունները,

- պատասխանատվության ցածր մակարդակը,^[3]

2) պատրաստության աստիճան.

- զինծառայողի օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակն ու հարմարվելու հնարավորությունները (ֆիզիկական զարգացման մակարդակ, առողջական վիճակ, տոկոսության աստիճան),

- ճանաչողական, ինչպես նաև մյուս հոգեկան գործընթացների զարգացվածության ու մարզվածության աստիճանը (ուշադրություն, հիշողություն, մտածողություն, երևակայություն, պատկերացում և այլն),

- մարտական իրադրության և այլ արտակարգ իրավիճակների նկատմամբ անհրաժեշտ գիտելիքների ու հնարավորինս նմանեցված իրավիճակներում հոգեբանական կոփվածության ու փորձառության համապատասխան մակարդակը,

- առանձնահատուկ հոգեծին գործոնների՝ սթրեսորների (ականների սուլոցներ, պայթյուններ, զրահատեխնիկայի կրակոցների ձայներ, հրդեհներ,

ճիշեր, հառաչանքներ, յուրայինների շրջանում խուճապային տրամադրությունների զարգացումներ) ծանոթ լինելը:

Բացասական հոգեվիճակների առաջացման համար որպես արհեստական պատճառ հանդիսացող գործոններ առանձնացվել են.

1. Հակառակորդի կողմից տեղեկատվական հակազդեցության ուղղությամբ նախապես պլանավորված և ըստ փուլերի աստիճանակարգված արդյունավետ գործունեության իրականացումը:

2. Որոշ դեպքերում մարտական իրադրության անսովորությունը, ժամանակակից զինատեսակների ու տեխնիկական միջոցների կիրառման նորույթը (անհայտ կամ էապես տարբերվող),

3. Յուրայինների կողմից հակամարտության գոտում բջջային հեռախոսակապի ամենատարբեր նպատակներով համատարած կիրառումը:

4. Մարտական գործողությունների գրեթե բոլոր հատվածներում համացանցի մշտական հասանելիությունը, ինչպես նաև զինծառայողների ու ազգաբնակչության տեղեկատվական քաղցր հազեցնելու գործում պետականորեն համակարգված մոտեցման բացակայությունը՝ տեղեկատվական հիգիենայի բացը:

5. Վիրավորված, զոհված և մարտական գործողությունների շրջանները լքած զինծառայողների դուրսբերման, ինչպես նաև նոր համալրվող անձնակազմի գործողությունների շրջան տեղափոխման հարցերում տեղ գտած խնդիրները:

Մարտական գործողությունների շրջանները լքածների, ինչպես նաև տարբեր պատրվակներով մարտական խնդիր կատարելուց խուսափողների ու նոր համալրվող անձնակազմի հանդիպումներն ունենում են բացասական բարոյալքող հետևանքներ:

6. Մարդկային ցածրորակ մուտքային ռեսուրսների միջոցով հասարակության շրջանում տիրող խուճապային տրամադրությունները հակամարտության (մարտական գործողությունների) շրջան տեղափոխելը:

7. Մարտական խնդրի կատարումից հրաժարվող և/կամ/ տարբեր պատրվակներով խնդրի կատարումից խուսափող անձանց նկատմամբ առկա իրավական կարգավորումների ոլորտում կիրառելի մեխանիզմների հնարավոր անկատարությունը:

8. Պահեստագործում հաշվառված ռեսուրսի ուսումնասիրման և կցագրման գործընթացում տեղ գտած թերությունները, համալրվող անձնակազմի որակավորման /տեսակավորման/, ինչպես նաև ներդաշնակման (նաև հոգեբանական) փուլերում հնարավոր բացթողումները:

9. Մարտական գործողությունների շրջանին տեղանքի պայմաններին և աշխարհագրական դիրքին համալրվող անձնակազմի անձանոթ լինելու, ինչպես նաև տեղանքին ծանոթ սպաների (հրամանատարների) սակավաքանակության հանգամանքները:

Հատկանշական է, որ ընտրված թիրախային խմբի՝ մարտական և հոգեբանական կորուստների շրջանում իրականացրած ուսումնասիրությունների (անհատական գրույցներ, հոգեբանական աշխատանք, օպերատիվ իրավիճակի և իրադրային զարգացումների գնահատում՝ համադրում, խմբային տրամադրությունների տատանումների կանխատեսում) և ստացված ամբողջական տվյալների վերլուծությունների արդյունքներով պարզ է դառնում, որ 2020թ. մեկուկես, ամսյա մարտական գործողությունների ժամանակ զինծառայողների շրջանում բացասական հոգեվիճակների (մարտական սթրեսի) առաջացմանը առավել նպաստել են մեր կողմից առանձնացված *արհեստական գործոնները*:

Մասնագիտական գրականության մեջ «*Մարտական սթրեսը*» ըստ ինտենսիվության առանձնացվում է.

- *ցածր ինտենսիվության*. այս պարագայում զինծառայողների մոտ հիմնականում հաջողվում է հաղթահարել, և մարտական գործողությունների մասնակցի մոտ այն դառնում է սովորական,

- *բարձր ինտենսիվության*, որը զգալիորեն դժվարացնում է ինչպես առանձին զինծառայողների, այնպես էլ ստորաբաժանումների գործունեությունը:^[4]

Զինծառայողների մոտ բացասական հոգեվիճակների հետևանքների ծանրությունն ու դրանց դրսևորումների բովանդակությունը պայմանավորված է նրանց հոգեբանական պատրաստվածության աստիճանով ու մարտական սթրեսի ինտենսիվությամբ:

Մարտական գործողությունների ընթացքում հոգեբանական թույլ պատրաստվածությունն ունեցող մասնակիցների մոտ բացասական հոգեվիճակները դրսևորվում են.

- ագրեսիվությամբ/դյուրաբորբոքությամբ/, (ոչ միայն թշնամու նկատմամբ),
- ակտիվի և/կամ/ թմրանյութերի նկատմամբ հակումներով,
- շրջապատի և կատարվելիքի նկատմամբ անտարբերությամբ՝ ցրվածությամբ,
- անխոհեմությամբ և իմաստ չարտահայտող գործողություններով,
- ախորժակի խանգարումներով, սրտխառնոցով, մարմնի ջերմաստիճանի տատանումներով,
- ճնշվածությամբ և հիշողության կորստով, չհիմնավորված հոգնածությամբ,
- տրամադրության կտրուկ փոփոխությամբ, խոսքի՝ արտահայտչական խանգարումներով,
- մեկուսացմամբ, թերաբժեքության զգացումով (փախուստ իրականությունից՝ պարփակվում է սեփական մտքերի և բորբոքված երևակայությունների մեջ),
- վերջույթների և/կամ/ ողջ մարմնի դողեցումով, հանկարծակի սուր իրավիճակների դեպքում երբեմն շարժողական ֆունկցիայի խանգարմամբ՝

արգելակմամբ (կատատոնիկ համախտանիշ): Կարող է նաև թուլանալ միգրոլիների և ադիների մկանների ֆունկցիայի նկատմամբ վերահսկողությունը:^[6]

2020թ. մարտական գործողությունների ընթացքում արձանագրված դեպքերն ու փաստահավաք տեղեկատվության վերլուծությունները նույնպես հաստատում են բացասական հոգեվիճակների վերը թվարկված դրսևորումների գոյությունը:

Այսպիսով՝ մարտական պայմաններում (մարտական իրադրության հնարավոր ամենատարբեր զարգացումների ժամանակ) խնդրի պատշաճ կատարմանը խոչընդոտող անցանկալի հոգեհուզական վիճակներն արդյունավետ կառավարելու համար անհրաժեշտ է ապահովել զինծառայողների հոգեբանական պատրաստվածության բարձր աստիճան, վարքի և/կամ/ վարքային գործընթացների, կենսընթացների համապատասխան համակարգերի /մոդելների/ ձևավորում ու վարժեցում:

Հղումների ցանկ

1. Հայրենիքի մարտիկ, ՀՀ ԶՈՒ բարոյահոգեբանական կայունության ապահովման ուղեցույց, 2004թ.:
2. Մ.Ի. Դյաչենկո, «Խորհրդային ռազմիկների հոգեբանական պատրաստությունը մարտական գործողություններին՝ ժամանակակից պատերազմի պայմաններում, 1966թ.:
3. Ա. Վ. Աթանեսյան, Ա. Ե. Մկրտչյան, Ա. Ռ. Ավետիսյան, Ա. Ռ. Սահակյան, Վ. Հ. Մարգարյան, Մ. Ա. Մախալկինա, Բանակ և հասարակություն ժամանակակից հիմնախնդիրներ, 2013թ., էջ 213:
4. Ա. Ե. Տառաս, Ժամանակակից զինվորական հոգեբանություն, 2003թ., էջ 168:
5. Վ. Մարգարյան, Մարտական գործունեության հոգեբանություն, 2009թ., էջ 153:
6. Ա. Գ. Կառայանի, Յու. Մ. Կառայանի, Մարտական իրադրությունում զինծառայողների հոգեբանական օգնությունը, 2016թ., էջ 61:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ. Յարամիշյանը:

Нарине АВАНЕСЯН

к.э.н., доцент финансово-учетной кафедры АрГУ

ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА ДЕЯТЕЛЬНОСТИ ФИНАНСОВЫХ ПОСРЕДНИКОВ В РА (ЗА ПЕРИОД 2008-2019ГГ)

Ն. ԱՎԱՆԵՍՅԱՆ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԱՀՈՒՄ
(2008-2019ԹԹ. ԺԱՄԱՆԱԿԱՆԱՏՎԱԾՈՒՄ)**

Ֆինանսական միջնորդները կենտրոնական դեր են խաղում շուկայական տնտեսության մեջ, որի զարգացումը կախված է ոչ միայն բանկային հաստատությունների, այլև ոչ բանկային ֆինանսական միջնորդների արդյունավետ գործունեությունից: Հոդվածում ներկայացված են ԱՀ տարածքում գործող ֆինանսական միջնորդների կառուցվածքը և նրանց գործունեության որոշ ցուցանիշների 2008-2019թթ. դինամիկան: Հիմնավորված է, որ գործող ֆինանսական միջնորդները, հատկապես առևտրային բանկերը, առանցքային դեր են խաղում Արցախի տնտեսության զարգացման գործում: Այլ ֆինանսական ինստիտուտների միջնորդության բաժինը տնտեսությունում մեծ չէ, ինչը պայմանավորված է ֆինանսական շուկայի մնացած խաղացողների թերզարգացածությամբ կամ անբավարար կայունությամբ:

Բանալի բառեր՝ ֆինանսական միջնորդներ, վարկային ներդրումներ, ՀՆԱ-ի դինամիկա, վարկային ներդրումներ-ՀՆԱ հարաբերակցություն, ավանդներ-ՀՆԱ հարաբերակցություն, ապահովագրական շուկայի ներթափանցման ցուցանիշ:

Финансовые посредники играют центральную роль в рыночной экономике, развитие которой зависит от эффективной деятельности не только банковских учреждений, но и небанковских финансовых посредников. В статье представлена структура действующих финансовых посредников на

территории АР и динамика некоторых показателей их деятельности за период 2008-2019гг. Действующие финансовые посредники, особенно коммерческие банки, играют ключевую роль в развитии экономики Арцаха. Доля посредничества в экономике других финансовых институтов невелика, что обусловлено неразвитостью или недостаточной состоятельностью остальных игроков финансового рынка.

Ключевые слова: финансовые посредники, кредитные вложения, динамика ВВП, отношение кредитных вложений к ВВП, отношение суммы вкладов к ВВП, показатель проникновения страхового рынка.

N.A.VANESYAN

**GENERAL CHARACTERISTICS OF FINANCIAL
INTERMEDIARIES' ACTIVITIES IN THE REPUBLIC OF
ARTSAKH (FOR THE PERIOD 2008-2019)**

Financial intermediaries play a central role in the market economy, the development of which depends on the effective operation of not only banking institutions, but also non-bank financial intermediaries. The article presents the structure of operating financial intermediaries in the territory of the Republic of Artsakh and the dynamics of some indicators of their activities for the period 2008-2019. It is identified that the existing financial intermediaries, especially commercial banks, play a key role in the development of the economy of Artsakh. The share of intermediation of other financial institutions is small in the economy, which is because of the underdevelopment or insufficient stability of other financial market players.

Key words: financial intermediaries, credit investments, GDP dynamics, the ratio of credit investments to GDP, the ratio of the amount of deposits to GDP, the indicator of insurance market penetration.

В современных условиях существует множество разнообразных финансово-кредитных институтов, осуществляющих финансовое посредничество, причем в каждой стране его организация имеет свои национальные особенности. Финансовые посредники играют центральную роль в рыночной экономике, где за эффективное распределение ресурсов отвечает рыночный механизм. Развитие экономики зависит от

эффективной деятельности не только банковских учреждений, но и небанковских финансовых посредников.

Финансовый посредник (англ. Financial intermediary) — организация, определённый финансовый институт, основной функцией которого является аккумуляция свободных денежных средств разных экономических субъектов и предоставление их от своего имени на определённых условиях другим субъектам, нуждающимся в этих средствах¹.

В процессе развития экономика Арцаха (НКР) преодолела разрушительные последствия освободительной войны практически во всех сферах социально-экономической жизни. За последние 11 лет были восстановлены, как традиционные для самопровозглашенной республики отрасли – сельскохозяйственный сектор, так и новые – энергетика, горнодобывающая отрасль, туризм и т. д. Вот уже несколько лет наблюдаются быстрые темпы роста экономики НКР, свидетельством тому статистические показатели экономического роста (рис.2). Темп роста ВВП в 2019г. по сравнению с 2008г. увеличился и составил 393 %, по сравнению с 2018 годом – 110 %.

В становлении и развитии экономики республики важную роль сыграли финансовые посредники. Предоставленная на рисунке 1 структура финансовых посредников, которая состоит из банковских и небанковских организаций являются составной частью финансовой системы Армении, подчиняются и контролируются соответствующими законами регулирующие данную деятельность в Армении. Крупнейшим участником финансовой системы РА является банковская система, удельный вес которой составляет 83,5%² активов финансовой системы. Удельный вес прочих участников финансовой системы Армении (кредитные организации, страховые компании, инвестиционные компании и др.) невелик, и влияние их деятельности на стабильность финансовой системы остается несущественной. В первую очередь, это обусловлено неразвитостью или недостаточной состоятельностью остальных игроков финансового рынка по сравнению с банковской системой, которая доказала свою надежность и устойчивость к финансовым шокам.

¹Финансовое посредничество и финансовые посредники // Финансы / Под ред. В.В. Ковалева. — 2-е изд. — М.: Проспект, 2004.

²Центральный банк Армении, Годовой отчет, 2019год



Рис.1 Структура действующих финансовых посредников на территории Арцах

Для анализа деятельности действующих финансовых посредников на территории НКР ниже представим динамику изменений показателей деятельности финансовых посредников (рис.2,3)¹.




Рис. 2 Динамика ВВП, суммы вкладов, кредитных вложений банковского и небанковского сектора НКР /2008-2019гг/

¹ <http://stat-nkr.am/>

Действующие на территории Арцаха банки являются частью единой банковской системы Армении, так, из 17 коммерческих банков Армении с 555 зарегистрированными филиалами (на 31.12.2019г.)¹, 8 коммерческих банков имеют филиалы в Арцахе, в общем количестве 31 филиалов. Здесь действует только один головной банк – ЗАО "Арцахбанк", который выполняет некоторые функции центрального банка для НКР, в частности, обслуживает бюджет, правительство и другие государственные органы НКР. Действующие на территории НКР коммерческие банки сыграли большую роль в становлении и развитии экономики республики, они участвуют в государственных программах развития экономики и сельского хозяйства. Следует признать, что за 10 лет наблюдается заметное расширение кредитования банками экономики НКР (рис.3). За исследуемый период отношение кредитов к ВВП (рис.2) увеличились почти в 2 раза, и к началу 2020 года показатель был равен 56,3% (в развитых странах этот показатель значительно выше – в пределах 150-300 %). Такое различие в цифрах свидетельствует о недостаточном использовании кредитного потенциала действующих банков на территории НКР в финансировании роста производства, что является фактором развития любой национальной экономики.




Рис.3 Отношение суммы вкладов, активов банковского и небанковского сектора сектора Арцаха к ВВП, %, млн. др /2008-2019гг/

Особую роль в социально-экономическом развитии республики, также играют местный "Арцахский инвестиционный фонд" и "Фонд поддержки сельского хозяйства и села". Инвестиционный фонд (был создан решением правительства НКР в 2007г.) содействует программам по поддержке малого и среднего предпринимательства, цель которого

¹<https://www.cba.am>

способствовать социально-экономическому развитию республики в целом. Фонд также занимается программами финансовой поддержки по приобретению и ремонту квартир по ипотечному кредитованию, способствуют развитию строительства и улучшению квартирных условий населения НКР¹.

Развитие сельского хозяйства в Арцахе считается ключевым вопросом. Для развития последнего необходима государственная поддержка, поскольку сельчанин не может обрабатывать свою землю в одиночку, не имея необходимого уровня опыта выращивания сельскохозяйственных культур. Одним из важных достижений государственной политики в этом отношении является создание Фонда поддержки сельского хозяйства и села Нагорно-Карабахской Республики, который был также учрежден Правительством НКР².

В число небанковских организаций входят филиалы армянских универсальных кредитных организаций в общем количестве 5 филиалов, а также два ломбарда и 32 страховых агента шести армянских страховых компаний.

Деятельность страховых агентов в Арцахе характеризуется за последние 9 лет постепенным приростом оплаченных комиссионных выплат страховым агентам: они увеличились в 4 раза с 2010 по 2019гг. (рис4), при этом соотношение этих выплат к ВВП выросло весьма незначительно (рис.5). Доля страхования в ВВП, показывает динамику глубины проникновения страхового рынка в экономику. Показатель проникновения страхового рынка (в процентах) определяется как часть объема страхового рынка относительно общего ВВП и определяет содержание доли страховых услуг в экономике страны. Наши расчеты показывают, что доля страхования в ВВП страны (показатель

¹<http://www.aif.am>

²<http://agrofund.am>




Рис.4 Деятельность страховых агентов на территории Арцаха /2010-2019гг/

проникновения) остается незначительной в Арцахе - 0,1%, впрочем, тот же показатель в странах СНГ также невелик, к примеру, за 2019 г. в России составил 1,35 % в Белоруссии - 12 %, в Украине - 1.52%, в Армении - 2,7 %. Основной вывод заключается в том, что в Арцахе и в постсоветских странах влияние страхования на экономику незначительное. Для сравнения, уровень страхования по отношению к ВВП в развитых странах намного выше, например, за 2019г. в США он составил 11,43%, в Южной Корее - 10,78%, в Дании - 10,68%.




Рис.5 Динамика показателя проникновения страхового рынка РА (в %) /2010-2019гг/

Таким образом, действующие финансовые посредники, особенно коммерческие банки, играют ключевую роль в развитии экономики Арцаха. Доля посредничества в экономике других финансовых институтов невелика, что обусловлено неразвитостью или недостаточной состоятельностью остальных игроков финансового рынка. Однако, несмотря на сложные геополитические условия, деятельность действующих финансовых посредников имеют положительную динамику, о чем свидетельствует анализ некоторых показателей финансового сектора.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ.Ն. Մանասերյանը:

ՀՏԴ 336.714

Տնտեսագիտություն

Արեվիկ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱրՊՀ, Ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս

Նանե ՎԻՐԱԲՅԱՆ

ԱրՊՀ, «Ֆինանսներ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հոդվածում ներկայացվել են ֆինանսական միջնորդության համակարգի սահմանումը, Հայաստանի և Արցախի ֆինանսական համակարգերի ակտիվների կառուցվածքը, ֆինանսական միջնորդության աստիճանը բնութագրող հիմնական ցուցանիշների դինամիկան, ինչպես նաև ԱՀ-ում ՀՆԱ-ի և վարկերի ու ավանդների ծավալների փոփոխությունների միջև կապի բացահայտման համար կատարվել է ռեգրեսիոն վերլուծություն:

Բանալի բառեր՝ ֆինանսական միջնորդության համակարգ, վարկեր, ավանդներ, ակտիվներ, բանկեր, ոչ բանկային վարկային կազմակերպություններ, ռեգրեսիոն վերլուծություն, կկոռելացիայի գործակից, դետերմինացիայի գործակից, արդյունքային փոփոխական, բացատրող փոփոխական:

А.АЛЕКСАНЫАН, Н.ВИРАБЯН ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ СИСТЕМЫ ФИНАНСОВОГО ПОСРЕДНИЧЕСТВА РЕСПУБЛИКИ АРЦАХ В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ

В статье представлено определение системы финансового посредничества, структура активов финансовых систем Армении и Арцаха, динамика основных показателей, характеризующих степень финансового посредничества, а также проведен регрессионный анализ для выявления взаимосвязи между ВВП, кредитами и депозитами.

Ключевые слова: система финансового посредничества, займы, депозиты, активы, банки, небанковские кредитные организации, регрессионный анализ, коэффициент

A.ALEKSANYAN, N.VIRABYAN
DEVELOPMENT TRENDS OF THE FINANCIAL
INTERMEDIATION SYSTEM IN THE REPUBLIC OF ARTSAKH
IN MODERN CONDITIONS

The article presents the definition of the financial intermediation system, the structure of assets of the financial systems of Armenia and Artsakh, the dynamics of the main indicators characterizing the degree of financial intermediation, as well as a regression analysis was performed to reveal the relationship between GDP, loans and deposits.


Key words: financial intermediation system, loans, deposits, assets, banks, non-bank credit organizations, regression analysis, correlation coefficient, determination factor, output variable, explanatory variable.

Key words: mortgage lending, real estate market, housing access, average nominal wage, government support, financial support, investment fund.


Ֆինանսական միջնորդության համակարգը ֆինանսական շուկաների և ինստիտուտների համախումբ է, որոնք տարաբնույթ ծառայություններ են մատուցում պետությանը, քաղաքացիներին և կազմակերպություններին:¹ Ֆինանսական միջնորդության համակարգը գնահատվում է հետևյալ ցուցանիշների հաշվարկման միջոցով՝ ֆինանսական համակարգի ակտիվներ/ՀՆԱ, ավանդներ/ՀՆԱ և վարկեր/ՀՆԱ:

Ներկայումս ՀՀ ֆինանսական միջնորդության համակարգի ակտիվների գերակշիռ մասը պատկանում է առևտրային բանկերին, սակայն վարկային կազմակերպությունների ակտիվները ևս աճման դինամիկա են դրսևորում: (Գծապատկեր 1)

¹ В. Хорн, Дж. Вахович мл., Основы финансового менеджмента, М.Вильямс, 2006,



31.12.2019թ.




31.12.18թ.

Գծապատկեր 1: Ֆինանսական կամակարգի ակտիվների կառուցվածքը ՀՀ-ում 2018 և 2019թթ. (%)¹

Ինչպես տեսնում ենք գծապատկերից, ՀՀ ֆինանսական համակարգի ակտիվների (83,5%) գերակշիռ մասը շարունակում է պատկանել առևտրային բանկերին, սակայն վերջին տարիների վարկային կազմակերպությունների ակտիվները ևս աճման միտում են դրսևորում: Պատճառն այն է, որ վարկային կազմակերպությունները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն, իրավունք չունեն ներգրավել ավանդներ, բացել և սպասարկել հաճախորդների հաշիվներ, ուստի վարկային կազմակերպության գործունեության հետ կապված ռիսկերը զգալիորեն նվազ են առևտրային բանկերի գործունեության հետ կապված ռիսկերից: Այդ իսկ պատճառով ՀՀ կենտրոնական բանկը վարկային կազմակերպությունների համար սահմանել է ավելի հիմնական տնտեսական նորմատիվներ՝ խթանելով վարկային կազմակերպությունների թվի աճին: ԱՀ-ում ֆինանսական միջնորդության համակարգի գերիշխող մասնակիցը բանկային համակարգն է, որին հաջորդում են ոչ բանկային վարկավորող

¹ Գծապատկերը կոռուցվել է հեղինակի կողմից, հիմքը՝ ՀՀ Կենտրոնական բանկ, 2018, 2019թթ. տարեկան ֆինանսական հաշվետվություններ

կազմակերպությունները, որոնց կողմից տրամադրված վարկերը արտացոլված են թիվ 2 գծապատկերում:



31.12.2018թ.


31.12.2019թ.

Գծապատկեր 2: ԱՀ-ում առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերը 2018-2019թթ. համար(մլն դրամ)¹

Ինչպես նկատում ենք, 2019թ. –ին 2018թ. համեմատությամբ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի ծավալներն աճել են 25.4 մլրդ դրամով, կամ 15,2 տոկոսով, իսկ ոչ բանկ վարկային կազմակերպություններինը նվազել են 17,8 մլրդ դրամով կամ 49.9 տոկոսով: Առևտրային բանկերի և ոչ բանկ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում 2019 թ. համապատասխանաբար կազմել են 82.4% և 17.6%:


ԱՀ ֆինանսական միջնորդության համակարգը բնութագրող ցուցանիշները ներկայացված են գծապատկեր 3-ում:

¹ Գծապատկերը կոռուցվել է հեղինակի կողմից, հիմքը՝ ՀՀ Կենտրոնական բանկ, 2018, 2019թթ. տարեկան ֆինանսական հաշվետվություններ



Գծապատկեր 3. ԱՀ բանկային համակարգի ֆինանսական միջնորդության մակարդակը 2010-2019 թթ. (%)¹

Ինչպես ցույց է տալիս 3-րդ գծապատկերը, ֆինանսական միջնորդությունը բնութագրող ցուցանիշներից վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը ԱՀ-ում աճել է, իսկ ավանդներ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ հիմնականում նվազել: Վերոնշյալ ցուցանիշները ՀՀ-ում արտացոլված են 4-րդ գծապատկերում²:




Գծապատկեր 4. ՀՀ բանկային համակարգի ֆինանսական միջնորդության մակարդակը 2010-2019 թթ. (%)

ՀՀ-ում ֆինանսական միջնորդությունը բնութագրող բոլոր ցուցանիշները հիմնականում ունեն աճի միտում, ինչը ցույց է տալիս, որ բանկային համակարգը զգալի նշանակություն ունի ՀՆԱ-ի ձևավորման վրա:

Դիտարկենք նաև Ավանդներ/Վարկեր հարաբերակցությունը՝ հասկանալու համար, թե վարկերը ինչքանով են ֆինանսավորվել ավանդների հաշվին: (Գծապատկեր 5)

¹ Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից, հիմքը՝ ԱՀ՝ 2010-2019 թթ. «Ֆինանսների միանկարգություն» հաշվետվությունները,

² Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից, հիմքը՝ ՀՀ Կենտրոնական բանկի 2010-2019 թթ տարեկան հաշվետվություններ



Գծապատկեր 5 Արցախի Հանրապետությունում Ավանդներ/Վարկեր հարաբերակցությունը 2010-2019 թթ.¹

2019 թ.-ին ՀՀ-ում *Ավանդներ/Վարկեր* հարաբերակցությունը կազմել է 94.4%². դա նշանակում է, որ բանկերի կողմից տրամադրված վարկերը հիմնականում ֆինանսավորվում են ներգրավված ավանդների հաշվին: Այսպիսով, ԱՀ բանկային համակարգը, լինելով ՀՀ բանկային համակարգի տարր, զարգացման միտում ունի, սակայն գերխնդիրներից մեկը բնակչության անվտանգությունն է բանկերի նկատմամբ, ինչը իր արտացոլումն է ստացել վարկեր/ավանդներ հարաբերակցության մեջ:

Հաշվի առնելով վերոնշյալ ցուցանիշների կարևորությունը, ինչպես նաև ԱՀ-ում տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների ցուցանիշները 2010-2019թթ., փորձել ենք ռեգրեսիոն վերլուծությունների միջոցով գնահատել Համախառն ներքին արդյունքի (այսուհետ ՀՆԱ) վրա դրանց ազդեցության չափը:

Ռեգրեսիոն վերլուծության գլխավոր խնդիրը փոփոխականների փոխկապվածությունը բնութագրող ձևաչափի կառուցումն է: Դրա կիրառմամբ հնարավոր է առնում անկախ փոփոխականների արժեքներով ստանալ կախյալ փոփոխականների արժեքների գնահատականը: Մոդելի կառուցմանը մասնակցում են երկու փոփոխականներ՝

1. արդյունքային (կախյալ, էնդոգեն) փոփոխականը (Y) – բնութագրում է տնտեսական համակարգի գործարկման արդյունքը կամ արդյունավետությունը: Դրա արժեքները ձևավորվում են այլ փոփոխականների և գործոնների ազդեցությամբ, որոնց մի մասը ենթարկվում է գրանցման, կառավարման և պլանավորման: Արդյունքային փոփոխականը, իր բնույթով, միշտ պատահական (ստոխաստիկ) է;

2. բացատրող (անկախ, արտադին) փոփոխականներ (X) – դրանք գրանցման ենթարկվող փոփոխականներն են, որոնք նկարագրում են իրական

¹ Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից, հիմքը՝ ԱՀ 2010-2019 թթ. Վիճակագրական տարեգրքեր

² Ցուցանիշը հաշվարկվել է հեղինակի կողմից, հիմքը՝ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, Դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն, <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

տնտեսական համակարգի գործարկման պայմանները: Դրանք անվանվում են նաև գործոնային հայտանիքներ:¹

Ռեգրեսիոն վերլուծության ելակետային տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. ՀՀ-ում ՀՆԱ-ի վրա տնտեսությանը տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների ազդեցության գնահատման ելակետային տվյալները 2010-2019թթ.²

Տարիներ ը	ՀՆԱ/մլն դրամ/ Y	Վարկեր /մլն դրամ/ x_1	Ավանդներ/մլն դրամ/ x_2
2010	3460202	9272350	7 881 592
2011	3777945	12556304	10628800
2012	4266460	18225746	13134660
2013	4555638	21117536	16733760
2014	4828626	24036690	19716118
2015	5043633	26407909	21688760
2016	5067293	27114571	25063110
2017	5564493	29658208	29770054
2018	6017035	35511623	32578545
2019	6569030	40881971	38077718

Որպես արդյունքային հատկանիշ ընդունել ենք 2010-2019 թթ. համար ՀՆԱ-ն ընթացիկ գներով, իսկ գործոն հատկանիշներ ենք վերցվել առևտրային բանկերի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի գումարը (x_1) (մլն դրամ), և ներգրավված ավանդները (x_2) (մլն դրամ):

Հաշվարիների արդյունքում ստացանք հետևյալ գծային բազմակի ռեգրեսիայի հավասարումը՝

$$Y=41921,0175+1,5663 \cdot x_1 \quad (1)$$

Դա նշանակում է, որ միջին հաշվով վարկերի ծավալի 1 մլն. դրամով ավելացման հետևանքով ՀՆԱ-ի ծավալը կավելանա 1.566 մլն դրամով: Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները վկայում են, որ ՀՆԱ-ի ծավալը կախված է վարկերի ծավալից, քանի որ ռեգրեսիայի գործակիցը վիճակագրորեն նշանակալից է (եհաշվ. > էադ. $\alpha=0,05$, $v=n-k-1$): Միևնույն ժամանակ ՀՆԱ-ի ծավալի կախվածությունը ավանդներից շատ թույլ է և համապատասխանաբար, ռեգրեսիայի գործակիցները վիճակագրորեն ոչ

¹ Ա. Զթոյան, Ս. Խաչիկյան, Մ. Մովսիսյան, Կ. Հակոբյան, Տնտեսագիտական խնդիրների վիճակագրական վերլուծությունը SPSS փայտի գործադրմամբ: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղ, Եղեգնաձոր, 2015, 71 էջ:

² Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից, հիմքը՝ ԱՀ Ֆինանսների վիճակագրություն 2010-2019թթ, ԱՀ Ազգային վիճակագրական ծառայություն

նշանակալից են (thաշվ.<տաղ. $\alpha=0,05$, $v=n-k-1$), այդ պատճառով այդ գործոնը հեռացվել է մոդելից:

Կոռելյացիայի գծային գործակիցը նույնպես խոսում է ՀՆԱ-ի և վարկերի ծավալների միջև եղած ուժեղ կապի մասին ($r=0,994$ ՝ կապը ուղիղ է և ուժեղ):

Դետերմինացիայի գործակիցը հավասար է 0,989, որը նշանակում է, որ ՀՆԱ-ի փոփոխության 98,9%-ը պայմանավորված է վարկերի ծավալի փոփոխությամբ:

Աղյուսակ 2-ի տեսքով ամփոփենք կատարած հետազոտության հիմնական արդյունքները:

Աղյուսակ 2. ՀՆԱ-ի և վարկերի ու ավանդների միջև կոռելացիոն-ռեգրեսիոն վերլուծության հիմնական արդյունքները

Ցուցանիշը	Արդյունքը
Կոռելյացիայի բազմակի գործակիցը	0.994
Հասկանիչների միջև կապը	Շատ ուժեղ
Դիտարկումների թիվը (f)	10
Դետերմինացիայի գործակիցը (r^2)	0,987
Գծային ռեգրեսիայի հավասարումը	$Y=41921,0175+1,5663 \cdot x_1$

Տվյալ ռեգրեսիոն վերլուծությունից հիմնական հետևությունն այն է, որ ԱՀ-ում ֆինանսական շուկայի գործունեության արդյունավետությունը բնութագրող ցուցանիշներից մեկի՝ տնտեսությանը տրամադրված վարկերի, և ՀՆԱ-ի միջև ուժեղ կապվածություն կա, և ֆինանսական համակարգի զարգացումը, ինչպես նաև ֆինանսական միջնորդության համակարգի արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների աճը կհանգեցնեն ՀՆԱ-ի աճին, հետևաբար նաև ընդհանուր տնտեսության զարգացմանը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.թ. Շ.Շ. Ասրյանը:

ՀՏԴ 331.1

Տնտեսագիտություն

Նունե ՊՈՂՈՍՅԱՆ

ԱրԴՀ ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Արցախի տնտեսության հետպատերազմյան վերականգնման և կորոնովիրուսի տնտեսական հետևանքների հաղթահարման արդյունավետ միջոցների մշակման ու ներդրման անհրաժեշտությամբ պայմանավորված, արդի պայմաններում լրացուցիչ պահանջներ են առաջադրվում արտադրական կազմակերպությունների ֆինանսա-տնտեսական գործունեության արդյունքների հաշվառման և ներկայացման համար, ինչն էլ իր հերթին պահանջում է կառավարչական հաշվառման բարելավման խնդիրների ուսումնասիրություն ու այդ հիման վրա դրանց լուծման անհետաձգելի քայլերի իրականացում:

Այդ համատեքստում ավելի է կարևորվում կառավարչական հաշվառման դերն ու նշանակությունը կազմակերպության ընդհանուր կառավարման համակարգում, հատկապես ԱՀ – ում:

Բանալի բաներ՝ կառավարչական հաշվառում, կազմակերպության կառավարում, կառավարման ընդհանուր հայեցակարգ, ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվական հոսքեր, ներտնտեսական գործընթացներ:

Н. ПОГОСЯН

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ УПРАВЛЕНЧЕСКОГО УЧЕТА В СИСТЕМЕ УПРАВЛЕНИЯ ОРГАНИЗАЦИЕЙ

В связи с необходимостью разработки и реализации эффективных мер по послевоенному восстановлению экономики Арцаха и преодолению экономических последствий коронавируса, в современных условиях предъявляются дополнительные требования к учету и представлению результатов финансово-хозяйственной деятельности производственных организаций, которые в свою очередь требуют изучения задач улучшения

управленческого учета и приведение неотложных шагов по их решению.

В этом контексте дополнительно подчеркивается роль и значение управленческого учета в общей системе управления организацией, особенно в Арцахе,

Ключевые слова: управленческий учет, управление организацией, общая концепция управления, Потоки финансовой и нефинансовой информации, внутренние экономические процессы

N. POGHOSYAN

THE ROLE AND MEANING OF THE MANAGEMENT ACCOUNTING IN THE MANAGEMENT SYSTEM OF ORGANIZATION

Due to the need to develop and implement effective means for the post-war economic recovery of Artsakh Republic and for overcoming the economic consequences, caused by Covid-19, in the current situation, additional requirements are set for calculating and presenting the results of economic activities of manufacturing companies, which in its turn leads to the study of management accounting improvement issues and realization of urgent measures to resolve them.

In this context, the role and significance of management accounting is further emphasized in the general management system of the organization, especially in the Republic of Artsakh.

Key words: Management Accounting, organization management, general concept of management, financial and non-financial information flows, internal economic processes.

Արդի պայմաններում բոլոր կազմակերպություններում, անկախ գործունեության ուղղությունից և կազմակերպա իրավական տեսակից, անհրաժեշտություն է առաջանում գնահատելու յուրաքանչյուր արտադրական օղակի ներդրումն ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման շղթայում ձևավորվող ֆինանսական արդյունքներում՝ բիզնես գործընթացների թիրախային ուղղությունների բացահայտման և արդյունավետ կառավարչական որոշումներ կայացնելու համար:

Հետևաբար, կարևորվում է կառավարչական հաշվառման միջոցով ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվական հոսքերի համակարգումն ու արժևորումը, տնտեսվարման ոչ արդյունավետ օղակների բացահայտումը, ինչպես նաև պատասխանատվության կենտրոնների և կոնկրետ շահառուների միջև հետադարձ կապի ապահովումը:

Անառարկելի է այն հանգամանքը, որ կառավարչական հաշվառումն ընդլայնում է նաև հաշվետվողականությունը և դրա բնույթը, քանի որ որոշումներ կայացնելիս կազմակերպությունների տնտեսական

գործունեության տեղեկատվության թե՛ ներքին և թե՛ արտաքին օգտագործողներին անհրաժեշտ են ոչ միայն ֆինանսական, այլև ոչ ֆինանսական տեղեկատվությունն արտացոլող ցուցանիշներ, նրանց հետաքրքրում է կազմակերպության գործունեության ինչպես ֆինանսական կողմը, այնպես էլ դրա շուրջ ձևավորվող ձեռնարկատիրական համրավը:

Հարկ է նշել, որ հայրենական և օտարերկրյա գիտական և մասնագիտական շրջանակներում անհրաժեշտ խորությամբ ու հիմնավորված կերպով դեռևս չեն հստակեցվել կազմակերպությունների գործունեության ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվության կառավարչական հաշվառման խնդիրները, անհրաժեշտ հետևողականություն չի ցուցաբերվում այդ գործընթացում կիրառվող ցուցանիշների արձանագրմանը, համակարգմանը և հաշվապահական հաշիվներով դրանց հաշվառմանը:

Այդ հիմնախնդիրների լուծումները մեծապես կարող են նպաստել միկրոմակարդակում ինչպես կառավարչական որոշումների ընդունման ողջ գործընթացի կատարելագործմանը, այնպես էլ կառավարչական հաշվառման կազմակերպման մակարդակի բարձրացմանը:

Յուրաքանչյուր կազմակերպության գործունեության վրա ազդող գործոններից են հանդիսանում ներքին և արտաքին միջավայրերի պարամետրերի արագ և մշտական փոփոխությունները: Այս պայմաններում ընդունվող կառավարչական որոշումների արդյունավետության և որպես դրա հետևանք կազմակերպության հետագա գործունեության ապահովման երաշխիք է հանդիսանում ճիշտ, օպերատիվ և ամբողջական տեղեկատվության ապահովումը, որոնք արտացոլում են կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության տարբեր կողմերը, որն իր հերթին պայմանավորում է կազմակերպության այնպիսի համակարգի ձևավորումը, որը դրանք կհավաքագրի, կմշակի և կտրամադրի համապատասխան կառավարիչներին:

Հայրենական և արտասահմանյան ուսումնագիտական ու մասնագիտական շրջանակներում տրվում են կառավարչական հաշվառման տարբեր սահմանումներ՝ այն ներկայացնելով հիմնականում որպես «հաշվառման-տեղեկատվական» ուղղության հաշվառում:¹

Ընդհանրացնելով արտասահմանյան և հայրենական մասնագիտական գրականության մեջ առկա մեկնաբանությունները, «կառավարչական հաշվառում» հասկացությունը պետք է դիտարկել լայն

¹ . *Կառավարչական հաշվառում: Ուսումնական ձեռնարկ տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողների համար / Ա.Ջ Սարգսյան, Մ.Բ. Պողոսյան;*

ՀՊՏՀ: Տնտեսագետ, 2009:

իմաստով՝ որպես կազմակերպության կառավարման համակարգի տարր, որն իր մեջ միավորում է կառավարման տարբեր ենթահամակարգեր և մեթոդներ՝ դրանք ուղղելով միասնական նպատակի հասնելուն:

Հետևաբար, կառավարչական հաշվառումը կարելի է սահմանել որպես տեղեկատվական համակարգ, որի միջոցով կազմակերպության կառավարման օղակներին է ներկայացվում ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվություն՝ կազմակերպության ռազմավարական և մարտավարական նպատակների իրականացման նպատակով կառավարչական որոշումներ կայացնելու համար:

Ի տարբերություն ֆինանսական և հարկային հաշվառումների, որոնք ուղղված են հիմնականում պետական համապատասխան կառույցների և այլ շահագրգիռ արտաքին օգտագործողների համար համապատասխան տեղեկատվության ապահովմանը, կառավարչական հաշվառումը կոչված է կազմակերպությանը ապահովելու վերջինիս յուրահատուկ և արժանահավատ տեղեկատվությամբ, ինչն իր հերթին ենթադրում է կառավարչական հաշվառման մեթոդական մոտեցումների մշակում և ներդրում:

Վերոնշյալ հիմնախնդրի լուծման համար ելակետային պետք է հանդիսանա այն կարևոր պայմանը, որ կառավարչական հաշվառման համակարգի ձևավորումը անխզելիորեն կապված է կազմակերպության կառավարման ընդհանուր հայեցակարգի հետ և հանդիսանում է դրա կարևոր բաղադրատարրը:

Կազմակերպության կառավարման համակարգում կառավարչական հաշվառման դերն ու նշանակությունը որոշվում են վերջինիս կողմից վճռվող խնդիրներով, որոնցից կարելի է առանձնացնել՝

1. Ներտնտեսական գործընթացների և գործունեության արդյունքների մասին արժանահավատ և ամբողջական տեղեկությունների ձևավորումը ու այդ տեղեկությունների ներկայացումը ձեռնարկության ղեկավարությանը ներքին կառավարչական հաշվետվություն կազմելու միջոցով,

2. Կազմակերպության և դրա պատասխանատվության կենտրոնների գործունեության տնտեսական արդյունավետության պլանավորում և վերահսկողություն,

3. Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) փաստացի ինքնարժեքի պլանավորում և սահմանված նորմերից, ստանդարտներից ու նախահաշիվներից շեղումների որոշումը,

4. Պլանային արդյունքներից շեղումների վերլուծություն և դրանց պատճառների հայտնաբերում,


5. Գույքի, նյութական, դրամական և աշխատանքային ռեսուրսների առկայության և շարժի նկատմամբ վերահսկողության իրականացում,

6. Որոշում ընդունելու համար տեղատվական բազայի ձևավորում,

7. Ձեռնարկության գործունեության արդյունավետության բարձրացման ռեզերվների հայտնաբերում : ¹

Վերոհիշյալ փաստարկների արժանահավատությունը կարելի է ներկայացնել կազմակերպության ընդհանուր կառավարման համակարգում կառավարչական հաշվառման տեղը որոշող գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1. Կառավարչական հաշվառումը կազմակերպության կառավարման համակարգում



Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ ՀՀ-ում և ԱՀ-ում որևէ օրենսդրական ակտով կամ նորմատիվ փաստաթղթով չի բնորոշվում կառավարչական հաշվառում հասկացությունը, առավել ևս կազմակերպությանը չի պարտադրվում վարելու նման հաշվառում:

¹ Մովսիսյան Թ. Հ., Մ 917 Հաշվապահական հաշվառում (երկրորդ՝ լրամշակված հրատարակություն)/- Եր., «ԹՄ Առևտրի» ՓԲԸ, 2020, 552 էջ:

Դրա հետ մեկտեղ շատ կարևոր է ընդունել այն ճշմարտությունը, որ կառավարչական հաշվառումը, ունենալով տեսական և գործնական մեծ նշանակություն, պահանջում է խորն ու համակողմանի ուսումնասիրություն ինչպես ուսումնագիտական մակարդակով, այնպես էլ գործնական հարթությունում՝ կոնկրետ կազմակերպության մակարդակով այն կիրառելու համար:

Գրականություն

1. Կառավարչական հաշվառում : Ուսումնական ձեռնարկ տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողների համար / Ա.Չ.Սարգսյան, Մ.Բ. Պողոսյան ; ՀՊՏՀ.: Տնտեսագետ, 2009:
2. Մովսիսյան Թ. Հ. Մ 917 Հաշվապահական հաշվառում (երկրորդ՝ լրամշակված հրատարակություն) / - Եր., «ԹՄ Առուիտ» ՓԲԸ, 2020, 552 էջ:
3. Կառավարչական հաշվառում : Ուսումնական ձեռնարկ բուհերի տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողների համար / Ա.Գ. Ծուղուրյան. Երևան : Տնտեսագետ, 2005 , 403 էջ:
4. Вахрушина, Мария Арамовна, Бухгалтерский управленческий учет : учеб. для студентов вузов, обучающихся по экономическим специальностям / М. А. Вахрушина. — 8(е изд., испр. — М. : Издательство «Омега(Л)», 2010. — 570 с. էջ 16:
5. Хорнгрен Ч. Т., Фостер Дж., Бухгалтерский учет, управленческий аспект : учеб. пособие. М. : Финансы и статистика, 2000. 416 с.
6. Николаева О. Е., Шишкова Т. В., Классический управленческий учет : учебник для вузов. М. : Изд-во «Эдиториал УРСС», 2014. 400 с.
7. Ильина, А. В., Управленческий учет : учеб. пособие / А. В. Ильина, Н. Н. Ильшева. – Екатеринбург: Изд-во Урал. ун-та, 2016. – 180 с. էջ 11-12.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ.Ն. Մանասերյանը:

Արցախի պետական համալսարանի
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕННЫЕ ЗАПИСКИ

Арцахского государственного университета
Artsakh State University's
PROCEEDINGS

2/2020



Հանձնված է տպագրության՝ 14.04.2021 թ.:
Ստորագրված է տպագրության՝ 20.05.2021 թ.:
Ծավալը՝ 8,5 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 100:

Հիմնադիր՝ Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, Մ.
Գոշի փ. 5
հեռ. (0749) 4-04-91, ֆաքս (0479) 7-12-14
E-mail: rector@asu.am
ԱրՊՀ հրատարակչություն, e-mail: printery.asu@mail.ru,
կայք: www.asu.am – Գիտական հրապարակումներ – Գիտական
տեղեկագիր

Учредитель – Арцахский государственный университет
г.Степанакерт, ул. Мхитара Гюша 5,
тел. (0749) 4-04-91, факс (0479) 7-12-14
Издательство АргУ, e-mail: printery.asu@mail.ru,
сайт: www.asu.am – Научные публикации – Ученые записки.

Founder - Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert Tel.:
(0749) 4-04-91, Fax: (0479) 7-12-14
ASU Publishing house, e-mail: printery.asu@mail.ru, website:
www.asu.am – Scientific publications – Proceedings.

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

ԷԴԻՏ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



EDIT PRINT
12 Tumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am